
4051

491.99-8
U-66

Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձի կոմիտից թույլատրված է որպես դասագիրք պետական դպրոցների համար

ՄԵՐ ԴՊՐՈՑԸ



Գ. ՏԱՐԻ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

Երկրորդ տպագրութիւն

Աշխատել ինք համաձայնեցնել ՆԵՐՔԻՆՑԱՆ ԴՊՐՈՑԻ ՄԱՆԿԱՎԱՐԺ. ԽՈՐՀՐԴԻ *հրատարակ 19¹⁵/₁₆ թ. գումարած*

թ թիվով ծխ. պարտեզում ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԱՒԱՆԴԱԿԱՆՆԵՐԻ *ժողովներում ընդունած*

ԴԱՍԱԳՐՔԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻՆ

Կազմողներ

tվ/321.

33

Հ ԱՐՄ.
4-302ա

49199-8
Ս-66

ՄԵՐ ԴՊՐՈՑԸ

Գ. ՏԱՐԻ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

ՈՒՆԵՑ

ՈՒՂՂԱԴՐԱԿԱՆ ՋԵՌԱԳԻՐ ՕՐԻՆԱԿՆԵՐ, ՇԱՐԱԴՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐ,
ՓԱԽԱԴՐՈՒԹԵԱՆ ՆԻՒԹԵՐ ԵՒ ԲԱՌԱՐԱՆ

3566

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Կազմեցին

ՄԻ ԽՈՒՄԲ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ

№ 2002

Թիֆլիս
Տպարան «ՄԱՄՈՒԼ»
1916 թ.

Գրքի նիւթերի արտատպութեան եւ պատկերների ընդօրինակութեան իրաւունքը
ՎԵՐԱՊԱՀՈՒԱԾ Է

ԿԱՅՔ-ական
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ
ՀՀՇՀ-ական.ՍՍՀ
29463-63

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԱՆԿՈՒԹԻՒՆ

1. Մեր դպրոցը



Մեր դպրոցը մի սուրբ տաճար,
մեր դպրոցը վառ կանթեղ,
հալածում է մութն ու խաւար,
լոյս է սփռում ամեն տեղ։
Մեր դպրոցը գութ ու գորով,
մայր է ամեն գիտութեան,
մեր դպրոցը ոյժ ու կորով,
միշտամի է չարութեան։
Մեր դպրոցը կրթում է մեզ,
ազնւացնում մեր հոգին
ու հարազատ ծնողի պէս
գուրգուրում է ամենքին։
Եկէք, եկէք մեր դպրոցը,
ուսում առէք, մարդ դառէք,
անհանգչելի լոյս է ծոցը,
մութ աշխարհին լոյս տարէք։

---

1. Դպրոցն ինչո՞ւ է նմանեցրած տաճարի, կանթեղի, լոյսի եւ այլն...
2. Նա ի՞նչ լոյս է սփռում եւ ի՞նչ խաւար է հալածում։

Սփռել—փռել, տարածել։
գութ ու գորով—սէր, հոգատարութիւն։
ոյժ ու կորով—ոյժ ու զօրութիւն։
կրթել—կոկել, վարքը շտկել։
ազնւացնել—յատկութիւնը լաւացնել։
անհանգչելի—չդադարող, մշտական։

2. Դպրոցը

Սուրիկը չաք տղայ էր։ Ծնողների յանդիմանութիւնը չէր ազդում նրա վրա։ Մի առաւօտ հայրը կռնից բռնեց ու փայփայելով նրան մի կերպ հասցրեց դպրոց։

— Վարժապետ Ջան,—դիմեց հայրը ուսուցչին,— խնդրում եմ երեխա ընդունես, որ ոգէտ, անկիրթ չը մեծանայ։

— Շատ բարի, թող գա նստի,—պատասխանեց ուսուցիչը։

— Ջեմ ուզում, չէ,—սկսեց լաց լինել Սուրիկը։

— Ինչո՞ւ, փոքրիկս,—քաղցրութեամբ հարցրեց ուսուցիչը։—Մ՛յ, նայիր, որքան քեզ նման երեխաներ կան. բոլորն էլ ուրախ, բոլորն է վազրթ, խաղում, թռչկոտում են բակում, դու էլ նրանց հետ կը սովորես։

— Ջեմ ուզում, չէ,—յամառեց Սուրիկն ու փախաւ։



Մի երկու ժամից յետոյ աշակերտները զոյգ-զոյգ վերադառնում էին դպրոցից և ուրախ, զուրթ խօսում իրենց դասերից։

— Հը՞, ի՞նչպէս էր, կերա՞ք... Վարժապետը ականջներդ կարե՞ց,—դիմեց Սուրիկը։

— Մեր ականջը ինչո՞ւ պիտի կարէր,—ծիծաղեց մի աշակերտ։

— Էսօր էնպէս լաւ եմ գրել որ...— ծոր տւեց երկրորդը։

— Բա իսկի չը ծեծե՞ց,—զարմացած հարցրեց Սուրիկը։

— Վա՛յ, ինչե՞ր է ասում,—բացականչեցին աշակերտները,—էնպէս լաւ վարժապետ է, ձեռներիցս բռնում, երգ ու պար է սովորեցնում։

Ահա և Սուրիկի խաղընկեր Արամը... Սուրիկը հարցրեց նրան.

— Արամ, ասում են դպրոցը լաւ բան է. հա՞...

— Այո, Սուրիկ, էնպէս լաւ է որ... Ինչո՞ւ դու էլ չես գալիս։

Միւս առաւօտը Սուրիկը Արամի հետ գնաց դպրոց և ընդունուեց։

Երբ դասերը վերջացան, Սուրիկը ուրախ վազեց տուն։

— Հայրիկ, վարժապետն ասաւ մի գիրք առ, երկու հատ էլ տետր... Արամի հետ դպրոց գնացի, էլ չեմ վախչի, հայրիկ, դպրոցն էնպէս լաւ է որ...

Սուրիկն ինչո՞ւ չէր գնում դպրոց, ծեծոյ ինչո՞ւ գնաց։

Ծզէտ—բան չիմացող։
յանդիմանութիւն—խիստ խօսք, խրատ։
ազդել—ներգործել, հասկացնել։
փայփայել—շոյել, գուրգուրել։
յամառել—իր ասածն անել։
ծոր տալ—ձայնը երկարացնել։

3 Մարտի սկիզբը

Դեռ մարտի սկիզբն է, ով է բանի տեղ դնում թէ սպիտակ պատանում կլորւած սարերն ու բլուրները երբեմն իրենց կապտին, գիւղ քամիներով քիչ է ձնում աշխարհքը տակով անեն։

Բայց ով է գիւղ, որ մարտի փոփոխական բնութիւնից մազաչափ անպատ երկիւղ անի։ Մարտին չեն ճանաչում, ինչ է...



Գիւղ մարտին փչող քամիների շնորհքը մեծ է... Փչեցին թէ չէ, էլ հերիք... ամպերը սրատաճաք եղած գլուխները կառնեն ու կը կորչեն...

Կորան թէ չէ՝ աչքդ բարին տեսնի...

Կապոյտ երկնակամարի միջից Սառածու աչք պայծառ արևը կը փայլի ու սառուցի իշն ու թորը կը կարի։

Սարերի ու գաշտերի ձիւները կը հալւեն, ջուր կը կաթեն... Մէկ-մէկու առաջն ընկած, կերթան ձորերը կը լցւեն, գետեր կը դառնան ու չորս ամսւան մեռած երկիրը, մէկ էլ տեսար, յարութիւն կառնի։

Էսպէս է գիւղ մարտը, էս է նրա կամքը։ Էսօր ցուրտ, էգուց տաք։ Էսօր մրրիկ ու մառախուղ, էգուց՝ արև-արեգակ... Լաւ ճանաչեցէք նրան։

Ի՞նչպէս է սկսում գարունը։

Պատան—մեռաշատիկ։
երկնակամար-երկինք, երկնքի կամար։
իշ ու թոզ—հեռք։
յարութիւն առնել—կենդանանալ։
մրրիկ—խիստ քամի, հողմ։
մառախուղ—մէգ, մշուշ։

---

4. Վէր կաց

Ծառն ու ծաղիկը զարթնում են քնից,
զարթիր, աչքդ բաց, անուշիկ բալաս,
Թռչունն էլ ահա թռաւ իր բնից,
դէ, վէր կաց, հերիք անկողնում մնաս։

Անկողին—տեղաշոր։

5. Սրագիլ

Դու արևան ծաղիկ,
դու գարնան ծաղիկ,
սրագիլ ախպեր,
դու արևան ծաղիկ,
դու գարնան ծաղիկ,
սրագիր ախպեր,
թէ ուժին չեկար,
ինձին չես ճոյ,
սրագիլ ախպեր,
թէ ուժին չեկար,
ինձին չես ճոյ,
սրագիր ախպեր։



Սրբերի պէսով,
կապոյտ ծովերով,
կը գաս թևածափ,
ամպերի փէշով,
ծառախիտ մէշով
կը գաս թևաթափ։
Բուք ու բորանը,
քամու բերանը
հեծել ես, կը գաս,
տարւայ նշանդ
առած բերանդ,
եկել ես կը գաս...

Ա ւ ա ն դ ո ւ թ ի ւ ն.—Սրագիլը մարտի ուժին եթէ չը գայ՝ մարտի ինձին չի ճոյ, անպատճառ կը գայ։ Գալիս՝ նշան է բերում բերանին։

Տարագիր—օտարութիւն գնացած։
Թևածափ—թևերն իրար զարկել։
Մէշ—անտառ։
Հեծնել—ձի նստել։

---

6. Ծաղիկն ու չղջերը

Քնած էր ծաղիկն ամբողջ ձմեռը։ Նա երազում տեսնում էր ինչպէս աշխարհը նորից դալար է ու պայծառ։ Գարնանային հովը նրան կանչում էր վերևից.

— Զարթիր, ծաղիկ, զարթիր ու տես աշխարհը նորից ինչ չքնաղ է ու պայծառ։

Եւ ծաղիկը բերկրանքից ծլեց, դողդողալով պատռեց գետնի կուրծքը, բարձրացաւ դէպի արևը։ Արևը տեսաւ ծաղկին ու ժպտաց։ Նրա շողերը խայտում էին ու գուրգուրում ծաղկին։

— Ո՛ւր էիք ձմեռը, շողիկ եղբայրներ,— հարցրեց Ծաղիկը։

— Կեանք էինք առնում Արև-մայրիկի գրկում,— պատասխանեցին շողերը։

— Դու մե՞ր էիր, Ծաղիկ քոյրիկ,— հարցրին շողերը։

— Թաք էի կացել Հող-տատիկի ծոցում,— պատասխանեց Ծաղիկը։
— Ինչ էք բերում դուք, շողիկ եղբայրներ։
— Գարուն, գարուն,— ասացին շողերը հրճւանքով։
— Դու ինչ ես բերում, Ծաղիկ քոյրիկ,— հարցրին շողերը։
— Բուրմունք, բուրմունք,— պատասխանեց Ծաղիկը հեզութեամբ։

Ծաղիկը ո՞րտեղ է թնում ձմեռը, ո՞վ է զարթեցնում նրան։

Դալար—կանաչ։
Բերկրանք—ուրախութիւն։
Ժպտալ—խաղալ։
Փարել—վազել ընկնել, փաթաթուել։

7. Գարնան գալը

Գարուն է, որ կողմը կուզես աչքդ դարձրու,— սար, ձոր, դաշտ, անտառ, շնչաւոր, անշունչ, այսօր այն չեն, ինչ որ երեկ, մէկել օրն էլնն։

Երեկւան երկաթից պինդ ձիւնը թեթի պէս փխրացել է, ուժից ընկել։

Էս ինչ է, ձիւնի տակից կանաչ խոտի ծիլեր են լալուշ-լալուշ դուրս ցցւել։ Էս ինչ դեղին ծաղիկ է, որ կակռնը պատռել է ու բացւել։ Այ՛ն, այ՛ն, իսկական ծաղիկ... Գարնան գալն աւետող ծաղիկ—ձնծաղիկն է դա։

Գարուն է...

Աշխատաւորը գիւղացի, դուքմանդ բան գոյը, հողը փափկել է, վարելը ու ցանելը։

Դաշտի սիրտհար հովիւ, հօտդ դաշտ քշելը, կանաչը ցնծլին է տալիս աչնտեղ։

Ծրաջան այգեպան, ցաքատդ արելը, վազերիդ մատնելը կարելը։ Չեմ իմացել, որ ասել են, «մարտի ինը, մատը կարի, գոյն ձինը»։

Ա՛յ աղջիկներ, դաշտի բանջարեղենը դառան դմակից փափուկ ու թարմ ձեզ է սպասում։ Գնացէք, քաղեցէք երգելով ու խնդալով։ Գոգնոցներդ լցրէք, ցած գրէք մի կանաչ տեղ, մի աղբիւրի գլխի ձեռք ձեռքի, կուռ կռան աւէք ու պար բռնեցէք...

Իրիկնապահին կչկչալով ու ծռմռալով տուն վերադարձէք ու աւետեցէք ձերոնց գարնան գալը։ Գարունը որ կայ՝ հենց ինքն աւետիք է,

բնութեան աչքալուսէք։ Գալիս է նա, որ մխիթարէ, նոր կեանք տայ ամենքին։

Գիւղացու գործն ինչո՞ւ է գարնանը սկսւում եւ ի՞նչ է անում նա գարնանը։

Փխրացնել—փափկացնել։
խլուշ-խլուշ—ցից-ցից։
կոկոն—դեռ չբացուած ծաղիկ։
ժրաջան—ժիր, աշխատասէր։
ցաքատ—վազերը կտրելու կորագլուխ [դանակ։
աւետել—աչքալուս տալ։

8. Գարուն

Արան ու արօտը ծլել, փթթել,
կանաչ թաւիշը դաշտերն է պատել,
ծիլն ու ծաղիկը վաղօրեայն ցօղով
գարուն են բերել արևի շողով։
Աղբիւրն է բղխում, առուն կարկաչում,
հոգին է թաւալւում մախմուր կանաչում,
հազար թիւեւսր, հազար մի տեղում
գարուն են երգում, անուշ զեղգեղում։
Երանի՛ նրան, ում որ այդ ժամին
թըղնում է ցօղը, զով տալիս քամին,
ով մանկութի հէնց այդ երգերի գրկում
գարուն է առնում, գարուն ճաշակում։

Արօտ—խոտաւէտ, մարգագետին։
փթթել—ծաղկել, շատանալ։
թաւիշ—մախմուր։
վաղօրեայն ցօղ—առաւօտեայ շող։
զեղգեղել—անուշ երգել, կկլպացնել։
Ճաշակել—հաճն առնել։

9. Դէպի վեր

Մայիսեան առաւօտ էր։ Արևն իր հաճելի ճառագայթները նոր էր սփռել երկրի վրա։

Պարտիզի կանաչ խորքից դուրս նետուեցին երկու թիթեռնիկ, բամբակի պէս սպիտակ։ Նրանք կարծես վարդի թերթեր լինէին, որ պոկուելով վարդի բաժակից, լոլ էին տալիս օդի մէջ։

Թիթեռնիկները օդում ազատ ելևէջներ անելով, իրար մեղմիկ հրըհրելով, եկան քաշեցին Ռուբիկի դանդուրներին ու նորից փախան։

Ռուբիկը չհմացաւ թիթեռնիկների շոյանքը և շարունակեց իր խաղը ծառի տակ։

Թիթեռնիկները մի քանի անգամ նորից իջան, նորից կպան նրա մազերին, մի վերջին անգամ էլ ընկան նրա գլխին ու կարծես ծափ տալով, թռան, հեռացան Ռուբիկից։ Ռուբիկը վեր ցատկեց, ձեռները մեկնեց որ բռնի, բայց արդէն ուշ էր։

Թիթեռնիկները Ռուբիկի գլխի վերև թռչում էին ու կարծես տանում.
— Դէպի վեր, դէպի վեր, թէ տղայ ես՝ դէպի վեր...

Հաճելի—դուրեկան։
դուրս նետուել—դուրս ընկնել ուժգին։
ելևէջ—վար ու վեր։
զանգուր մազ—խուճուճ մազ։

10. Գուրգէնը

Ընդհատ բաժանման ուշակերտ Գուրգէն Սուրբէնեանը պատմում էր մօրը.

—Մայրիկ, ես դասս կարդում էի, իսկ Ռուբէնն ու Յովհէնը խօսում էին։ Ուսուցչն ասաւ.«Մի խանգարէք, լռեցէք»։ Մայրիկ, երէկ ես վատ պա— տասխանէի, պէտք է ասէիր թէ ծոյլ ես, դասս չես սովորում. ես ինչ անէի, որ խանգարում էին։

—Հապա լաւ էր, որ երէկ դու Հիշխէնին խանգարում էիր. գիտեմ ես, որ վատ բան է խանգարելը,—ասաւ մայրը Գուրգէնին։

ՎԱՐԺՈՒԹԻՒՆ.—(պատասխանը գրել առանց գրքի)։

1. Ո՞վ էր պատմում իր մօրը։ 2. Ի՞նչ էր պատմում Գուրգէն Սուրէնեանը։ 3. Ուսուցչի ասածը կրկնելուց յետոյ, Գուրգենն ի՞նչ ասաւ մօրը։ 4. Ի՞նչ պատասխանեց մայրը։

Ա ռ ա ջ.— Ինչ որ չես ուզում ուրիշները քեզ անեն, դու ուրիշներին մի՛ անի։

11. Փխիկը

Ես նստած էի մեր տան տանդուխքների վրա։ Մօտս պառկած էր մեր փխիկը։

Նա դեռ ձագուկ էր, սիրուն, սպիտակ դնչով։ Կարմրաւուն մազը սև-սև գծերով վագրի նմանութիւն էր տալիս նրան։ Մի քիչ յետոյ զարթնեց նա, բարձրացրեց իր սիրուն գլուխը, բաց արաւ նշաձև կոպերը, ոտքի ելաւ, թաւամազ պոչը օրօրեց, առջևի թաթիկները ձգեց ու մէջքը ուռցրեց։

Որտեղից որտեղ մի չարաճճի ճանճ սկսեց բզզալով պատուել քնատ փխիկի շուրջը։



Փխիկը մոմոաց, կատաղեց և մի քանի ուժեղ ոտիւններ անելով, բարձրացաւ կատուը։ Մէկ էլ յանկարծ ճչաց ու կծկուեց տանիքի եզրին։

Նայեցի ցածից, տեսնեմ մի մեծ կատու զոռոզաբար մօտեցաւ նրան, բարձրացրեց իր թաթը ու մլաւեց։ Կարծես տանիս լինէը.—

— Այստեղից շուտով էջիր, թէ չէ գլուխդ կը չախչախեմ։

Փխիկս երկիւղից յետ քաշուեց ու յանկարծ տանիքի ահագին բարձրութիւնից ներքև պոռնկեց։ Վաղեցի, ինչ տեսնեմ...

Փխիկս անշարժ ձգուել էր գետնին։ Նրա լայնացած բիբերի մէջ սարսափ էր երևում։ Սիրուն դնչիկից արիւն էր հոսում։

Աչքերս արցունքով լցուեցին։ Առայ փխիկս, փաղաքշեցի, դունչը լացի ու խնամում էի, որ շուտով առողջանայ։

Շաբաթներ անցան և փխիկս նոյն աշխոյժ ու կայտառ կատուն էր։ Ես գոհ էի, որ կարողացայ մի կեանք փրկել վաղահաս մահից։

Ինչո՞ւ եմ սիրում ընտանի կենդանիներին։
Ինչո՞ւ եմ վախենում վայրենի գազաններից։
Ա ռ ա ծ.—Ուժեղի մօտ միշտ ակարն է մեղաւոր։

Կոպ—աչքը ծածկող մաշկ։
Թաւամազ—մազոտ, բրդոտ։
ոտիւն—թռիչք, ցատկում։
Չախչախել—փշրել, ջարդել։
բիբ—աչքի պտուղը։
սարսափ—երկիւղ, վախ։
աշխոյժ—շարժուն, ոչ թմրած։
կայտառ—ուրախ, թուռուն։

12. Երբօր հաւար

Ուսուցիչը երեկոյեան նստած էր պարտիզում։ Ներս մտաւ Թմփլիկը։

— Ա՛, փոքրիկ, բարև,—ասաւ ուսուցիչը,—ինչ ես ուզում։

— Ես եկել եմ Արամի համար, Արամը իմ եղբայրն է։

— Դու ան՞ն Արամի եղբայրն ես, որ փչացնում էր դպրոցի սեղանը։ Արա՞մն է քեզ ուղարկել ինձ մօտ,—հարցրեց ուսուցիչը։

— Ո՛չ, նա իմ դալը չը գիտէ... Նա հիմա նստած լալիս է։

— Լաւ՛ր, փոքրիկս, Արամը լաւ արեց, որ փչացրեց դպրոցի սեղանը։

— Ո՛չ, պարո՛ն, բայց ներեցէք այս անգամ։ Թող նա վաղը պատժուած չը ճնայ դպրոցում։ Նա գնալու է հօրեղբօրս տունը։

— Դու շո՛ւտ ես խղճում եղբօրդ։

— Այո՛, պարո՛ն, ես, ես ուզում եմ, որ Արամը վաղը գնայ հօրեղբօրս մօտ, նրա փոխարէն ես կը ճնամ դպրոցում։

— Լաւ,—ասաւ ուսուցիչը,—ներեցի։ Արամը վաղը դասերից յետոյ կարող է գնալ իր հօրեղբօր մօտ, իսկ դու արի դպրոց և նրա պատիժը քաշիր...

Թմփլիկն ուրախացաւ, գլուխ տուաւ ուսուցչին և գնաց։

— Որտե՞ղ էիր, Թմփլիկ,—հարցրին տանը չորս կողմից։

— Ես գնացել էի Արամի ուսուցչի մօտ, խնդրեցի և նա Արամին ներեց։ Ես պէտք է Արամի պատիժը քաշեմ դպրոցում,— պատասխանեց Թմփլիկը։

Տանեցիք բոլորը ծիծաղեցին։

— Ա՛յ կեսցես, Թմփլիկ Ջան, ինչ լաւ եղբայր ես,— ասաւ Արամը և ուրախութիւնից վեր-վեր թռաւ։

Միւս օրը Թմփլիկը շտապ-շտապ մտաւ դպրոցի բակն ու բարձր ձայնով կանչեց.

— Պարո՛ն ուսուցիչ, պարո՛ն ուսուցիչ, ա՛յ, ես եկայ։

— Չէի սպասում, թէ կը գաս, արի՛, արի՛ պատիժդ քաշի։ Տեսէք,



եխանները, սա եկել է իր եղբօր պատիժը կրելու,— ծիծաղեց ուսուցիչը և շոյեց Թմփլիկին։

Ո՞վ է ձեզնից Թմփլիկի նման եղբայրասեր եղել։

Ա ռ ա ծ.— Եղբայր եղբօր օգնելը, ամուր պարիսպ է։



13. Լուսադեմ

Առուշ հովերն են փչում,
ոսկի հասկերն են ծփում,
մանր ուլունք շաղ տալով,
բարակ առուն կարկաչում։

Աղօթարանն ոսկեզօծ
ծագեց հեռուից շողալով,
խոփը մատաղ հողի ծոց,
ակօս շարեց սողալով։

Առուի կանաչ ափերին
գառն ու ուլն են արածում,
ծաղիկները թփերին
անուշ բուրմունք տարածում։

Ա ռ ա ծ.— Լուսը լուսացաւ, բարին շատացաւ,
Նա շատ առացաւ, ով շուտ վերկացաւ։

Առուշ հով—մեղմ քամի, զեփիւռ։
ծփալ—քամուց տարուբերուել։
կարկաչ—ջրի ձայն, խոխոջ։
աղօթարան—արևելք։
ոսկեզօծ—ոսկեջրած։
ակօս—խոփի հետք։

Ա ս ե լ ո ւ կ.—

Ինամի խօշ ես եկել,
գարնակ ու բօշ ես եկել,
երկու կլօճ ես բերել,
էն էլ ճամփին ես կերել։

խօշ գալ—բարով գալ։
բօշ գալ—դառարիկ գալ։
կլօճ—բաղաջ։

14. Ագռաւների Մշակը

Գարնան դէմ գիւղացին վար էր անում, քանդում էր գետինն ու ակօսներ շարում։

Ագռաւներն եկել լցւել էին ցելը, ոստոստում էին ակօսների մէջ, որդեր էին հաւաքում ու անուշ-անուշ կուլ տալիս։

Ցելի վրայով թռչում էին վայրի սագերը։ Նրանք տեսան ագռաւներին ու հարցրին.

— Մի՛ թագաւներ, այդ ի՞նչ էք ուտում այդպէս ախորժակով։

— Մենք,—իրրեւ ձայնով պատասխանեցին ագռաւները,—ուտում ենք չաղլիկ որդեր ու ճիճուներ։ Շէն ու հաստատ մնայ մեր մշակ—գութանը, նա աշխատում է, մենք վայելում ենք։

— Երանի ձեզ, որ այդպիսի մշակ ունէք,—ասացին սագերն ու թռան գնացին։

Գութանը վարում էր հա վարում, իսկ ագռաւները լցւած ակօսների մէջ, իրանց ճաշն էին վայելում։

— Ուտենք, քէֆը մերն է,—ասում էին ագռաւները։

Հանճարը գութան է ստեղծել, իսկ գութանը կերակրում է իր յաւիտեան գնացողներին։

Ցել—գութանով վարած հող։
ոստոստալ—ցատկել, ցատկոտել։
որդ—ճիճու։
խրոխտ—հպարտ։
հանճար—խելք, իմաստութիւն։
ստեղծել—հնարել։

ՓՈՔԱԴՐՈՒԹԻՒՆ.—(պատասխանը գրել առանց գրքի)։

1, Գիւղացին ի՞նչ էր անում գարնան դէմ:
2. Ովքեր էին լցւել ցելը եւ ի՞նչ էին անում:
3. Ի՞նչ հարցրին սագերը:
4. Ի՞նչ պատասխանեցին ագռաւները:
5. Ի՞նչ ասացին սագերը թռչելիս:
6. Ի՞նչ էին ասում ագռաւները հաշելիս:
7. Ի՞նչն է գութան ստեղծել:
8. Գութանն ի՞նչ է անում իր յետեւից գնացողներին։

Ա ս ե լ ո ւ կ.—

Թան, թան,
Թխու թան,
Կեր ու գնա մեր գութան

շատ վարի,
շուտ վարի,
խոր վարի, հաց ճարի։

15. Գութան

Ես գութանն եմ, անգին քար եմ,
հազար արտեր լաւ կը վարեմ,
խոր-խոր ակօս շատ կը շարեմ,—
ես գութանի խէրին մատաղ...

Արտը ասաւ.—Տեղով քար եմ։
Մահկան ասաւ.—Ծուխ կը ճարեմ։
Ծուխը ասաւ.—Ես կը վարեմ,
ես գութանի խէրին մատաղ...

Ցլմեան ասաւ.—Ես ճարւել եմ,
օդաղ-օդակ ձիգ շարւել եմ,
լծկանի հետ ես լարւել եմ,
ես գութանի խէրին մատաղ...

Գոմէշն ասաւ.—Կողքաբան եմ,
լծի տակը լաւ կը բանեմ,
գութանն ամէն ես կը տանեմ,
ես գութանի խէրին մատաղ...

Եզը ասաւ.—Ես սրբիշ եմ,
ուսիս լուծը լաւ կը քաշեմ,
թամբալ գոմէշ շատ կը մաշեմ,
ես գութանի խէրին մատաղ...

Ձիւիչն ասաւ.—Ձևեմ, դղեմ,
հզ ու գոմէշ լծած կուզեմ,
խոփիկ առաջ ես կը վազեմ,
ես գութանի խէրին մատաղ...

Ուրիշ ինչո՞վ են վար անում;

Գութանի մասերը.—

Լծ,—երկար, հաստ փայտ է, մի ծայրը միացած է երկանիւ սայլ հետ. միւս ծայրը ատամի հետ։

Առաստամ,—(ատամ) կարճ փայտ է, որ անկիւնաձև միացած է էշի հետ, ծայրին հագցրած է խոփը։

Մահ,—կոնդակցրած է ատամի վրայ, էշի միւս ծայրի կողմից։

Ծուր,—էշն ու ատամը միացնող փայտը։

Ծիւ,—շինած է խրի կոգիին և շուռ է տալիս հողը։

Խառազան,—երկար փայտ է, մի ծայրը ամրացրած է սանու հետ, միւս ծայրին կապած է առաջնի լուծը։

Ձնջիկ,—(բնաւէն). երկար, հաստ շրջայ է, որի մի ծայրը միացած է սանու հետ, իսկ երկարութեան վրա շարած են գութանի միւս մասերը։

Ձեւիչ,—դանակաձև երկաթ է, որ միացած է էշի հետ խոփիկ առաջ։

16. Հանելուկ

— Էն ինչն է, պապակս դուռը մի ծառ կայ, արմատը վերև, ճիւղերը ներքև,- ասաւ Եղիսէն։

— պապիդ մորուքն է, պապուսխանակ Յովհէր։- լաւ, հիմա ես կասեմ.- էն ինչն է, մանրիկ-մանրիկ եկեղեցի, դանկով կապկի, դուռը բացի, մրգով մէզը՝ համբուրելի։

— եղէն, եղէն, ինչեղէն է, Յովհէն,- խրեղէն է, փայտեղէն է, ոսկեղէն է, հողեղէն է, բուսեղէն է,

— Սիո՛, այո՛, բուսեղէն է։

— Մանկի՛ն է, խնչո՞ւն է, դեղձի՛ն է, սալո՞ր է...

— Ո՛չ, ո՛չ, ո՛չ...

— Դա՛, խմայա՛յ, չմերուկի՛ն է։

— Սիո՛, չմերուկի՛ն է և ոչ թէ պապիդ մորուքն է։

ՎԱՐԺՈՒԹԻՒՆ.—(պատասխանը գրել առանց գրքի)։

1. Ի՞նչ հանելուկ ասաւ Աբխեցը։ 2. Ի՞նչ պատասխանեց Յովհէնն ու ի՞նչ ասաւ։ 3. Աբխեցն ի՞նչ հարցրեց Յովհէնից։ 4. Յովհէնն ի՞նչ պատասխանեց։ 5. Աբխեցն ի՞նչ հարցրեց երկրորդ անգամ։ 6. Ի՞նչ պատասխանեց Յովհէնը վերջապէս։

17. Ընկոյզն ու որդը

Այգում կային զանազան պտղատու ծառեր,—ընկուզենի, տանձենի, խնձորենի, թզենի։ Ընկուզենու կանաչ ճիւղերից կախուել էր փոքրիկ ընկոյզը ու օրօրւում էր։ Մօտեցաւ նրան ծերունի որդն ու ասաւ.

— Սիրուն ընկուզիկ, ինչ բունդ մանեմ, քիչ հանգստանամ, ապրենք միասին։ Դու դու փոքր ես, ես քեզ կօրօրեմ, հէքիաթներ կասեմ ու քեզ կուրախացնեմ։

— Մի՛ թողնի այդ թափառականին քո տունը, ով գիտէ դրա ունն ու բունը, վարքն ու բարքը,—ասացին փոքրիկ ընկուզին նրա եղբայրները։

— Այդ ձեր բանը չէ, ինչ էք խօսում ի զուր տեղը. ես ինձ համար, դուք՝ ձեզ համար,—պատասխանեց ընկուզիկը և հիւր ընդունեց ծերունի որդին։

Ագահ և չարամիտ որդը ծակեց ընկոյզի կեղևը, ներս մտաւ, միջուկը կերաւ, գաւաթկեց, նստեց ու երգեց։

— Մի նոր ընկոյզ ես գտայ,
ծակեցի ու ներս մտայ,
կերայ, կերայ, կշտացայ,
գաւարկ ճիաց վշտացայ։

Այսպէս երգում ու ծափ էր տալիս աւազակ որդը գաւարկ կեղևի մէջ։ Ծափ էր տալիս ու պում.—

— Դուրս գամ ծառը չափչփեմ,
տեսնեմ ո՞ւմ կը խաբխբեմ,
ինձ որդ կասեն, ծերուկ որդ,
լեզուս քաղցր, շողոքորթ։

Փոքրիկ անփորձ ընկոյզը զոհ էր դնացել չար, աւազակ որդին . . . Քամին էր միայն մէջը վզգում, իսկ հարևանները նայում էին նրան ու ափսոսում։

Ի՞նչից խաբուեց փոխրիկ ընկոյզը։

Թափառական—շրջիկ, շրջմոլիկ։
անուն ու բունը—տունն ու տեղը։
վշտանալ—նեղանալ, ցաւ զգալ։
աւազակ—կողոպտիչ։
զոհ—մատաղ։
շողոքորթել—քաղցրախօս, կեղծաւոր։

Ա ռ ա ծ.— Փորձած թանը լաւ է, քան անփորձ մածունը։

18. Անհոգ տղան



ՇԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ.—(պատասխանել հետևեալ հարցերին գրաւոր և բանաւոր)։

1. Անհոգ տղան ո՞ւմ պատահեց փողոցում։ *2.* Ի՞նչ արաւ նա իր երկու ընկերների հետ։ *3.* Անհոգ տղան ի՞նչպէս սկսեց իր խաղը։ *4.* Երբ հասնեց կօշիկներն ու գլխարկը. ո՞ւր շարեց. *5.* Ո՞վ եկաւ տարաւ նրա գլխարկը եւ ի՞նչպէս էր, որ նա չը նկատեց տանը։ *6.* Ի՞նչը տանելիս նկատեցին տանը եւ ի՞նչ արին։ *7.* Ո՞վ տուժեց եւ ինչի՞ց զրկուեց։ *8.* Այս բոլորն ինչի՞ց առաջացան։

Ա ռ ա ծ.—Ով կը խաղայ՝ նա կը վաստակէ

ZUUR-Арм.ССР
им. А. Мясникяна

19. Առուակը

Փոքրիկ բլրի ստորոտից բղխում էր մի բարակ առուակ։ Ի՜նչպէս գեղեցիկ էր նա իր ակունքի մօտ։ Ի՜նչքան դուրեկան էր նրա քչքչոցն ու ի՜նչպէս ուրախ խաղում էր նա իր ափերի հետ։

Առուակից մի քիչ հեռու ձգւած էր մի ընդարձակ լճակ, որ իր ամբողջ օրն անց էր կացնում խաղաղ և անդորը քնով։

Առուակի քչքչոցն և ուրախ խաղը խանդարում էին լճակի քունը։

— Օ՜ֆ, օ՜ֆ, օ՜ֆ,—ասաւ մէկ անգամ լճակն առուակին,—գլուխս տարար քո այդ անվերջ քչքչոցով, լրի՛ր վերջապէս, հանգիստ տուր թէ քեզ, թէ մեզ։ Կանգ առ և թող որ հարևաններդ հանգստանան։

— Ո՛չ, իմ քնկոտ հարևան,—պատասխանեց առուակը,—եթէ ես չերգեմ, իմացիր որ էլ չեմ ապրի. եթէ ես կանգ առնեմ ու քեզ նման քնեմ, էլ ի՞նչ օգուտ կարող եմ բերել ուրիշներին։ Ճիշտ է, դու գոլորշի ես տալիս, բայց նրանք միայն տենդ ու հիւանդութիւն են բերում քո շրջակայքի համար։

— Հաւատա՛ ինձ, իմ ծոյլ հարևան,—շարունակեց առուակը,—ո՛չ թէ մենք պէտք է կանգ առնենք, այլ՝ դուք, ծոյլերդ պէտք է տեղնեբիցդ շարժւէք և գաք մեզ հետ։

Ծառի վրա, հենց առուակի և լճակի մէջ տեղը, նստած էր մի ծիծեռնակ.—

— Կեցցէ՛ առուակը, ճիշտ է ասում,—ծլւլաց ծիծեռնակը,—ես թռել եմ սրա հոսանքով ու տեսել սրա տւած բարիքները։ Սա իր փոքր տեղովը պէտք է գալիս շատ շատերին ու նրանց կարիքներին հասնում։ Սրա մի կում ջուրը չեմ փոխի քեզ հետ, ով դառնաղի լճակ...

1. Ի՞նչ օգուտ է տալիս առուակը։
2. Ձի՞ շ են ծիծեռնակի վկայութիւնը։

Ստորոտ—սարի ստորին մասը։	*քնկոտ*—քնասէր,
ակունք—ջրի սկիզբը, ակը։	*տենդ*—ջերմ ու դող։
ընդարձակ—լայն, արձակ։	*հոսանք*—ջրի ընթացք։
անդորր—խաղաղ։	*բարիք*—բարութիւն։
խանգարել—չփոթել, գործից յետ գցել։	*կարիքին հասնել*—օգնել։

Առակ.

— Դալար թաթիկ, ջուր բեր։
— Ես չը բերեմ՝ դու բեր։
— Փալաս եփեմ դու կեր։
— Է՛, ես չուտեմ, դու կեր։

20. Ծաղկանց ժողը



Ծաղկունքն ամեն մէկ-մէկ բուսան,
հարիւր-հազար գոյն-գոյն ներկած,
լեռ ու հովիտ ծաղիկ դարձան,
ծաղկանց ժողը ծը՛փ, ծըփծըփաց։

Մանուշակը կապոյտ գլխով
թաք է կացել թփերի տակ,
ու Զանգակը մեղմ ճօճելով
թերևս է ներկել կապոյտ, սիպտակ։

Առաւօտուց պսակ գլխին
կարմրել է ցից Մեխակը,
իր բիւրաւոր աչքը դեղին
հոտ է բուրում Բարմեճակը։

Սիպտակ հագած հեզ Շուշանը
փսփսում է զեփիւռի հետ,
թերը վռած Մարգարիտը
օրօրւում է առաջ ու յետ։

Կարմիրը մախմուր, կուրծքը սևիկ,
մեն-մենակ է ալ-կակաչը,
սիպտակ փրփուր, լայնաթևիկ,
Բոժոժ էլ կայ ծաղկանց մէջը։

Զարմանազան, էն Զանազան
ծաղիկը իր վիզն է թեքել,
Շարշարուրիկ շարան, շարան,
ոտից գլուխ դեղին հագել։

Գիւլիսապահ մի ծաղիկ կայ,
որ չի բացւում օր-ցերեկով,
Նա կը բացւի ու հոտ կը տայ,
արևից յետ, մութ գիշերով։

Քեաճուր-վարդի գույնը ճաց,
քնքուշ վարդի, կարմիր վարդի,
փշերով է շրջապատած,
փուշն է սուր-սուր կարմիր վարդի։

Մի Աղբատամ ծաղիկ էլ կայ,
ծաղիկների ծաղիկն է նա,
Նորի նման հինն անթառամ,
ամառ, ձմեռ չի չորանայ։

Սուտաճ, Քրոմա՛ն Բալաճաճ,
ոսկէ բուրվառ սարի լանջին,
ամեն ծաղիկ իր հոտն ունէ,
խունկ ու կնդրուկ դաշտի մէջին։

Ուրիշ ի՞նչ ծաղիկներ գիտէ։

Քիւրաւոր—շատ, հազարաւոր։ *զևկիւտ*—բարակ քամի։
հեզ—խոնարհ, համեստ։ *բևաճուր վարդ*—կարմիր վարդ։

21. Անհոգ ծաղիկը

Ծաղիկնե՛ր, դուք ինչո՞ւ եք այդպես անհոգ,
Ինչո՞ւ եք այդպես ուրախ ու զվարթ...
Ու չգիտե՞ք որ ձեզ էլ կարող է
Մեխակի նման մեկը քաղել...
Բարի բնկերը այդ մեխակը եկել
Միայր օծանելիքի ու գինու սրճել։

Բարի, գեղեցիկ, առաքինի բնկերը մարդու,
բարձրացնում է ազգանքը միշտ վեր, վեր դարդու։

ՎԱՐԺՈՒԹԻՒՆ.— (պատմական գրեք առանց գրքի)։

1. Ո՞ր ծաղիկն ընկալատեսակ մեխակի փուճչը։ 2. Ծաղկաւոր դաշտի անհոգ ծաղիկը ի՞նչ դարձաւ բուրաւէտ մեխակի փնջում։ 3. Բարի ընկերը այդ մեխակի պես ի՞նչ է...

22. Դեպի աստղերը

Ծիսը ծաի հետ գրոյց էր անում։

Կաչաղակը լսեց, թևի ծայրով լուր բերեց։ Կաչաղակի լուրը պառաւ նանը լսեց։ Լսեց ու պատմեց իր թոռներին։

— Լինում է չի լինում մի քոյր, մի եղբայր, քաղցած ու ծարաւ երկու խեղճ որբեր։

Ցուրտ ձմեռ է լինում։ մարդ չի լինում դուրսը, երկնքում վայլելիս են լինում աստղերը, մէկը միւսից պայծառ, մէկը միւսից վայլուն։

Աստղերը վերևից տեսնում են որբերին, խղճում ու կանչում.

— Սիրուն որբեր, քոյր ու ախպէր, մարդիկ մոռացել են ձեզ, եկէք մեզ մօտ, մենք ձեզ կը պահենք, կը պահպանենք։

Քոյր ու ախպէր ճամբա են ընկնում դէպի աստղերը։ Գնում են գնում, պատռտում են մի ապառաժ քարից։

— Սիրուն մանուկներ, — ասում է ապառաժը, — էս ճամբեն էսպէս գիշերով ուր էք գնում։

— Աստղերը մեզ կանչում են, գնում ենք աստղերի մօտ։

— Չէ որ ցուրտ է, դուք մրսում էք, լինէք մօտ, կացէք այս գիշեր, ես ձեզ կը տաքացնեմ, — ասում է ապառաժը։

— Չէ, չենք կարող, մուրճն ու խաւարը է քո կուրծքը, մենք գնում ենք լոյս աստղերի մօտ։

— Բարով գնաք, — պատասխանում է ապառաժը։

Գնում են, գնում քոյրն ու ախպէրը... գնում են, գնում ու ցրտից դողում։ Գնում են ու հասնում մի գետի։ Գետը հարցնում է նրանց.

— Սիրուն մանուկներ, ուր էք գնում էս ցրտին, կացէք ինձ մօտ էս գիշեր, ես ձեզ կը պահեմ։

— Շնորհակալ ենք, ալ գետ, դու բարի ես, բայց սառն է քո ծոցը, մենք լոյս ու ջերմութիւն ենք ուզում, գնում ենք աստղերի մօտ։

— Չէ որ էդպէս է, գնաք բարով։

Գնում են, գնում քոյր ու ախպէրը։ Գնում ու հասնում են ցրտից դողում։ Գնում են հասնում մի անտառ։

Մի հսկայ կռնկի իր կապարը հասցրել էր կռնկին։

— Սիրուն մանուկներ, ես ուր էք գնում էս ժամուկս, — հարցնում է կռնկին։

— Աստղերի մօտ, ճամբէն ցոյց տուս։

— Ես եմ երկնքի ճամբեն, եկէք, քնեցէք իմ փետուրում, առաւօտը, լուսով իմ ճղները ձեզ կը տանեն աստղերի մօտ, — ասաւ կռնկին։

Ջուր ու ախպէր մանում են ծառի փչակը ու քնում:

Լուսաբացին պայտահատը տեսնում է մանուկներին, իմանում է, որ անէծը ու անմէը որբեր են, խղճում է ու տանում իր տունն:

— Բարով էք եկել, սիրուն երեխէք, ասում է նրանց պայտահատի կինը, դուք իմ բալէքն էք, իմ աչքի լուսն էք:

Ջուր ու ախպէր փաթաթւում են ու քնում մուշ-մուշ: Երազում տեսնում են, որ պայծառ աստղերը եկել, պար են բռնել իրենց շուրջը ու երգում են. —

Բարով էք եկել, սիրուն երեխէք,
յոգնել էք ասատիկ, հանգիստ քուն եղէք.
բարով դուք եկաք, եկաք մեզ հասաք,
ձեզ երկինք կանչող աստղերին տեսաք:

Առաւօտեան որբերը զարթնում են, պատմում են իրենց գլխի անցածը, աստղերի նման պար են բռնում ու երգում: Այս պատմութիւնը լսում է մի ծիտ ու թռչում:

---

1. Ի՞նչ էր զրուցում ծիտը ծտի հետ: 2. Երեխաները հասա՞ն աստղերին:

Ապառաժ քար—ժայռ:	*փչակ—ծառի խորշ:*
հսկայ—մեծ, վիթխարի,	*պայտահատ—պայտ կտրող:*
եղևնի—փշատերև ծառ:	*մուշ-մուշ քնել—մեղմ շնչել քնած:*

Առած.— Վատ օրը կը լաւանայ, վատ մարդը չի լաւանայ:

---

23. Վայրի ծաղիկը

Գեղեցիկ, հոտաւէտ,
դու ծաղիկ լեռնային,
ձեմ համար դու բուսար,
ձեմ համար ծաղկեցիր:

Ցրտերում մեծացար,
անխնամ, առանձին,
մի լաւ օր չը տեսար
որբի պէս վշտակիր:

Անցնում է քո կեանքը սգաւոր տխրադէմ,
գեղեցիկ, հոտաւէտ, դու ծաղիկ լեռնային...

Հոտաւէտ—հոտ ունեցող:	*վշտակիր—դարդ ունեցող:*
անխնամ—առանց խնամքի:	*սգաւոր-տխրազին—վշտալի, տխուր:*

24. Անձրեւային ճիճուն

Արագաթռիչ արծիւը ուժգին շարժեց թեւերն ու սլացաւ վեր, մինչև մութ ամպերը:

— Ինչքան լաւ է, որքան բախտաւոր եմ ես,— ասում էր արծիւ ոտին կպած ճիճուն:— Ո՞վ կարող է ինձ չափ բարձր թռչել, ո՞վ կարող է հասնել այստեղ և ո՞վ է տեսել այս բարձունքը, ո՞վ է բարձրից ցած նայել... Որքան ողորմելի են այժմ ինձ համար այն մանր թռչունները, թիթեռներն ու բզեզները, որ հազիւ կարողանում են մի թիզ թռչել, ես արծիւին հաւասար եմ:

Արծիւն սկսեց կամաց-կամաց ցած իջնել: Ճիճուն տեսաւ օդի մէջ շատ թռչուններ, որոնք ծլւլում էին ու այսպէս երգում.

— Որքան լաւ է մեր կեանքը, ինչքան պայծառ է օրը, որքան մենք բարձր ենք թռչում...

— Այ միամիտներ, դուք ի՞նչ էք տեսել, դուք երբէք չէք բարձրացել այնքան բարձր, որքան ես...

Արծիւն աւելի ցած իջաւ:

Օդի մէջ վխտում էին հազարաւոր միջատներ, գոյնզգոյն թիթեռներ, ոսկեթև բզեզներ ու հազար տեսակ ճանճեր... Նրանք բոլորն էլ երջանիկ էին, թռչում էին ու երգում:

— Որքան լաւ է մեր կեանքը, ինչքան պայծառ է օրը, որքան մենք բարձր ենք թռչում:

Արծւի ոտին կպած ճիճուն սկսեց քահ-քահ ծիծաղել...

— Ցիմարներ,— կանչեց նա,— դուք ի՞նչ էք տեսել, ի՞նչ գիտէք, մէկ ինձ տեսնէիք թէ մինչև ո՞ւր էի թռել... և ինչե՞ր տեսայ:

Թռչուններն ու միջատներն ասացին.

— Ճիճու, այ ճիճու... մենք մեր թեւերով ենք թռչում, աշխարհքը տեսնում. դու էլ ես ծիծաղում թեւաւորների վրա, որ ոչ թև ունես, ոչ էլ ձև ունես... ի՞նչ ես պարծենում ուրիշի ոտից կպած:

Ճիճուն իրաւունք ունե՞ր ծաղրելու թեւաւորներին:

Արագաթռիչ—արագ թռչող:	*վխտալ—խառնուել, իրար անցնել:*
ուժգին սլանալ—ուժեղ թափով թռչել:	*երջանիկ—կեանքից գոհ, ուրախ:*
բարձունք—շատ բարձր տեղ:	*քահ-քահ ծիծաղել—բարձրաձայն ծիծաղել:*
ողորմելի—խղճալի:	*պարծենալ—հպարտանալ:*

Առած.—Անշնորհքի լեզուն երկար կը լինի:



25. Զուլին, Զուլին ու Սինօն

— Սինօ Չան, արի մեր գոմէշները տար արածացրու, մեղք են, սոված են,— ասաւ Աստուր ապին իր վեց տարեկան Սինօին։

— Հա, տանեմ,— ասաւ Սինօն,— իսկի չը նկատեցրով թէ ինչ պէտք է անէր։ Վերցրեց մի փոքրիկ ճիպոտ և Զուլի ու Ղուլի գոմէշները առաջ արաւ, քշեց։

— Ցես, Սինօ Չան, արտերը չընկնեն հա,— ձայն տուեց ապին։

Գիւղից որ դուրս եկան, գոմէշները սկսեցին արագ գնալ, այնպէս որ փոքրիկ Սինօն դափ-դէր հասնում նրանց և երբ-դնան մի արտի, մէջը մտան ու սկսեցին արածել։ Սինօն չը գիտէր, որ գոմէշը արա է, ինքն էլ սկսեց լապտալ։ Երէչ գետոյ արտաւէրը նկատեց, վազեց, հասաւ գոմէշներն առաջ արաւ, քշեց տարան գոմերը։ Սինօն էլ չկայ լինելով, ճամփեց նրանց։

Արտաւէրը Սինօին գուրգուրեց, ուզեց հինգ տանկ պետք, բայց երբ տեսաւ, որ փոքրիկը չի բաժանում գոմէշներից, նրանց էլ – գոմի մէջ թողեց, դռնակն ամրացրեց ու գարձաւ, որ տանի Սինօի հօրը։

Ղուլին ու Զուլին հանդիսատես եղան ու սկսեցին ծանր ու բարակ որոճալ։

Սինօն ուզեց դուրս գալ, բայց դուռը բանալ չէր կարողանում, նա ղիմեց Ղուլիին.

— Ղուլի Չան, Ղուլի, արի դուռը բաց արէ։

Ղուլին կարծես հասկանում էր, որ ճամբը դադարեցնում էր, աչքերը պահեցնում դեպի դուռը, բայց չէր շարժւում տեղից։

— Զուլի Չան, Զուլի, արի դու բաց արիր,— ասում էր Սինօն, անցնելով դէպի Զուլին։

Բայց Զուլին իսկի չէր էլ նայում և շարունակում էր որոճալ։

Սինօն նորից դիմեց Ղուլիին։

— Քեզ մատաղ, Ղուլի Չան, դուռը բաց արի, հայրիկիս կասեմ քեզ շատ խոտ կը տայ։

Ղուլին էլ ուշադրութիւն չը դարձրեց այս անգամ։

Խեղճ Սինօն այնքան աղաչեց, խնդրեց Ղուլիին ու Զուլիին, որ քունը տարաւ, մտաւ տակ, գոմէշների առաջին պառկեց ու քնեց։

Մի ժամից յետոյ Սինօի ապին եկաւ, Սինօին քնած չալակեց ու գոմէշներն առաջ արաւ, տարաւ տուն։ Սինօն երբ զարթնեց, ճաց զարմացած, թէ ինչպէս է, որ ինքը գտնւում է տանը։

Շիպոտ— բարակ ձող։
որոճալ— ծամել, ծամծմել։
աչքը պլշեցնել— նայել, աչքը չռել։
մնատ— այն տեղն է, ուր անասունների համար խոտ, գարման են ածում։

Ա ս ե լ ու կ.

Էծը ցօրեն էր աղում,
ուլը՝ ալիւր էր մաղում,
ոչխարները՝ չորս թէ հինգ,
վչխում էին մի սրինգ։
Ագռաւները զարզաշա,
եկել էին թամաշա։
Լապլապն արին պարբաշի
ու ծափ տուին տա՛շ-տաշի,
Էսպէս պարող, այ շարաշ,
մի գորտ բերէք անի ճաշ...

Ղարղաշա— աղմուկ հանող։
Թամաշա— հանդէս, թամաշա անել։
պարբաշի— պարագլուխ։
շարաշ— լծած, եւէր։

26. Գարնան երգ



Էլի ուռին
գարթնեց լուին
ու աղբիւրը զրնգայ,
խենթ աղմուկով,
աղաւակով,
գետն է վազում արնթաց։

Ու սուերը,
գոլ թևերը
պանաչներին է վռում,
ճանճ ու բզեզ
ախտաժան անում զեփիւռում։

Լուին— սուս ու փուս։
խենթ— խելքից պակաս։
արնթաց— ուժեղ վազք։
սուեր— չուաք։

27. Աստրանոյի կապտուկը

Ասանդէրը մի կապտուկ ունէր. ամեն օր վանդակի մէջից խօսում էր ու բան հասկացնում նրան:

— Երեխէք,- ասաւ մի օր Աստրէկեանը,- կապտուկը, որ կապտուկ է, վրացերէն է խօսում. ինչու դուք չը պէտք է խօսէք: Բաւական չէ, որ դպրոցում սովորում էք հայերէն, ռուսերէն, ֆրանսերէն, պէտք է սովորէք և վրացերէն, մեր հարեւանների լեզուն,- մարդ խանի լեզու գիտենայ՝ այնքան էլ մարդ է:

Մինչև ամառանոցից վերադառնալը՝ երեխաները սովորեցին վրացերէն գրել, կարդալ և խօսել:

ՎԱՐԺՈՒԹԻՒՆ.—(պատասխանը գրել առանց գրքի):

1. Ի՞նչ ուներ տանտէրը:
2. Ի՞նչ էր անում կաչաղակն ամեն օր:
3. Ի՞նչ ասաւ մի օր Աթաբէկեանն երեխաներին:
4. Ի՞նչ սովորեցին երեխաները մինչեւ ամառանոցից վերադառնալը:

Առած.— Որդիս լաւ լինի, շապիկս շալ լինի:

28. Փախստականները

Արեւի ոսկեզօծ ճառագայթները հազիւ ընկել էին սարերի գլխին, որ Վանին ու Մանին մտան անտառն ու սկսեցին մորի քաղել: Քոյր ու եղբայր քաղում էին մորին ու հրճւանքով որն ուտում, որն էլ ածում էին քաղելիների մէջ: Աշխատանքը նրանց այնքան էր գրաւել, որ չէին նկատել թէ արեւը թեքւել է:

Անտառն այնքան լուռ էր, այնքան դուրեկան, որ երեխաները չէին ուզում տուն վերադառնալ:

Տանն իրարանցում էր ընկել:

— Երեխաները կորել են, երեխաները չը կան,—լալիս էին տանեցիք դէս ու դէն վազում, սրան ու նրան հարցնում:

Օրն արդէն մթնում էր...

Ծառերի սուերները հետզհետէ երկարում էին ու անտառը խորհրդաւոր էր դառնում: Տերևների սոսափիւնը վախեցնում էին երեխաներին: Նրանք այս անգամ հազիւ մտաբերեցին, որ տուն վերադառնալու ժամանակն է, բայց չը կարողացան տան ճամբէն գտնել, մոլորւած ինացին տեղները կանգնած:

Քոյրը լալիս էր, իսկ եղբայրը սիրտ էր տալիս նրան.

— Մի վախի, Մանիկ ջան, ճամբէն կը գտնենք,—ասում էր Վանին:

— Հա, կը գտնենք, բա որ յանկարծ գայլը գայ... դու ես մեղաւոր:

— Ներիր, Մանիկ ջան, այո, ես եմ մեղաւոր: Բայց մի վախի, այ, այսպէս որ գնանք՝ տուն կը հասնենք:

Ու երեխաները իրար ձեռք բռնած՝ առաջ վազեցին:

Ճամբին՝ էլ ջուր, ցեխ ու ճահիճ, էլ ծառ, մացառ ու թուփ չէին հարցնում, ցատկում, անցնում էին:

Այսպէս թրջւած, ցեխակոլոլ, փէշերը ճղոտւած, փորները սոված, մի կերպ տուն հասան: Նրանց երեսին այլևս գոյն չէր մնացել երկիւղից:

— Ո՞ւր էիք, ա՛յ փախստականներ,— հարցրեց մայրը բարկացած, ո՞ւր էիք կորել մեն-մենակ, առանց իմ թոյլտւութեան:

— Մենք, մենք... կմկմացին երեխաներն ու սկսեցին լաց լինել...

Մայրը տեսաւ, որ երեխաներն արդէն իրենց պատիժը քաշել են, ասաւ մեղմութեամբ.

— Այդ ձեզ խրատ, էլ այդպիսի բան չանէք, թէ չէ աւելի խիստ կը պատժւէք:

Հրճւանք—ուրախութիւն:
քաղելակ—փոքր զամբիւղ:
իրարանցում—շփոթութիւն:
սոսափիւն—տերևների սւսւոց:
թոյլտւութիւն—իրաւունք:
մեղմութեամբ—քաղցրութեամբ:

29. Ելդաշ պապի մօտ

Լուսիկենց հինգ-վեց տարեկան Խաչին էլ էր գնացել ասրը, խոտհնձի ժամանակ։ Բարի հօրեղբայրը, որին Խաչին Մեծ-հայրիկ էր կանչում, գիշեր էր նրա թախանձին, վերցրել էր իր հետ հարցնելով.

— Խաչիկ, բան կանես էնտեղ։

— Հայ — պատասխանեց Խաչին։

— Ի՞նչ կանես։

— Խոտ կը հնձեմ։

— Ի՞նչով կը հնձես։

— Ճիպոտով։

— Ճիպոտով խոտ կը հնձեն, Խաչիկ, գերանդով կը հնձեն, գերանդով,— ասաւ հօրեղբայրը։

— Գերանդով կը հնձեմ,— թոթովեց Խաչինը։

— Լաւ, ապրես, որ էդպէս է, դէ արի տանեմ,— ասաւ հօրեղբայրը, նստեց ջորու վրայ, Խաչիկին էլ առաւ գիրկն ու ճանապարհուեց, ուշք չէր դարձնելով իր եղբօր նեղասրտութեանը վրայ։

Մեզ համար պատասխան եւ բերում դրան։

Նրանք մի ամբողջ շաբաթ մնացին խոտհարքում։

Սարը գալու առաջին օրն էր։ Իրենց խոտհարքից Խաչին տեսաւ դիմացի Ելդաշ սարը։ Նայեց, նայեց վիթխարի սարին ու դառնալով հօրեղբօրը հարցրեց.

— Մեծ հայրիկ, էն ի՞նչ է։

— Ո՞վ, մատաղ։

— Էն, այ էն, էն...

— Հա, էն, ալա, ալա, ալա, էն Ելդաշ պապն է, մատաղ, Ելդաշ պապը։

— Ո՞ւմ պապն է...

— Սարերի պապն է, սարերի պապը։

— Մեր պապն էլ է, մատաղ, մեր Ելդաշ պապը։

— Ելդաշ պապն էնտեղ ինչ է անում, Մեծ-հայրիկ։

— Նստած հանգստանում է, մատաղ, հանգստանում է։

— Ճաշ չի՞ եփում։

— Իհարկէ, շատ բան է արել։ Այ էս խոտերն ու ծաղիկները նա է աճեցրել։ Էն ծառերն էլ է նա տնկել։ Էն սիրուն արտերը։ Համ ցանել է, համ ջրել է... Ջրել է գիշեր, ցերեկ ու էսպէս բուսցրել։

— Այ ինչքան բան է արել Ելդաշ պապը, բան է արել, յոզնել, բեզարել, հիմա էլ նստել է ու հանգստանում։

— Գնում եմ Ելդաշ պապի մօտ,— յանկարծ լացակումած ասաւ Խաչիկը։

Հօրեղբայրը չուզենալով գործից ընկնել, չը լսելու դրաւ իրեն երկար ժամանակ, բայց Խաչիկը կախ էր ընկել նրա փէշերից ու պահանջում էր, որ գնան Ելդաշ պապի մօտ։

— Դէ գնանք, մատաղ, գնանք,— ասաւ հօրեղբայրը, յետ դնելով գերանդին, շալակեց Խաչիկին ու տարաւ դէպի Ելդաշի լանջերը։

Խաչիկի տրամադրութիւնը զարթնացաւ։ Նա սկսեց զրուցել հօրեղբօր հետ, միևնոյն հարցը մի քանի անգամ կրկնելով.

— Մեծ-հայրիկ, Ելդաշ պապն ինձ ինչ պէտք է տայ։

— Ծաղիկ,— պատասխանեց հօրեղբայրը։

— Է՛լ ինչ։

— Սարը ջուր։

— Էլ ինչ։

— Էլ, մորի, կարմիր մորի։

Այսպէս խօսելով նրանք հասան Ելդաշի լանջերը։ Հօրեղբայրը յետ դրեց Խաչիկին, շալակից ու ասաւ.

— Դէ, էս էլ քո Ելդաշ պապը։

Նրանք երկուսով սկսեցին ծաղիկներ ու մորի քաղել։ Խաչիկին աւելի դուր էր գալիս կարմիր մորին։ Նա Ելդաշ պապին այնչափ սիրեց, որ էլ չէր ուզում վերադառնալ իրենց խոտհարքը։

Վերջապէս հօրեղբայրը մի կերպ համոզեց նրան, որ պէտք է գնալ բան անել խոտհարքում, պէտք է խոտ հնձել, որ ձմեռը գոմէշն ուտի, կաթն ու մածուն տայ Խաչիկին։

Խաչիկը լսեց հօրեղբօրը, նորից ելաւ նրա շալակը ու էսպէս վերադարձան խոտհարքը։

Այդ օրը շատ ուրախ անցաւ Խաչիկի համար։ Այնքան մորի էր տուել նրան Ելդաշ պապը, որ մինչև երեկոյ հազիւ կերաւ, վերջացրեց։

Խաչիկն այնքան սիրեց Ելդաշ պապին, որ էլ չէր ուզում ձեռք վերցնել նրանից։ Օրն երկու անգամ հօրեղբայրը շալակում էր նրան և ուղևորւում դէպի Ելդաշի լանջերը մորի ու ծաղիկ քաղելու։

Ի՞նչպիսի մարդ էր հօրեղբայրը։

Ջիջել—ուզածը կատարել։	*լացակումած*—լացով։
Թախանձել—աղաչել, խնդրել։	*տրամադրութիւն*—քէֆ։
Թոթովանք—մանկական խօսակցութիւն։	*լանջ*—դօշ, կուրծք։
պատուհաս—պատիժ, փորձանք։	*համոզել*—կամի բերել։
վիթխարի—մեծ, ահռելի, հսկայ։	*ուղևորուել*—ճամբա ընկնել։

30. Հայրենասիրուհին

Ներսէս Ներսիսեանը ունէր բուռն սէր և սիրում էր իր անուէր, անպիրական հայրենիքը: Մի օր հանդէս կար... Մեր հանդիսին ներկայ էին Ներսէսի հայրենասիրները:

— Մողէրի,- ասաւ Ներսէսը,- մեր ղէնք դասրարկուել է, զինականների կրակ կէսն էլ չի մնացել. դիմելիք դէպի գիւղը, աշխատանքի ատպարէզ է բացուել, այդ ատպարիզում ցոյց պիտի տանք մեր ազգութեան մէզ: Եթէ պէտք կայ սիրտներ լինելիք մեր հայրենիքի օգտին, նուիրելիք նրան:

ՎԱՐԺՈՒԹԻՒՆ.— (պատասխանը գրել առանց դրքի):

1. Ներսես Ներսիսեանցն ի՞նչ ուներ եւ ի՞նչ եր անում:
2. Մի օր ի՞նչ կար եւ ովքե՞ր էին հաւաքուել այդ հանդիսին:
4. Ի՞նչ ասաւ Ներսէսը իր հայրենակիցներին:

Հայրիկն ասաւ.—Իմ հայրենեաց փուշն անուշ է քան թէ վարդ,
այդ փշերի միջից դարձեալ ես կը փնտռեմ սիրուն վարդ:

31. Զարթիր

Զարթիր, ա՛յ իմ դաշտ,
եկել է գարունն,
բերել է քեզ հիւր
հաւքերդ սիրուն:

Պայծառ երկինքը
կապել է կամար,
կապոյտ վրան է
խփել քեզ համար:

Շողերն արևի
ժպտում են խազում,
անձրևը կրծքիդ
գոհար է մաղում:

Զարթիր, զարդարւի
առլաս կանաչով,
գարունդ է եկել
երգով ու կանչով:

Հաւքեր—թռչուններ:
կամար—կիսաշրջան:
վրան—տաղաւար, չադր
գոհար—անգին քար:

32. Փոքրիկ ազատարարը

Դռնապանը Միհրանից ծածուկ շան լակոտները տարել, գետի ափն էր ածել: Միհրանը լալիս էր:

— Բաւական է, բաւական է, —հանգստացնում էր մայրը,—ես քեզ համար ուրիշ շնիկ կառնեմ:



— Չէ, մայրիկ, ես մեր լակոտներն եմ ուզում... Ախ, մէկն այնպէս լաւն էր, սպիտակ գնչով ու սպիտակ թաթիկներով: Մայրիկ, ուր գցեցին նրանց, թող ինձ գնամ, բերեմ... Աւա՜ Խէչօին, գայ ինձ հետ...

— Խէչօն կերթայ ու կը բերի,— ասաւ մայրը.—այսօր շատ ցուրտ է:

— Չէ, մայրիկ, Խէչօն չի գտնի: Ես ուզում եմ ինքս բերեմ նրանց,—թախանձում էր տղան:

Մայրը հաղցրեց Միհրանին, լաւ փաթաթեց նրա վիզն ու գլուխը, խրատեց, որ գետին չը մօտենայ, Խէչօից չը հեռանայ:

Զեռք ձեռքի տւած, տաք-տաք խօսելով Միհրանն ու Խէչօն դուրս եկան փողոց: Տղան դրեթէ վազում էր:

Նրանք անցնում էին քաղաքի նեղ, անյայտ փողոցներով, ուր Միհրանը երբէք չէր եղել, կամուրջներով, աղմկող գործարանների և գետի



ՊԱՏԱՆԵԿՈՒԹԻՒՆ

33. Պատանին ու վտակը

Պատանին պանդուխտ,
վտակն իր երկրում
խոր-խոր ձորերով
առաջ են գնում։
Պատանին միայն
դանդաղ է քայլում,
վտակը կայտառ
վազում, թռչկոտում։
Պատանու բերնից
մի ձայն չի հնչում,
վտակը կայտառ
երգում, կարկաչում։
Անցան ձորերը...
վտակն ու ուղան
ընդարձակ դաշտով
պէտք է անց կենան։
Ուրախ վտակը,
տխուր պատանին
իրենց կերպերը
այսպէս փոխեցին։
Լռեց վտակը,
տխուր պլորեց.
շտապեց պատանին
և ուրախ երգեց։
Վտակն հեռացաւ
հայրենի երկրից.
տեսաւ հայրենիք
պատանին նորից։

Պանդուխտ—հայրենիքից հեռացած, գաղթական։ | *Հնչել*—ձայն հանել։

34. Արաքս

Եկայ անցնելու բեզանից,
Արաքս, ինձ մի ճամբայ տուր,

Հեռացել եմ տանից-տեղից,
Արաքս, ինձ մի ճամբայ տուր,

կեղտոտ ափերի մօտով։ Նրանց կողքից, ահագին դղրդոց հանելով, սլանում էին կառքերը, անցնում էին հազարաւոր օտար մարդիկ, որոնք երբեմն հրում էին նրանց։ Ամենքը շտապում էին իրանց գործին։

Այս ամենը խլացնում և շլացնում էին Միհրանին. նա ուշադրութեամբ ու զարմանքով դիտում էր իր շուրջը և սաստիկ քամուց պաշտպանուելով աւելի պինդ բռնում էր Ծէչօի թևից։

Վերջապէս հեռուում լսեց գետի մռնչիւնը, որ քանի գնում սաստկանում էր։ Միհրանն ու Ծէչօն մի փողոց էլ անցան, մէկ անգամ էլ ծուեցին և տեսան գետափը։

Գետը, որ մի քանի վերստ այդտեղից հեռու թափւում էր ծովը, շատ անհանգիստ էր։ Ջրի երեսին, ամեն կողմ, վազում էին սպիտակ կոհակները, որոնք գալիս էին հեռուից և հետզհետէ ուռչելով, մեծանալով կատաղի թափով զարնւում էին աւազին ու փռւում նրանց վրա։

Երկուսով երկար վնասուեցին շան լակոտներին։

Յանկարծ մի Թոյլ ձագուց լսեց։ Երկուսն էլ խկոյն վազեցին դէպի ձայնը։

Սև, սպիտակ դնչով ու թաթիկներով լակոտը ընկած էր մի փոսի մէջ։ Նրա փոքրիկ մարմինը ամբողջովին թաց էր եղել ծովի կաթիլներից և դողում էր ցրտից։ Լակոտի ծուռ, քարակ ոտները հազիւ էին պահում մարմինը։ Նա ցրտից կողկոնձում էր։

— Միհրան, Միհրան, գնա, գնա,—կանչեց Ծէչօն ու վերցնելով լակոտը՝ վազեց դէպի տուն։

Միհրանը խկոյն էր ճանչել տուայ լակոտը, սկսեց նրա թաց մազերը թևով սրբել ու ասաւ։

— Ախ, մենակը ծանր է մեզ ճանչել, այ հենց իմ սիրած լակոտն է, սպիտակ թաթիկներով ու սպիտակ դնչով։ Որքան կուրախանայ սրա մայրիկը,—ասում էր ու համբուրում նրա գլուխը։

Հենց որ նրանք տուն հասան, Միհրանը վազեց բակը։ Սանդուխի տակ պառկած էր իրանց շունը։ Լակոտը դրեց նրա կողքին։ Շունը ուրախաթիթնից սկսեց հաչել, պոչը շարժել և վեր կենալ էր ձգտում։ Իսկ լակոտը ապուշի պէս նոդում էր դէս ու դէն ու փնտռում մօր ծիծը։ Վերջապէս գտաւ ու սկսեց ծծել։ Միհրանը կանգնած էր ու հրճւանքով նայում էր շանը։ Շունը վիզը երկարացրել էր ու լիզում ազատարար Միհրանի առները։

Լակոտ—շան ձագ։
դղրդոց—ազմուկ, ազատակ։
շլացնել—աչքը շլացնել։
դիտել—ուշադրութեամբ նայել։
ապուշ—ցնցած, վեր քաշած։
ազատարար—փրկող, ազատող։

35. Հայրենիք

Աշխարհի երեսին, որտեղ ուզում ես ապրի, քեզ էլի դէպ իրեն կը քաշի քո հայրենիքը, որտեղ ծնուել ես ու ապրել քո ազգականների հետ։

Հայրենիքումդ ամեն ինչ քեզ ծանօթ է, քեզ համար սիրելի, քեզ համար թանգագին։ Քո հայրենի տան ամեն մի անկիւնը քեզ համար սուրբ է, այնտեղ է օրօրւել քո օրօրոցը։ Քո հայրական այգու ամեն մի ծառը քեզ համար հաճելի է ու դուրեկան։

Սիրելի է քեզ համար քո հայրենի գետակը, այնտեղ դու քո ընկերների հետ շատ ես լողացել։ Սիրելի է քեզ այնտեղի անտառը, որի ամեն մի ծառը, ամեն մի թուփը քեզ մանկութ ծանօթ է։ Թանգ է քեզ համար այն սրբազան գերեզմանատունը, որտեղ թաղւած են քո պապերը։

Ով որ ապրել է օտար երկրում ու պանդխտութիւն քաշել, նա միայն գիտէ հայրենիքի քաղցրութիւնը։ Երբ պանդուխտը վերադառնում է հայրենիք՝ նորից կենդանանում, կեանք է առնում։ Հայրենիքիդ օդն ու ջուրը անմահական են քեզ համար, չէ՞ որ քեզ նրանք են ծնել ու մեծացրել։

Հայրենակիցներդ կարծես քո հարազատ եղբայրները լինեն և դուք մէկ-մէկու լաւ էք հասկանում։

Էլ ինչու է սիրելի հայրենիքը։

Հաճելի—դուրեկան։	*անել*—կերտակրել։
սրբազան—սուրբ։	*հարազատ*—հալալ։

36. Հայրենիքին

Երբ կը լինի գարնանամուտ,
նոր գարուն,
Կը բազմանան վտակներդ,
հայրենիք,
Օդդ սիրուն, ջուրդ սիրուն,
դու սիրուն,
Ծաղիկներդ պէս-պէս գոյնով,
հայրենիք։

Մարդիկ կը գան քո սարերը
մեծ գալու,
Որսորդի պէս եղնիկներդ
որսալու,
Հազար ու մի աղբիւրներդ
կաթնահամ,
Դու գրաւիչ ես եթեմական,
հայրենիք։

Ե՛ր գ.— Հայրենիք սրբազան, իմ սիրուն աշխարհ,
Թռչում եմ դէպի քեզ հոգուս անդադար...

37. Ձուկ

Ամառը տաքացել, խանձում է ամեն ինչ։ Գարնան մեղմ շողերն իրենց մանկութիւնից անցել, ուժեղացել ու էսօր այրող ճառագայթներ են դարձել։

Արևի թէժութիւնից վախեցողները, կեանքները հովերում անցկացնելու համար՝ գնացել են գիւղերը, փախել են ամարանոց։



Քաղաքի վաճառականներն ու առևտրականները իրենց խանութներում թմրած, աչքերն ուտող էն աներես ճանճերի հետ են կռիւ տալիս։ Գիւղացի չարքաշ մշակը իր որդու, իր թոռան հետ արևի տաքութիւնից երկիւղ անողը չի։

Հակառակի պէս, քանի արեգակը գօտ է անում, էնքան գիւղացին կրակ է կարւում ու իրեն ներսը բորբոքւող բոցով իր ձեռքի գործն է լափում, վերջացնում։

Էստեղ խոտ են հնձում կամ հնձածը բարձած սայլերով առուն են կրում։ Էնտեղ կալերն են ոկսել ու գարին գցել մէջը կասում են, որ կալը սարքն ընկնի, յետոյ էլ ցորենը կասեն։

Այգիներում հօ, աչքդ բարին առնի, իրար յետևից սկսել են հասնել շաքարաթութը, մեղրահամ կեռասը, ալ-ալուան բալը, կարմրաթուշ ծիրանը, մաթաղոշ շլորն ու դամբուլը։

Շաքարկենի, մեղրակենի, թթուաշ ու քաղցր, դեղին ու կարմիր խնձորները մարդու ուշք են թոցնում։ Հասել, համ են ընկել մալաշի ու քոլի տանձերը...

Էս բոլորը թափ գալ, քաղւել, ժողովւել են պահանջում իրենց տիրոջից, իրենց խնամարկուներից։

Ինչքը հացի հետ են կերել մեր աշխատասէր գիւղացին ու մեր չահել-չուհուլները, որ շոգից վախենան, կոնները ծալին ու պարտք հասանեն։ Կեանք է, կեանք ամառը, էն էլ մի ուրիշ կեանք...

1. Ի՞նչու է ամառը խաղաքեերի առուտուրը կանգ առնում։
2. Ի՞նչ է անում գիւղացին այդ ժամանակ։

Թէժ—թունդ, ուժեղ։	*շաքարկենի*—խնձորի տեսակը, քաղցր։
թմրած—աշխուժութիւնից ընկած։	*մեղրակենի*—խնձորի տեսակը, մեղրի
չարքաշ—շատ աշխատող։	*մալաշի*—տանձի տեսակը։ Տպես անուշ։
բորբոքել—յուզել, տաքացնել։	*քոլի*—անտառի, վայրի։
լափել—կլանել։	*խնամարկու*—խնամք տանող։

38. Գետն է հոսում



Գետը հոսում,
հետն էլ խօսում,
ձայն է տալիս, աղմկում,
չես իմանում,
ինչ է ասում,
երգում է թէ բողոքում։
Մէկ փըփրում,
փրփուր վռում,
համբուրում է ափերը,
մէկ էլ արագ,
կոհակ-կոհակ
յետ է քաշում ջրերը։
Ու ամեն օր
խորհրդաւոր,
աղմկալից հառաչով,
փրփուր կարած
իջնում է ցած,
իջնում, գնում դէպի ծով։

Ո՞ր գետն է աղմկով հոսում եւ ո՞րը հանդարտ։

Բողոքել—դժգոհութիւն յայտնել։
կոհակ—մանր ալիք։
խորհրդաւոր—առանձին միտք պարունակող։
հառաչել—ախ ու վախ քաշել։ Նեակոդ։

39. Ահա թէ ինչու

Մի մանրավաճառ իր խանութի համար ուղում էր մի աշկերտ վարձել։ Այդ մասին լրագրով յայտարարեց։

Միւս օրը շատերն եկան մանրավաճառի մօտ ու գնացին, բայց նա ընտրեց մէկին։ Հարցրեց ու հարցրեց մանրավաճառին.—

— Ասա, խնդրեմ, ինչու հէնց այդ պատանուն ընտրեցիր, ճանաչո՞ւմ ես դրան։

— Ոչ, չեմ ճանաչում,—պատասխանեց մանրավաճառը,—բայց տեսայ, որ ներս մանելիս, ոտները սրբեց և դուռը կամաց ծածկեց, երեւում է, որ նա մաքրասէր է և զգոյշ։ Նա դեռ ոտքը չէմքին՝ գլխարկը վերցրեց և յարգանքով բարևեց։ Այդ ցոյց է տալիս, որ նա քաղաքավարի է։ Իմ բոլոր հարցերին նա կարուկ և խելացի պատասխաններ էր տալիս, երևում է որ նա սրամիտ է և խելահաս։ Մեր խօսելու ժամանակ, երբ ներս մտաւ մի կաղ մարդ, նա իր աթոռն առաջարկեց նրան ու ինքը կանգնեց, ուրեմն բարեսիրտ է և մեծերին յարգող։ Ես դիտմամբ մեր մատեանը ոտի տակ էի ձգել, նա տեսաւ, կռացաւ վերցրեց ու դրեց սեղանի վրայ, այն ինչ ուրիշները կոխում, անցնում էին նրանից, որ նա աչքաբաց է և ուշադիր։ Ինձ ներկայանալիս՝ ուրիշներից առաջ չբռնեաւ և ազատեց իր հերթին, նշանակում է նա կարգապահ է։

Նրա հագի շորերը հին են, բայց մաքուր, մազերը սանրած, դէմքն ու ձեռքերը խատակ, այդ նշան է, որ նա բարեկիրթ է։ Ահա թէ ինչու, բոլորի մէջ ես ընտրեցի հէնց այդ պատանուն,—աւելացրեց վաճառականը։

Մանրավաճառ—մանրուք ծախող։
յարգանք—պատիւ։
մատեան—գիրք, տետրակ։
դիտմամբ—գիտութեամբ։
ուշադիր—խելքը գլխին, ուշքով։
բարեկիրթ—լաւ կրթուած։

40. Ոսկու որը

Ոսկին որը-մորը որոնում էր իր. որեերիմ
և ոճրագործ գտնելի օգին։ Օգը կծել էր նրա
ոսկերկի որը։ Ոսկին որոնեց, որոնեց, գրաւ օ-
գին մի տորում. բռնեց պոչից ու կծկեց։

Օգը պրծաւ, բոլորեց, կորաւ, իրեն խրեց
ոսկու փղերին, արևախում եղաւ ու իր արիւնի
մէջ ողողեց։ Ոսկին թողեց օգի պոչն ու գնաց
իր բանին։

Միայգիսով նա որը հանեց իր չար ոստ-
խից։

ՎԱՐԺՈՒԹԻՒՆ.— (պատասխանը գրել առանց գրքի)։

1. Ոգնին որոր-մորը ո՞ւմն էր որոնում։ 2. Ո՞վ էր կծել նրա ոգնիկի ոտը։ 3. Ոգնին ի՞նչպես էլ ո՞րտեղ գտաւ օձին։ 4. Ի՞նչ արեց օձին։ 5. Ի՞նչ արաւ օձը։ 6. Երբ արեւամուտ եղաւ օձը՝ ի՞նչ արեց ոգնին։ 7. Միայգիսով ոգնին ի՞նչը հանեց օձից։

41. Արծիւը

Միևնոյն անտառում ապրում էին սոխակն ու ուրուրը։ Սոխակն երգում էր ուրախ-զուարթ, նրա երգը դուր չէր գալիս ուրուրին։

Բարկացաւ ուրուրը և վճռեց պատժել սոխակին։

Մի անգամ սոխակը դուրս էր եկել մժեղներ որսալու, ուրուրն ընկաւ նրա յետևից։

Սոխակը տեսաւ արծուին ու ասաւ.

— Փրկիր ինձ, արքայ, ես ձագի տէր եմ, ես ձագի մէր եմ։

Արծիւը թևերը թափահարեց և իսկոյն բռնեց ուրուրին։

— Ինչո՞ւ ես հալածում սոխակին,—հարցրեց Արծիւը։

— Պէտք է պատժեմ դրան, ասում եմ մի երգի, ինձ չի լսում, երգում է,—պատասխանեց ուրուրը։

— Իսկ ես, տէր արքայ,—ասաւ սոխակը,—առանց երգի չեմ ապրի։

— Մ՛յ անխիղճ ուրուր, դու որ չես խնայում ձագաւօրը, ես էլ քեզ չեմ խնայի,—ասաւ Արծիւն ու պատառոտեց ուրուրին։

Սոխակն եկաւ տուն։ Տեսաւ որ իր և ուրուրի ձագերը սոված, բերանները բաց ժւժւում են։

Թռաւ գնաց մժեղները բերեց ու տւեց թէ իր և թէ որբացած ձագերին։

Այսպէս էր անում նա ամեն օր, ամբողջ ցերեկը, իսկ երեկոները ազատ և ուրախ երգում էր։

Սոխակն ինչո՞ւ կերակրեց որբացած ձագերին։

Ուրուր—ցին, ալալ։	*արքայ—թագաւոր։*
վճռել—որոշել։	*հալածել—քշել, յետևից ընկնել։*

Առած.— Ուժեղի մօտ միշտ տկարն է մեղաւոր։

ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆ.— (պատասխանը գրել առանց գրքի)։

1. Ո՞ւմեղ էին ապրում սոխակն ու ուրուրը։
2. Ուրուրն ինչո՞ւ էր ուզում սոխակին բռնել։
3. Ո՞ւմ դիմեց սոխակը. ի՞նչ ասաւ նրան։
4. Ուրուրն ի՞նչ պատասխանեց արծուին։
5. Արծիւն ի՞նչ ասաւ ուրուրին եւ ի՞նչպէս պատժեց նրան։
6. Ո՞վ էր կերակրում որբացած ձագերին։



42. Գասպարեանի շարադրութիւնը

Ա.

Գիւղի դպրոցում ուսուցիչը շարադրութիւն տւեց գրելու և՝ ասաւ.
—Թող ամեն մէկը իր կեանքից մի բան գրի։
Մի աշակերտուհի հարցրեց.
— Պարո՛ն, կարելի՞ է գրել թէ ինչպէս մի անգամ քիչ մնաց խեղդւէի։
— Կարելի է,—պատասխանեց ուսուցիչը։
— Պարո՛ն, հրդեհ կարելի՞ է նկարագրել,—հարցրեց մի ուրիշը։
— Ես ուզում եմ եղբօրս հարսանիքի մասին գրել, պարո՛ն, կարելի՞ է,—հարցրեց մի երրորդը։
— Կարելի է, կարելի է—պատասխանեց ուսուցիչը։

Եռևի նոտարանին նոտած էր մի դանգրահեր երեխայ՝ Գասպարեան Բաղդասար ազգանունով։ Գասպարենանը չը գիտէր, թէ ինչ գրի։ Նա կամաց հարցրեց իր հարևան Աշխէն Յովհաննիսեանին.

— Դու ի՞նչ պէտք է գրես, Աշխէն։
— Պէտք է գրեմ թէ ինչպէս վախեցայ, պատասխանեց Աշխէնը։

Բաղդասարը հարցրեց մի ւրս կողմի հարևան Յարութիւնեան Լևոնին.

— Լևո՛ն, դո՛ւ ի՞նչ պէտք է գրես։
—Ե՛ս, ես էլ պէտք է գրեմ թէ ինչպէս վախեցայ, պատասխանեց Լևոնը։

Ուսուցիչը նկատեց, որ Գասպարեան Բաղդասարը խօսում է և ասաւ.—

— Գասպարեա՛ն, խանգարում ես ուրիշներին, ժամանակ մի կորցնի, գրի՛... Ի՞նչ պիտի գրես։
— Ես պէտք է գրեմ, թէ ինչպէս մի անգամ սաստիկ վախեցայ։
— Լա՛ւ, լա՛ւ, գրեցէք բոլորդ,—ասաւ ուսուցիչը։

Ու բոլորն էլ սկսեցին գրել իրենց կեանքից ինչ որ կամեցան։

Բ.

Յովհաննիսեան Աշխէնը գրեց.— Թէ ինչպէս վախեցայ.—

«Մի անգամ, ամառը, հարևան գիւղից մեզ մօտ էին եկել քեռիս ու իր կինը։ Երեկոյեան ես նրանց տարայ ճամբա ձգելու։ Վերադառնալիս շտապում էի, որովհետև երկիւղալի էր։ Ձեռքիս մի երկար ձող կար։ Գիւղումն արդէն բոլոր ճրագները հանգցրել, քնել էին։ Երբ մօտեցայ մեր խրճթին՝ տեսայ որ դուռը փակ է։ Սկսեցի ծեծել։—Երկու ձեռքով էի խփում, ձողը կռանս տակն էր։ Եւ յանկարծ լսում եմ՝ յետևս մէկը պըտրտւում է, խոսը շարժում, խըշխշացնում է։ Սաստիկ վախեցայ։ Ինչքան ուժ ունէի, գոռացի և դուռը թակեցի։ Մերոնք դուրս թափւեցին։ Բանից երևայ, որ խոսը խըշխշացնողը իմ կոնատակի ձողն է եղել։»

Այս շարադրութիւնը Աշխէնը տւեց ուսուցչին։

Յարութիւնեան Լևոնը գրել էր.— Թէ ինչպես վախեցայ.—

«Մենք փոքրիկ, ալեւմազով ծածկւած ձագեր ունէինք։ Նրանց հաւիկներ էինք ուտեցնում։ Ուրախանում էինք, որ մեծանում են։ Մի անգամ, գիշերը ես ու եղբայրս քնած էինք յատակին։ Նոր սկսել էր լուսանալ։ Յանկարծ, պատի տակ, մէկը սոսկալի կերպով խոխոջացրեց։ Զարթեցի, վախեցայ, զարթեցրի եղբօրս։ Երկար ժամանակ չէինք համարձակւում ցած նայել. յետոյ նայեցինք։ Բանից դուրս եկաւ, որ դա մեր փոքրիկ աքաղաղն է երգում։ Դեռ «ծուղրու-ղու» կանչել չը գիտեր և միայն «ծը-կը՛ըը» էր անում»։

Լևոնը շատ գոհ էր իր գրածից։

Գասպարեան Բաղդասարը մտածում էր մտածում և չէր իմանում թէ ինչ գրի։ Վերջը սկսեց մէկ Աշխէնին, մէկ Լևոնին նայելով, ամեն մէկից մի կտոր արտագրել։

Ահա Գասպարեան Բաղդասարի գրածը.— Թէ ինչպէս վախեցայ.—

«Մի անգամ, ամառը, հարևան գիւղից մեզ մօտ էին եկել քեռիս ու իր կինը։ Նրանց հաւիկները էինք ուտեցնում։ Ուրախանում էինք, որ մեծանում են։ Գիշերը ես ու եղբայրս քնած էինք յատակին։ Ձեռքիս մի երկար ձող կար։ Զարթեցի, վախեցայ, զարթեցրի եղբօրս։ Դեռ «ծուղրու-ղու» կանչել չը գիտեր և միայն «ծը-կը՛ըը» էր անում։

Գասպարեանն էլ այս շարադրութիւնը տւեց ուսուցչին։

Այսպիսի գրաւոր ներով աշակերտն ո՞ւմ է խաբում։

Հրդեհ—մեծ կրակ։ | *աղւամազ—փափուկ մազ։*

43. Չափիչը

(Ով իմանայ ինչ է, առաջին անգամ նա կըստանայ չափիչը։)



ՇԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ.—(պատասխանեցէք հետևեալ հարցերին բանաւոր և գրաւոր)։

1. Մեծ-մայրիկը ո՞րտեղ էր նստած։
2. Թաղթի վրայ նստած ժամանակ ո՞վքեր էին շրջապատել նրան։
3. Նրա թոռներից քա՞նիսն էին աղջիկ եւ քա՞նիսը տղայ։
4. Թոռները հաւաքել էին Մեծ-մօր շուրջը, որ ի՞նչ տեսնեն։
5. Մեծ-մայրիկը տոպրակը ո՞րտեղ էր դրել եւ ո՞ր ձեռքով բռնել։
6. Ի՞նչ էր արել նա աջ ձեռքը եւ ի՞նչ էր ուզում անել։
7. Ի՞նչպէս էին նայում թոռները։
8. Ի՞նչպէս էր նայում Մեծ-մայրիկը։
9. Մեծ-մայրիկը ժպտաց, ժպտաց եւ ի՞նչ ասաւ...
10. Ո՞վ կիմանար առաջին անգամ, որ տոպրակիը չափիչ է։

---

44. Օրը բայլեց

Օգոստոսեան մի առաւօտ էր: Բարիլուսի վանքերի զանգակները տարածել էին մօրական արևն ու արօտը: Վաղօրդեան ցօղն ու ցօղունը արօտ էին կանչել օրհնեալ հօտը: Մեր հովիւ Օհանը մի բլրի վրա նստած, արինգը բերանին, նւագում էր իր առաւօտեան օրհներգը:

Մօրիս իր կարօտն առած հօտուր-մօտուր արեր ձագեց ալխարհի վրա և ոսկեցօծեց սարերի գագաթները: Օդը լցեց թռչուններով: Օրը բայլեց...

ՀԱՐՑՈՒԹԻՒՆ.—(պատասխանը գրել առանց գրքի):

1. Ե՞րբ էր:
2. Ի՞նչ էր տարածել մօտակայ արտն ու արօտը:
3. Ի՞նչերն էին կանչել օրհնեալ հօտը եւ ո՞րտեղ:
4. Ո՞վ եւ ի՞նչով էր նւագում իր առաւօտեան օրհներգը:
5. Ի՞նչ ձագեց ալխարհի վրայ եւ ի՞նչ արաւ:
6. Ումմո՞վ լցւեց օդը:
7. Օրն ի՞նչ եղաւ:

Ա ա ե լ ու կ.—Մի լինի ուրագի պէս, միշտ դէպի քեզ, միշտ դէպի քեզ, այլ եղիր սղոցի պէս, մին դէպի քեզ, մին դէպի մեզ:

45. Առաւօտ

Լուսը լուսով շողշողաց,
երգը հնչեց սոխակի,
շող շողի հետ դողդողաց,
շուսով արև կը ծագի:

Սրշալուսի ցոլքերը
շապիկ հագան ծիրանի,
տեսան, թռան հաւքերը,
նրանց հազրը երանի:

Դաշտի քնքուշ ծաղիկը
բուրեց հոտը խնկաւէտ,
և վաղօրդեան շաղիկը
երկինք թռաւ շողի հետ:

Ու բարձրացաւ Թանձր մէգ
գետի փրփուր Ջրերից,
Ջրին ասաւ մի եղէգ. —
—Տես, լոյս ծագեց վերևից:

Պատմեցէք այս ոտանաւորը ձեր խօսքերով:

Ցոլք—շողք:
Հաւքեր—թռչուններ:
Ծիրանի—կարմիր:

խնկաւէտ—խնկի հոտ տուող, բուրաւէտ:
վաղօրդեան—վաղ առաւօտեան:
եղէգ—դամիշ, ղարղուս:

46. Պետիկը

Ինչ որ պատմում եմ, հնարովի չէ, եղած բան է:

Բանն այն է, որ Պետիկն այսօր մազով, միրքով մարդ է ու անունն էլ Պետրոս է:

Պետիկը, որ հիմա Պետրոս է դարձել, երաժշտութիւն շատ էր սիրում: Օր չէր անցնում, որ չը վազեր հարևանների բակը ու չը լսէր աշուղների երգն ու նւագը:

Պետիկի նւագելու ցանկութիւնն այնքան մեծ էր, որ տաշեղներից մի ջութակ էր շինել, ձիու մազից լարեր էր քաշել վրան ու առաւօտից մինչև երեկոյ ծընկծընկացնում էր ու երգում:

Հօրեղբայրը տեսաւ, որ Պետիկը շնորհք ունի, նրա համար մի ջութակ գնեց:

Պետիկը ոգևորած սկսեց նւագել ջութակը և հետզհետէ այնպիսի եղանակներ հնարեց, որ լսողին դուր էին գալիս:

— Լսիր Պետիկ,—ասաւ մի օր հայրը,—գիտեմ, որդի, դու նւագելու յեռանից ես ընկել, բայց մեզ ապրուստ է հարկաւոր, ես ծերացել եմ, մեր ընտանիքն էլ մեծ է. դու ես իմ մեծ որդին, դու պէտք է պահես մեզ: Ես առնեմ արհեստաւորի տան, մի արհեստ սովորի: Արհեստ իմացողը քաղցած չի՛ մնայ աշխարհում:

Ու Պետիկը դարձաւ դերձակի աշակերտ: Ցերեկները աշխատում

էր արհեստանոցում, երեկոները նւագում էր սիրած չուքակը։ Իր աշխատավարձը նա տալիս էր հօրը։ Մօտը հնացած կոպէկները խնայում էր։ Այդ կոպէկներով նա կիրակի օրերն սկսեց երաժշտութեան դասեր առնել։

Կարճ ժամանակում այնքան լաւ էր նւագում և զեղեցիկ եղանակներ յօրինում, որ իսկական երաժիշտները նախանձում էին Պետիկին։

Կան մարդիկ, որոնց արտերում ի ծնէ նռատած է լինում սոխակը, և որքան էլ վանդակը նեղ լինի՝ սոխակը դարձեալ երգելու է։

---

1. Ինչո՞ւ հայրը Պետիկին արհեստի տւեց։
2. Ինչո՞ւ չը մոռացաւ Պետրոսն իր չուքակը։

Երաժշտութիւն—երգ, նւագածութիւն։	*ոգեւորուել*—եռանդի գալ։
Չուքակ—նւագածութեան գործիք։	*խնայել*—յետ դնել, պահել։
Նւագել—երաժշտական գործիք ածել։	*յօրինել*—ստեղծել, յօրինել։

Առած.—Արհեստը որ կայ՝ ձեռքի ապարանջան է, ոչ կը կոչի, ոչ էլ կը զողացւի։

---

47. Սոխակի երգը

Սոխակը այգում, վարդենուն թառած՝
Երգեց որոայոյզ,
Երգեց հրաշալի, երգեց, թուռաց
Մինչև արշալոյս։

Փշերի մէջից վարդիկը ասաքուն՝
Լսում էր լռիկ։
Ճղեց իր կանաչ շապիկը թաքուն,
Հագաւ կարմրիկ։

Թառած—Թառ եղած, թառին։
Որոայոյզ—յուզած, ոգեւորուած։
Արշալոյս—արեւածագ։
Թաքուն—ծածուկ։

Առած.—Ոնն պատւոը կարմիր չըկայ, որ ճղում ես՝ սիրտը ևս է։

48. Սրամիտ Գուրգէնը


Գուրգէնը մօր հետ գնացել էր կենդանաբանական այգին։ Նրան ամենից շատ դուր եկան փոքրիկ ու չարաճճի կապիկները։

Այդ կապիկները թռչկոտում էին վանդակում, պանապան խաղեր էին սարքում, վար ու վեր էին անում, ուրախ էին ու զւարթ։

Այցելուները հիւրասիրում էին կապիկներին պանապան մրգերով։ Տալիս էին ընկոյզ, խնձոր, տանձ ու տեսակ-տեսակ քաղցրաւենիքներ։

Կապիկ երը հասաքում էին այդ ընծաները, ուտում և շնորհակալութեան տեղ, պանապան ծանրածռութիւններ անում։

Մայրն ու Գուրգէնը տուն վերադարձան։ Գուրգէնը շարունակ խօսում էր կապիկներից և նրանց նման պանապան ձևեր անում։



Երեկոյեան, երբ հասաքեցին տանեցիք, Գուրգէնն սկսեց պատմել իր տեսածները։

Հայրն առաջարկեց.

— Տղերք, եկէք ամեն մէկդ ձեր ցանկութիւնը պրեցէք թէ ծրդ ինչ է ցանկանում լինել ժամանակին։ Ում ցանկութիւնն անկեղծ և լաւը լինի, այս պեղեցիկ նարինջը նրան կը տամ։

Խակոյն ոտաներն առան թուղթն ու գիրը և ամեն մէկն իր ցանկութիւնը պրեց։

Հայրը հասաքեց բոլորի գրածներն ու հերթով մէկ-մէկ կարդաց։

— «Ես կուզէի լինել մեքենավար, որ շրջէի ամբողջ աշխարհը»,— դրել էր մեծ եղբայրը՝ Բարսեղը։»

— Ոչ նէ, լաւ ցանկութիւն է, Բարսեղ,—ասաւ հայրը։

«Ես կուզէի լինել բժիշկ, որ բոլոր հիւանդներին օգնութեան հասնէի»,—դրել էր միջնակ եղբայրը՝ Սմբատը։»

— Ապրես, Սմբատ, քո ցանկութիւնն էլ լաւ ցանկութիւն է։

«Ես կուզէի լինել դերասանուհի, որ ձեզ շուռ-շուռ թատրոն տանէի»,—գրել էր Յասմիկը։

— Ոչինչ, Յասմիկն էլ լաւ ցանկութիւն է ունեցել,—ասաւ հայրը։

Հերթն եկաւ Գուրգէնի գրածին։ Ամենքը հետաքրքրութեամբ ուզում էին լսանալ թէ ինչ է գրել փոքրիկ Գուրգէնը։

Հայրը վերցրեց Գուրգէնի գրածը և բարձրաձայն կարդաց։ Գուրգէնը դրել էր.

— «Ես կուզէի միմիայն կապիկ լինել»...

Ծափն ու ծիծաղն ընկաւ տան մէջ։

— Կեցցէ Գուրգէնն ու իր անկեղծ ցանկութիւնը։ Համեցէք, քեզ է արժան այս գեղեցիկ նարինջը,— ասաւ հայրը։

Գուրգէնը մօտեցաւ հօրը, կապիկի նման ձեռքը մեկնեց ու նարինջն առաւ։

Գուրգէնի այս կապկութիւնն աւելի շատ ծիծաղացրեց տանեցիներին։

— Այ դու խորամանկ, նախանձեցիր կապիկներին,— ծիծաղեց մայրը։

— Բա ինչ անէի, մայրիկ, Թողնէի որ նարինջն ուրիշներն ուտէն, պատասխանեց Գուրգէնը։

1. Ո՞ւմ ցանկութիւնն էր իսկապես անկեղծ։
2. Գուրգէնն արժանի՞ էր ցարիցքի։

կենդանաբանական այգի— գազանանոց։
այցելել— տեսութեան գնալ։
հիւրասիրել— պատուել։
ծամածռութիւն— զանազան ձևեր անել։
նարինջ— ապիլսին։
մերենավար— մեքենան քշող։
խորամանկ— հնարագէտ։
նախանձել— աչքը չը վերցնել։

Ա ռ ա ծ.— Մինչև խելօքը կը մտածի, դիժը գիտը կանցնի։

49. Լալկան ուռին

Ամեն գիշեր իմ պարտիզում
լալկան ուռին, հէգ ուռին
վշտատոչոր լաց է լինում,
լաց է լինում իմ ուռին։

Եւ սրբում է առաւօտուն
կոյս արևը նազելի
իր ծամերով հէգ ուռենու
արցունքները բիւրեղի։

Լալկան— լաց լինող։
հէգ— խեղճ, թշուառ։
վշտատոչոր— վշտից այրուած։
նազելի— քնքոյշ։
ծամեր— մազեր, հիւսեր։
բիւրեղ— թափանցիկ քար։

50. Օրերը

Ձյի նման օրակ-օրակ
Օրերն է գալիս կոհակ-կոհակ,
Հեռու տեղից օրար կը գայ,
Օրար կը գայ, ձանձր կերթայ։
— Մանր ալիք, օրնակ-օրնակ,
Օրնակ-օրնակ, ոնր կը լողաք.
Ինչու էդպէս տրտում կը գաք.
Ոդոր-մոդոր կը գայ, կերթայ։

ՎԱՐԺՈՒԹԻՒՆ.—

1. Ծնի նման օրակ-օրակ ի՞նչն է գալիս կոհակ-կոհակ։
2. Հեռու տեղից ի՞նչպես կը գայ։
3. Օրար կը գայ, ի՞նչպես կերթայ։
4. Ի՞նչ են հարցնում մանր ալիքից։

51. Պատանի մուրացկանը

Մի օր մեր բակն եկաւ ցնցոտիներ հագած մի պատանի։ Նա իր դափը ձեռքին դնդնդացնում էր, հետն էլ սխուր երգում։

Ես քսակս հանեցի, որ նրան փող տամ, բայց մէջը մի ոսկուց զատ՝ ուրիշ փող չկար։

— Շատ ցաւում եմ, տղաս, բացի մի ոսկուց՝ ուրիշ մանր փող չունեմ, որ քեզ տամ,— ասի նրան։

— Ո՛հ, պարոն, մի մեծ բան չէ։ Տուէք ինձ ոսկին, տանեմ մանրացնեմ, բերեմ,— ասաւ նա։

Ես հաւատացի ու ոսկին ուի նրան։ Նա ձեռքիս առաւ ու թռաւ։

Անցաւ հինգ րոպէ, տասը րոպէ, կէս ժամ, տղան չեկաւ ու չեկաւ։ Վերջը սկսեցի կասկածել և ինքս ինձ մեղադրել, թէ ինչո՞ւ հաւատացի այդ փողոցային տղային։ Սպասե՛մ, սպասեցի, տեսայ որ չեկաւ՝ գնացի գործիս։

Երբ վերադարձայ տուն, տեսայ որ մեր բակի դռանը կանգնած է մի տղայ։ Դա շատ նման էր ոսկիս տանող պատանուն, բայց նրանից փոքր էր հասակով։ Մօտեցայ և հարցրի.—

— Ի՞նչ ես ուզում, ա՛յ տղայ...

— Դուք էք այն պարոնը, որ իմ եղբայր Աշոտին յանձնել է մի ոսկի մանրացնելու համար...

— Այ՛, ես եմ,— ասացի նրան։

— Պարո՛ն, ահա ձեր ուած ոսկին, Աշոտը չը կարողացաւ բերել, նա կառքի տակն ընկաւ, այժմ պառկած է,— ասաւ ու լաց եղաւ։

Ես տեսնելով այն պատանու տղնւութիւնը, եղբօր հետ գնացի նրա մօտ։

Ներքնատան մի մութ անկիւնում, հանգած բուխարու մօտ, ես ճանաչեցի իմ պատանի մուրացկանին։

Նա պառկած էր ցնցոտիների վրայ անշարժ, գէմքը բոլորովին գունատ։ Նրա ճակատից հոսում էր կարմիր արիւնը։

Ես նստեցի նրա կողքին և բռնեցի նրա սառած ձեռքը։

— Պարո՛ն, դուք սպանք ձեր ոսկին,—հազիւ շշնջաց նա,— տեսնե՛մ էք, պարո՛ն, որ ես գող չեմ։ Ասաւ ու յանկարծ մի սոսկալի արիւնութիւն պատեց նրա դէմքը։

— Արա՛մ, իմ փոքրիկ Արա՛մ, ո՛վ կը լինի քո տէրը... պարո՛ն,— դարձաւ նա ինձ,—եղբայրս բացի ինձնից էլ ոչ ոք չունի, խղճացէք նրան։

Ես համբուրեցի նրա ճերմակած ճակատը ու հանդստացրի նրան ասելով.

— Արամիդ անտէր չեմ թողնի, տղաս, դու հանգիստ կաց։ Այս րոպէիս գնում եմ քեզ համար բժիշկ բերելու,—ասի և դուրս եկայ։

Մի ժամ չանցած, ես նրան տեղաւորեցի հիւանդանոցում։ Բժիշկներին պատմեցի նրա տղնւութիւնը և նա մինչև հիւանդանոցից դուրս գալը, իր տղնւութեան համար բոլորի սիրելին էր դարձել։

Երբ նա առողջացաւ, ես նրան չը թողի, որ մուրացկանութիւն անի, տարայ երկու եղբօրն էլ գործի դրի։

Ի՞նչպիսի տղայ էր Աւոտը։

Ցնցոտի—հին, գլխուած շոր։
կասկածել—չը հաւատալ։
յանձնել—տալ։
Դունատ—դոյնը թոցրած։

Առած.— Ինչ որ կը ցանես, էն էլ կը հնձես։



52. Արեգը

ՈՒՐ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Ա.

Գնաց, գնաց Արեգն արի,
գնաց, ընկաւ մի աշխարհ,
երկինքը մութ, գետինքը մութ,
մութ բովանդակ ու խաւար։
Առաջ գնաց. դէմն ահագին
մի սև ամրոց կանգնեց լուռ,
էն ամրոցից մի ձէն եկաւ,
մի ձէն տխուր ու տխուր։
Վերև նայեց, տեսաւ շարմաղ
մի աղջիկ է լուսեղէն,
հեսը լալիս յուսահատուր,
հեսը կանչում է իրեն.

Աղջիկը. — Ափսո՛ս, կորի՛ճ, ախ, ո՛ւր եկար
էս աշխարհը սև ու մութ.
ո՛ր անօրէն մարդն էր արդեօք
աւեց էդպէս քեզ խորհուրդ։
Փախի՛ր շուտով, անա՛հ տղայ,
թէ չէ, էդտեղ որ մնաս,
սև, մարդակեր Դևը կը գայ,
կը գայ կանի քեզ մա՛ս-մա՛ս։

Արեգը. — Բայց ո՛վ ես դու, սիրուն աղջի՛կ,
էստեղ ի՞նչ ես դու շինում,
եւ ինչո՞ւ ես էդպէս ազի
արցունք թափում, լայ լինում։
Ի՞նչ է արել էդքան սիրուն,
էդքան քնքոյշ մի էակ,
որ փակել են մութն ու անդուռ
էդ ամրոցում մեն-մենակ։

Աղջիկը.

— Իմ յանցանքը էս է, աւազ,
որ սիրուն եմ ես էսքան.
սրա համար Սև Դևն եկաւ
մեր աշխարհը աննման.
եկաւ բոնի յափշտակից
հայրենական իմ վայրից,
բերաւ ինձ էս բանտում փակեց,
զրկեց պայծառ օրերից։
Նրա թշւառ գերին եմ ես.
էստեղ, անդունդ իմ բանտում,
լուռ ու մենակ փակւած էսպէս,
մաշւում եմ ես անխնդում։
Բայց, ախ, նրա ժամն է ահա,
հիմի կը գայ նա նորից...
Փախիր, փախիր, անահ տղայ,
էս սև ու մութ աշխարհից։

Աւեգը.

— Ես չեմ վախում, քոյրիկ անգին,
ես չը գիտեմ ահ ու մահ,
ես կը ճնամ բանտիդ տակին,
ինչ սև հրէշ կուզի գայ։
Ու կը մեռնեմ էստեղ ես էլ,
որ էլ չապրեմ էս օրից,
կամ կը փրկեմ ինձ հետ քեզ էլ
էս սև ու մութ աշխարհից։
Միայն ասա թէ ո՞ր ճամփով,
ո՞ր կողմից է նա գալու,
ու ո՞րտեղ եմ իմ նետերով
նրա կեանքին վերջ տալու։

Աղջիկը.

— Ահա էն սև սարի տակից
նա կերևայ ահաւոր.
նրա ձէնից, բերնի հուրքից
սասանւում է սար ու ձոր։
Եօթը ագահ գլուխ ունի,
մէջի գլխին պիտ զարկես
ու չես կրկնի զարկդ նորից,
ինքն էլ խնդրի թէկուզ քեզ։

Լսիր, ահա գալիս է նա
անպարտելի ու խաւար...
Գնա, կորիճ, իսկ ես էստեղ
աղօթում եմ քեզ համար...

Բ.

Մութ աշխարհը էլ աւելի մութը
կոխեց ակնակիը.
Դևի ձէնից զարհուրելի դողաց
երկինք ու երկիր։
Եկաւ Սև Դևն, ինչպէս սև ամպ,
հուր ու կրակ շաղ տալով,
եկաւ անհուն կատաղութեամբ,
ինչպէս պրծած մի սև ծով։
Դեռ շատ հեռուից նա նշմարեց
իր թշնամուն լուսաւոր
ու հեռաւոր մութի միջից
խուլ որոտաց ամպագոռ։

Սեւ Դեւը.

— Ո՞վ ես, խիզախ դու հողածին,
ինչպէս մտար իմ հողը դու,
ինց չի հասել ոտ ականջին
գոնէ անունն իմ ահարկու։
Մինթէ աչքով դու չը տեսար
գիւղ ու քաղաք ողջ ամայի.
մարդ եմ կիրճ հազար—հազար,
քեզնից էլ քաջ ու վիթխարի։
Իսկ դու ով ես, չնչին մարդուկ,
որ կուիս ես գալիս իմ դէմ.
ասա տեսնեմ, որ իմանամ՝
ինչ չիմարի պիտի ուտեմ։
Ցոյց տուր տեսնեմ՝ ինչ ունես դու,
տես, ես ունեմ եօթը գլուխ...»
Որոտաց հրէշն էն ահարկու
արձակելով կրակ ու ծուխ։

Աւեգը.

— Գալիս եմ ես, ով անճոռնի,
որ մեն մենակ կուեմ քեզ հետ,

կրծքումս ունեմ մի սիրտ արի,
ձեռքիս ունեմ եօթը սուր նետ...

Ասաւ, ճայթեց գիլ աղեղը,
ոռնաց վիշապն ահագին,
թաւալւելով տեղն ու տեղը,
անիծելով Արեգին։
— Մին էլ զարկիր...մին էլ, մին էլ...
մռնչում էր հոգևարք։
—Ես իմ մօրից մին եմ ծնւել,
մի խօսք ունեմ ու մի զարկ»։
Պատասխանեց Արեգը քաջ,
փչեց վիշապն իր հոգին.
ու արևի լոյսը ցոլաց
Մութ աշխարհքի եզերքին։

Բովանդակ—ամբողջ, ընդհանուր։
ամրոց—ամուր շէնք, բերդ։
կտրիճ—քաջ, խիթթ։
դև—չար ոգի։
բռնի—զօռով։
յափշտակել—խլել, փախցրել։
սասանել—սարսափել։
անպատրելի—անյաղթելի։
նշմարել—նկատել։
խիզախ—համարձակ։

53. Արեւոտ բնակարան

— Սիրուն կակաչներ, դէ լաւ ցրեցէք արևի պատմութիւնը։

Աղջիկս հիւանդ էր. գլուխը, նա էլ ձեզ նման գեղեցիկ մի ծաղիկ էր, փայլուն, ոսկէ մազերով...

Բժիշկը իջաւ մեր բնակարանը. նա տխուր էր... ինչո՞ւ... հա, յիշում եմ, նա չէր սիրում ներքևի յարկերը։

Երբ իջաւ ներքև, մտաւ մեր բնակարանը, նայեց իմ աղջկան, նայեց սենեակիս պատերին ու ասաւ ինձ.

— Ծոնաւ է, պէտք է փոխէք ձեր բնակարանը, պէտք է արևոտ սենեակ ճարէք։

Ասաւ և քննեց երեխայիս։ Յետոյ դարձաւ հարցրեց.

— Քանի՞ երեխայ ունէք։

— Երեքն ունէինք, բժիշկ, մեռան, այս մէկն է մնացել։ Աղաչում ենք, բժիշկ, ազատեցէք մեր աղջկան, սա մեր տան հոգին է...

Բժիշկը դեղ գրեց ու տխուր դէմքով դուրս գնաց.

— Հայրիկ, ինչ գրեց բժիշկը,—հազիւ շշնջաց աղջիկս...

— Արև գրեց, սիրելիս, արև գրեց, որ քեզ վրա փայլի և դու լաւանաս։

Ու ես գնացի արևոտ բնակարան փնտռելու։ Ման եկայ, մանը, վերջապէս գտայ մի արևոտ բնակարան։

Միւս առաւօտը ես Լուսիկիս պէտք է տանէի արևոտ նոր բնակարանը, բայց երբ լուսացաւ, նա ինձ կանչեց, ձեռքս բռնեց ու փակեց աչքերը։

Արդէն ուշ էր... էլ արևոտ բնակարանին չարժանացաւ իմ սիրունիկը։

Ա ռ ա ծ.— Ում տունն արև չը մտնի, նրա տունը բժիշկ կը մտնի։

54. Զար խօսքը

Մի անգամ հայրս քաղաք գնաց ու այնտեղից ինձ համար մի զոյգ հնամաշ կօշիկ բերեց, որ գնել էր վինեւրներից։

— Վարդանի համար գնեցի,—ասաւ մօրս,—հին են, մի քիչ էլ ծակծակւած, բայց ոչինչ, էժան եմ առել, երեխան միշտ ուզում էր։ կարկատել կը տամ, վաղը, միւս օր ձմեռ է, կարող է հագնել, ձիւնի ու ցեխի մէջ վազվզել։ Մեծ են, հաստ գուլպաներ կը հագնի ու չի մրսի։

Ես ուրախութեամբ վրա պրծայ, բարձրացրի ու նայում էի նրանց երկաթապատ կրունկներին ու ծալծալ վզերին։

Նրանք մեծ էին ու ծանր։ Երկուսի տակն էլ ծակ էին, կողքերը պատռւած... Բայց այդ ոչինչ, հայրս ասաւ, որ կարկատել կը տայ։

Ես երջանիկ էի, երբէք կօշիկ չէի հագել։ Էլ համբերել չը կարողացայ, որ ձմեռը հասնի։ Հէնց որ հայրս հեռացաւ, ես այդ ահագին կօշիկները ոտներս քաշեցի և դուրս եկայ։

Աշխատում էի լաւ քայլել։ Ցոյս ունէի, թէ գուցէ և ճաճանչ, բայց ո՞րտեղ... Ներանք միայն անախորժ քթքթոց էին հանում, ուրիշ ոչինչ։

Ուզում էի ամենքը տեսնեն, որ ես կօշիկներ ունեմ։ Հակառակն պէս փողոցում ոչ ոք չը կար։

Ճանկարծ մի անկիւնից դուրս թռաւ մեր հարևանի տղայ Բարսեղը։

Ես աչքս չէի հեռացնում նրա աչքերից և սպասում էի թէ ինչ կասի կօշիկներիս համար։ Տեսայ նա ոչինչ չի ասում, ես ասի.

— Տես, Բարսեղ, հայրս բերեց քաղաքից։

— Չհանդամը թէ բերեց... Ջինւորի հին կօշիկներ են,—աւելացրեց նա արհամարհական ձևով։

Այս չար խօսքերն ինձ աւելի վիրաւորեցին, քան, եթէ Բարսեղը մի հարւած տար գլխիս։

1. Ի՞նչպիսի տղայ էր Բարսեղը։ 2. Ի՞նչպիսի տղայ էր Վարդանը։

Ա ռ ա ծ.—Ծորնէ հաց չունես, ցորնէ լեզու ունեցի։

55. Գայլի յուղերը

Յուլիսեան մի շոգ օր, գայլը կերել, յղփացել էր ու պառկել էր մի աւերակ գաղջակի յարկի տակ: Յոգնածութիւնից յօրանգում էր ու ննջում իր գլխով անկածը:

Յունիսին շարութիւնի մոլին յանիշդակի—գայլը մրմնջում էր նա,— յուլիսին յոմիանէսի մահին: Երկու օրից յետոյ յարշակեցի շոմակի գառների վրայ, մէկին յօղոտեցի, միւսին փաղ տի չորը: Բայց անպիտանի յաղթանդամ, յամառ ղունը ինչ մնաց բուրդս գկէր: Յաջորդ օրը պատահեցի մէր շոմէրենց յիմար իշին, բռնեցի բկիս ու խեղդեցի..

ՎԱՐԺՈՒԹԻՒՆ.— (պատասխանը գրել առանց գրքի):

1. Յուլիսեան մի օրզ որ գայլն ի՞նչ էր արել, ո՞րտեղ էր պառկել:
2. Նա յոգնածութիւնից ի՞նչ էր անում ու ի՞նչ էր յիշում:
3. Ի՞նչ էր մտածում նա:
4. Երկու օրից յետոյ էլ ի՞նչ արեց:
5. Բայց անպիտանի յաղթանդամ, յամառ օրզը ինչ մնաց ի՞նչ անէր:
6. Յաջորդ օրն ո՞ւմ պատահեց եւ ի՞նչ արեց:

56. Գերի Առիւծը

Անապատները շրջող, անտառները ոտի տակ առող և ազատութեան մէջ մեծացած խրոխտ Առիւծը թակարդն ընկաւ:

Անտառից ելել, որս էր որոնում նա, երբ յանկարծ դլորւեց և ընկաւ մի ցանցի մէջ: Ցանցը մի բոպէում բռնեց, կաշկանդեց նրան ու քաշեց, կծիկ դարձրեց:

Առիւծը մռնչաց, կատաղեց, ոստոստաց, կապերը կրծոտեց: Ինչքան ոյժ ունէր՝ գալարւեց, բայց ոչ շղթան փշրւեց և ոչ էլ ցանցը պատռւեց:

Անտառների հերոսը, կենդանիների արքան գերի էր: Նա իր կեանքում երբէք կապեր չէր տեսել, արդելքի առաջ գլուխ չէր ծռել:

Ազատ ծնւել, ազատ մնւել ու ազատ ապրել էր նա: Աշխարհն ամբողջ ոտնատակ էր տւել նա, և յանկարծ—այժմ կծկւած, ցանցի մէջ ընկած, չէր իմանում ո՞վ էր նրան այդ դառնութիւնը հասցրել:

Մռնչաց, ժամերով ճիգ թափեց, որ ազատւի, բայց վերջը յուսահատ, աչքերը փակած, գլուխը ցած գցած, բոլն իջեցրած սկսեց խորհել:

Զարմանալի էր նա... ո՞ւմն էր այդ ոյժը, իր ոյժից բարձր, այդքան խորամանկ և այդքան ճարպիկ:

Ո՞ւմն էր այդ շանթող ձեռքը, որ աներեւոյթ պարզւեց դէպ իրեն և գերի բռնեց...

Ու նա վեր նայեց... ցանցից մի քանի քայլ հեռու, մի մարդ նշմարեց:

Մարդն էր այն չնչին արարածը, որ առանձնեակներով էր նա պատռոտել և որն այժմ այնտեղ, ցանցի կապը ձեռին, նայում էր իր թանգագին որսին, նայում էր ու հրճւում:

Ելաւ Առիւծը, ուզեց ցատկել, այն յանդուգն հրճւողին պատառ-պատառ անել, փշրել, ոորրել... բայց մարդը կապը ձգեց, ցանցը կուչ եկաւ ու Առիւծը աւելի սղմւեց:


Օ՜հ, ինչ անկում, ինչպիսի վիճակ... խաղալիք լինել մի մարդու ձեռքի... ենթարկւել ծաղրի... մահ էր ազատ Առիւծի համար:

Ու Առիւծը դառնացած՝ լաց եղաւ, նրա լացից անտառը դողաց, ժայռերը հնչեցին, դաշտերը թնդացին: Ոչինչ չէր օգնի նրան, նա գերի էր...

Մարդու ի՞նչն է երեւում առիւծի գեղարեստ մէջ:

Խրոխտ—հպարտ:
կաշկանդել—կապել, կապկպել:
գալարւել—կուչ ու ձիգ գալ:
հերոս—քաջ, էգիթ:
ճիգ թափել—շատ աշխատել:
քաշ—վզի մազ:
շանթող—այրող:
նշմարել—նկատել:
հրճւել—ուրախանալ:
յանդուգն—համարձակ:
սղմւել—հուպ տալ:
ենթարկւել—ազդւել:

57. Գետակն ու ուռիները



Ինչքա՜ն, փչփչա՜ց, փրփուր տուե՜ց, փրփրե՜ց, ուռա՜, բարձրացա՜ւ գետակը։ Դուրս եկաւ իր ափերից, գնա՜ց, հասա՜ւ մինչև ծեր ուռիների տակը։

Գոռում՜, գոչում՜ էր նա ու պարծենում.

— Ա՛յ թէ ինչ եմ դառել, էլ ինձ հետ հանաք անել չի լինի։ Բոլորը կը քշեմ կը տանեմ... Է՛յ, կամուրջ, ճամբա տո՛ւր, ես եմ գալիս, ես...

Ու ելա՜ւ, բարձրացա՜ւ գետակը, քշեց իր վրայի տախտակէ կամուրջը ու պարծենալով ասա՜ւ.

—Դէ թող հիմա էլ սիրա անեն ու անցնեն... համա ինչ կանցնեն... Չէ մի նոր կամուրջ էլ կը շինեն, չեմ թողնի քարը քարի վրա դնեն։

Ու գետակը հանելով ափից հեռու եղած ծեր ուռիներին,—ասա՜ւ.

— Էյ, ուռիներ, հեռացէք ճամբից, թէ չէ՝ ես րոպէիս ձեզ էլ արմատահան կանեմ։

— Շատ մի պարծենա, ա՛յ ինքնահաւան,—պատասխանեցին նրան ուռիները,—առաջին տարին չէ, որ մենք այստեղ ենք։ Առաջին անգամը չէ, որ մենք քեզ տեսնում ենք։ Մեզ չես վախեցնի քո յորձանքներով... կապրենք ու կը տեսնենք թէ ո՞ւմ մայրը լաց կը լինի յետոյ։

Եւ ճիշտ որ, մի երկու շաբաթից յետոյ՝ գետակը բոլորովին փոխւեց, ջուրը պակասեց ու նա ձայնը կտրած բռնեց իր բարակ ճամբէն։

Ուռիները նրա վրա ծիծաղեցին ու ասացին.

— Տե՛ս, գետակ, ձայնդ փորդ է ընկել։ Այդ քեզ խրատ, որ գոնէ եկող տարի չը պարծենաս։ Ջահելութիւնը լաւ բան է, բայց և խոհեմութիւնն աւելի լաւ բան է...

Պարծենալ—մեծ-մեծ խօսել։
ինքնահաւան—միայն իրեն հաւանող։
յորձանք—ալիք։
խոհեմութիւն—համեստութիւն։

ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆ.—(պատասխանը գրել առանց գրքի)։

1. Ի՞նչ արաւ գետակը։ 2. Ո՞րտեղից դուրս եկաւ, գնաց մինչեւ ո՞ւր հասաւ։ 3. Գոռում, գոչում էր նա եւ ի՞նչ էր պարծենում։ 4. Ի՞նչ ասաւ կամուրջին ու ի՞նչ արաւ նրան ու յետոյ ի՞նչ ասաւ։ 5. Երբ հասաւ ծեր ուռիներին, ի՞նչ ասաւ նրանց։ 6. Ի՞նչ պատասխանեցին ծեր ուռիները։ 7. Մի երկու շաբաթից յետոյ գետակն ի՞նչ եղաւ։ 8. Ի՞նչ ասացին ուռիները նրան։

58. Փշի գերեզմանը

Կառ փուշը գլուխը անկած, փշերը փռած, փշերը սրած, ուռած ու փքւած, ինքն իրեն ասում էր.

— Ես այս դաշտի իշխանն եմ, ո՛վ կը համարձակւի ինձ ձեռք տալ։ Ես քանի-քանի քիթ եմ ծակել, քանի կովի, եզան ու գոմշի լեզու կծել։ Քանիսի ձեռքից, քանիսի ոտքից արիւն եմ հանել։ Ճիշտ որ, եթէ ես իմ քաջութիւնները համարելու լինեմ՝ քաջերի քաջն եմ, խաների խանն եմ։ Իսկ թէ ինչ կանեմ սրանից յետոյ՝ էն էլ ես գիտեմ։ Ես վճռել եմ ով մօտիցս անցնի՝

Քաշեմ, մաշեմ, աղեմ, գաղեմ,
Լեզւի միջին փուշս թաղեմ։
Թող թռթռան, թո՛ղ մռմռան,
Ես ծիծաղեմ, ես հռհռամ։

Երբ կովերն անցնում էին կառ-փշի մօտով՝ խէթ-խէթ նայում էին նրան ու միմեանց զգուշացնում.



—Զր մօտենաս էս հպարտին, կծել գիտէ, կծան է, չես կարող դու բերանդ առնել, ո՛չ տրորել, ո՛չ ծամել...

Ոչխարներն ասում էին.—

— Բուրդներս կը քաշի, թո՛ղ կորչի էս կառը, գլուխը մեծ քարը։

Ծուղն ասում էր.—

— Արմատ կը քանդէի, քեզ կը հանէի, բայց չարժէ, որ դունչս կեղտոտեմ։ Գնա՛ կորի, ո՛վ պէտք է փորի։

Բայց կառ փուշը գլուխը անկած իր երգն էր երգում...

Քաշեմ, մաշեմ, աղեմ, գաղեմ,
Լեզւի միջին փուշս թաղեմ։
Թո՛ղ թռթռան, թո՛ղ մռմռան,
Ես ծիծաղեմ, ես հռհռամ։

Ու մէկ էլ եկաւ էշը, վիզը երկարացրեց, ըռնեց փշի ցից գլուխը, լամեց, լամլմեց, ծամեց-ծամծմեց, կուլ տուեց ու ասաւ։

— Փշի գերեզմանը՝ իշի փորն է...

Կառ—փուշ է, փշի տեսակն է։
մռմռալ—ցաւ զգալ։
Ա ռ ա ծ.— Պարծեցողը՝ պարկը կը մանի։

59. Հին Արաբը

Հին Արաբը անյիշելի ժամանակներից կուռում էր եկերի հետ և դժգոհ էր իր բնակած տեղից։

Երբեմն լեռնային գօրիները խախուտում էին և բայց էր լինում Արաբի առջև լայն, ընդարձակ տարածութիւն։

Այդ միջոցին նա, չար վիշապի նման անխնայ, ոդողում, յեղյեղում էր իր ափերը և իբրև մի ահռելի հսկայ երբեմն դէպի ազ էր թեքւում, երբեմն դէպի հյս։

Նա իր ապաստութիւնը վայելել չը գիտէը։ Յանկարծ խլում էր ցամաքից մի կտոր հող և ինչպէս մի երեխայ՝ փայփայում էր իր խաղալիքը։

ՎԱՐԺՈՒԹԻՒՆ.—(պատասխանը գրել առանց գրքի)։

1. Հին Արաբը ո՞ւմ հետ էր կուռում։
2. Նա ի՞նչ էր իր շուրջից։
3. Երբեմն լեռնային գօրիները ի՞նչ էին լինում, եւ ի՞նչ էր բացւում Արաբի առջև։
4. Այդ միջոցին նա չար վիշապի նման ի՞նչ էր անում։
5. Նա իր ազատութիւնը ի՞նչ անել չը գիտէր։
6. Ցանկարծ ի՞նչ էր խլում ցամաքից եւ ի՞նչ էր անում։

60. Նա փոխուել էր

Ա.

Մայրը մի քանի օր շարունակ իր մինուճար որդուց նամակ չէը ստանում։ Նրա որդին սովորում էր քաղաքի դպրոցներից մէկում։

—Ա՛յ մարդ,—ասաւ նա իր ամուսնուն,—ի սէր Աստծու, էսօր գնա քաղաք, մեր Լևոնից մի տեղեկութիւն բեր։ Ինչ է ծում ես խելագարւեմ։

Հայրը, որ նոյնպէս անհանգիստ էր, միւս առաւօտ գնաց քաղաք որդուն տեսնելու։

Նա սրտի թրթռոցով հէնց որ մօտեցաւ դպրոցին, դռան շէմքին պատահեց Լևոնենց դասարանի դասախարակին։

— Լևոնը տկար է,—շփոթւած հարցրեց հայրը,—խնդրեմ մի տեղեկութիւն տաք ինձ։

— Ո՛չ, բոլորովին առողջ է,—պատասխանեց դասախարակը,—բայց սաստիկ ծոյլ է և ոչ մի առաջադիմութիւն չի ցոյց տալիս ուսման մէջ։ Նա շարունակ փախչում է դասընելու, ոչ յորդորը և ոչ էլ պատիժը չեն ազդում նրան։ Աւելի լաւ կը լինի, որ նրան դպրոցից հանէք և մի որևէ արհեստի տաք։ Արհեստի մէջ գուցէ աւելի ընդունակ լինի։

— Մի՞թէ Լևոնին չի կարելի ուղղել...մի՞թէ նա այդքան անպէտ քացել է,—խօսեց վշտացած հայրը։

— Ցաւում եմ, որ չի կարելի,— ասաւ դասախարակը,—և չեմ ուզում ձեզ խաբել։ Ուզում էք հարցրէք այս եկող երկու ուսուցիչներին։

Դժբախտ հայրը նրանցից էլ նոյն կարծիքը լսեց իր որդու մասին։

Բ.

Լևոնը եկաւ հօր մօտ։ Նա արդէն գիտէը թէ ուսուցիչներն իրեն մասին ինչ կարծիքներ են յայտնել հօրը։

— Արի՛ ինձ հետ,—ասաւ հայրը մռայլ դէմքով։

Լևոնը լուռ հետևեց հօրը։ Նրանք անցան մի քանի փողոց, վերջապէս հայրը մտաւ մի կօշկակարի արհեստանոց։

Որդին հասկացաւ թէ բանն ինչումն է։

— Ի՞նչ էք կամենում, պարոն,—հարցրեց վարպետը։

— Ես... ես որդուս... բերել եմ ձեզ մօտ... ու լացը խեղդեց, նա հեկեկալով ընկաւ աթոռի վրա։

Լևոնը մօտ վազեց և չոքեց հօր առաջ։

— Հայրի՛կ, ների՛ր ինձ,—ասում էր նա դողդոջուն ձայնով,—երդւում եմ, որ կաշխատեմ լաւ սովորել։ Հայրի՛կ, մի՛ լաց լինի, ես չեմ կարող քո արտասուքները տեսնել։

— Էլ ուշ է, Լևոն, դու պէտք է մի նոր գործ սկսես, դու անարժան ես ուսում և կրթութիւն ստանալու,—ասաւ լրջութեամբ հայրը։

Այս խօսքերը ծանր հարուածներ էին Լևոնի համար։ Նա դունատուեց, ցնցուեց, խուլ հեկեկանքով ընկաւ յատակի վրա և ուշաթափուեց...

Մի շաբաթից յետոյ, երբ նա դուրս եկաւ հիւանդանոցից՝ նորից գնում էր դպրոց։ Ուսուցիչները զարմանում էին Լևոնի առաջադիմութեան վրա։ Նա բոլորովին փոխուել էր։

1. Ի՞նչպիսի տղայ էր Լեւոնը։ 2. Հայրն ի՞նչպիսի մարդ էր։

Խելագարուել—ցնդուել, խելքը կորցնել։ | *մոայլ դէմք*—բարկացած դէմք։
յորդոր—խրախուսանք։ | *ցնցուել*—վեր թռչել։

Առած.— Լաւ է ուշ, քան ոչ երբէք։

61. Յարիկուն

Ժամէժանքի զանգեր զարկին,
զընգզընգալէն, անուշ, անուշ...
Մութը իջաւ մեր աշխարհքին,
դողդողալէն, անուշ, անուշ։

—

Լուսինն ելաւ ցոլաց վերից,
պըլպըլալէն, անուշ, անուշ...
Գառներն եկան բարձր սարից,
թըռուռալէն, անուշ, անուշ։

—

Բլբուլ ծառին կանգնեց, երգեց,
շըշըլալէն, անուշ, անուշ...
Դաշտ ու անտառ ձէնով լցուեց,
մըղմըղալէն, անուշ, անուշ...

Պատմեցէք այս ոտանաւորը ձեր խօսքերով

Ժամէժանքի—եկեղեցեան։ | *ցոլաց*—փայլեց։

Ա ս ե լ ո ւ կ.

Ալիւրը մենք մաղեցինք,
մի տես, գաթան ով կերաւ։
Խմորը մենք շաղեցինք,
տես փախլաւան ով կերաւ։

62. Ուևաևը զոչաց

Ա.

Լամպը աղօտ լոյս էր սփռում խանութի դարակներին։ Ունանը խանութում հօրն էր սպասում։

— Բարի երեկոյ,—ներս մտնելով ասաւ մի կօշկակար։

— Աստծու բարին, վարպետ, ինչ էք կամենում,—հարցրեց Ունանը։

— Մի զրւանքայ կօշկի մանր մեխ կշռեցէք,—ասաւ վարպետը և սկսեց այս ու այն ապրանքին նայել։

Պատանին տեսաւ, որ վարպետը չի նայում իրեն, մեխը պակաս կշռեց, փաթաթեց թղթի մէջ ու տուաւ կօշկակարին։ Կօշկակարը վերցրեց ու դնաց։ Ունանի հայրն եկաւ։

— Բան-ման ծախեցիր, Ունան,—հարցրեց նա։

— Կէս զրւանքայ կօշկի մանր մեխ ծախեցի, հայրիկ, առ փողը.— Ունանը չասաւ, որ ինքը խաբել է կօշկակարին, նա գիտէր, որ հայրը դժգոհ կը մնայ այդ բանից։

— Հայրիկ, կօշիկ բերիր ինձ համար,—հարցրեց պատանին.

— Ո՛չ, Ունան, նայեցի պատրաստի կօշիկները լաւերը չէին, չառայ։ Խանութը փակիր, գնանք մեր կօշկակարներից մէկն ու մէկին պատւէր տանք, կարեն,—պատասխանեց հայրը։

Խանութը փակեցին ու գնացին։

Բ.

Լայն փողոցով հայրն ու Ունանը գնացին մտան մի նեղ փողոց։ Այդ փողոցի ծայրին էր գտնւում կօշկակարի աբհեստանոցը։

Դուռը բացելուն պէս վարպետը վեր բարձրացրեց իր դունատ դէմքը, ձեռքի գործը դրեց սեղանին ու նայեց ներս մտնողներին։

Ունանն իսկոյն ճանաչեց, որ սա իր խաբած վարպետն է։

— Ինչ էք կամենում,—հարցրեց վարպետը հազալով։

— Եկել եմ, վարպետ, այս տղայիս համար կօշիկներ պատւիրեմ,—ասաւ Ունանի հայրը,—խնդրեմ չափը վերցնէք,—թող լաւը լինի, գնի մասին չեմ խօսի։

Մինչև կօշկակարը Ունանի ոտքն էր չափում, Ունանը նայում էր իր շուրջը։

Մութն էր, կեղտոտ ու ցուրտ. խոնաւութեան ու կաշու հոտ էր գալիս չորս կողմից։ Ունանը նորից յիշեց իր վարմունքը և սկսեց կարմրել...

— Էս ինչ ցուրտ է այստեղ, վարպետ,— ասաւ Ունանի հայրը։

— Ինչ անեմ, փայտը թանգ է, ամեն օր չեմ կարողանում վառարանը վառել։ Երեխաներս ցրտից անկողին են մտել, իսկ կինս հիւանդ պառկած է, ոսկրացաւ ունի և սաստիկ հազում է,— պատասխանեց վարպետը հառաչելով։

Վարպետի պատասխանը շատ տպաւորիչ էր։ Ունանն այս անգամ ուղղակի խղճաց այդ ընտանիքին, մի րոպէ չէր մոռանում թէ ինչպէս ինքը կշեռքի մէջ խաբել էր այդ ընտանիքի հաց աշխատողին։

Պատանու սիրտը արդարում էր, քիչ էր մնում լաց լինէր։ Ու մէկ էլ՝ ձեռքը ծածուկ տարաւ գրպանը, հանեց մի տաս կոպէկանոց ու տւեց վարպետին, ասելով.

— Վերցրէք, վարպետ. այստեղ էր ընկած։

Ունանը որ դուրս եկաւ փողոց՝ ազատ շունչ քաշեց և վճռեց, որ էլ երբէք ոչ ոքի չը խաբի, որպէսզի խղճի խայթ չըզգայ։ Ունանը զըմայեցել էր ի սրտէ։

1. Ի՞նչպիսի տղայ էր Ունանը։
2. Ի՞նչպիսի մարդ էր Ունանի հայրը։

Աղօտ լոյս—թոյլ լոյս։	*զունատ*—գոյնից ընկած։
կշռել—կշեռքով քաշել։	*խղճի խայթ*—հոգուս անհանգստութիւն։
դժգոհ—անբաւական։	*զըմայել*—մեղայ գալ։

63. Խրճիթում

Մանուկները գոռում-գոչում,
լալիս էին աղեկէզ.
—Նանի՛, նանի՛, հաց ենք ուզում,
վէր կաց, նանի՛, հաց տուր մեզ։
Արեւն եկաւ, անց էլ կացաւ,
մենք սոված ենք գետ էսպէս,
նանի՛, նանի՛ հաց ենք ուզում,
վէր կաց, նանի՛, հաց տուր մեզ։
Հիւանդ նանը տեղի տակին
ծանր անքաց տխրալի.
—Ինչ էլ կացէք, իմ բալիկները,
տալին ոնաց՝ հաց բերի։

Պատմեցէք այս ոտանաւորը ձեր խօսքերով,

Աղեկէզ լալ—սիրտը ճաքելով լաց լինել։

Ա ա ա ծ.— Եղած օրը՝ բուռը բուռը, չեղած օրը՝ խալխի դուռը։

64. Մեր դասը

— Աստո՛, ասպա մի խոնի բառ ասա՛, որ ազիզ չաթ կարդանի, չաթիզ ազ, նոյնը լինի, ասաւ Սիրան։

— Քաղաք, ասա, ագա, ասպա,— ասաւ Աստան։

— Ինանա՛, ասպա դու էլ այնպիսի բառեր ասա՛, որոնց վերջը „ա" և „ո" պառերից յետոյ „յ" չի գրւում։

— Այդ ես այսօրւայ մեր դասն էր, այ, սրանի են. — ասա, դա, նա, սրա դրա, նրա, ֆո, այո, ասպա։

ՎԱՐԺՈՒԹԻՒՆ.— (պատասխանը գրել առանց գրքի)։

1. Ի՞նչ ասաւ Աբաղ Սառային։
2. Ի՞նչ պատասխանեց Սառան։
3. Ի՞նչ հարցրին Անուային։
4. Ի՞նչ պատասխանեց Անուան։

65. Մօր օգնականները

Մի պայծառ ու խաղաղ առաւօտ էր, երբ Պետրոսեանները իրենց եղբայրների հետ Թիֆլիսի կայարանից երկու կառքով մտնում էին քաղաք։ Երեխաները հետաքրքրութեամբ նայում էին իրենց շուրջը. էլէկտրական շերի զանգերը, կառքերի արագ ընթացքը, մանրավաճառների կանչերը, գեղեցիկ տները և բարձր ծառերը, առաւօտեան թարմութեան մէջ այն-

քան հրապուրիչ էին երևում նրանց, որ Սուրիկը, Շուշիկն ու Միհրանը անդադար հարցեր էին տալիս ծնողներին և բացականչում։

Մինչև բնակարան գտնելը Պետրոսեաններդ տեղաւորուեցին մի հիւրանոցում։

Մի կերպ երեխաներին թէյ տալուց և կերակրելուց յետոյ, Աննան ու Բագրատը գնացին բնակարան վարձելու։

Դանդաղ քայլերով նրանք ման էին գալիս փողոցէ-փողոց։ Ուր որ յայտարարութիւն էր կպցրած լինում դռներին կամ ապիտակ թղթի կտորներ՝ պատուհաններին, նրանք մտնում, նայում էին սենեակները։ Բայց ազատ բնակարաններ քիչ կային, այն էլ շատ թանգ։ Այդ օրը նրանք յոգնած էին և շուտ վերադարձան հիւրանոց, երեխաների մօտ։

Միւս օրը կրկին ման եկան տուն գտնելու։ Վերջապէս նրանք գըտան երկու սենեակ և խոհանոց։

Անցաւ մի քանի շաբաթ։ Բագրատը դեռ անգործ էր, զուր դիմում էր սրան-նրան, բայց ոչ մի պաշտօն չէր գտնում։ Օրէցօր նա աւելի և աւելի յուսահատւում էր, որովհետև ապրուստի փողը պակասում էր։ Քաղաքի ծախսերն էլ շատ էին։ Կինը տեսնելով ամուսնու նեղութիւնը, յայտնեց, որ կարող են տանը առանց ծառայի էլ կառավարել ու արձակեց ծառային։

—Մենք ինքներս էլ նրա արածը կարող ենք անել,—ասաւ Աննան.—ապրեն մեր պատիկները, երեքը մի ծառայի չափ էլ չը կան։

—Մենք կանենք, մենք,—կանչեցին երեխաները։


Աննան դժար էր ընտելանում իր նոր կեանքին։ Առաւօտները շուկայ գնալուց, ամբողջ օրը ոտի վրա կերակուր եփելուց, լացք անելուց յոգնում էր։ Փոքրերը նրան օգնում էին, ինչքան կարող էին, որը փայտ էր կրում, որը՝ ջուր, որն էլ տունն էր մաքրում։

Մի օր Բագրատը տուն վերադարձաւ գրեթէ հեալով։ Նա արագ մօտեցաւ Աննային ու խորհրդաւոր ձայնով յայտարարեց, որ պաշտօն է գտել։ Աննան այնպէս ուրախացաւ այդ առաջին աջողութեան վրա, որ համբուրեց Սուրիկին, Միհրանին և Շուշիկին։

Զարմանալի համով թւաց բոլորին այդ օրւայ ճաշը։ Երեխաները ծափ էին տալիս ու ասում.

—Մենք այսուհետև աւելի շատ բան կանենք, որ հայրիկի գործերն աւելի աջող գնան։

Ի՞նչպիսի երեխաներ էին Սուրիկը, Շուշիկն ու Միհրանը։



66. Զարհուրելի թագաւոր

Ա.

Վկայեցէք ինձ ադամանդներ,
երկար լեռներ, ժայռապատկերներ,
Էվ ձկնկիրճ, միշտ-վազվազուն,
Ծիծեռնակներ հաչա-ճաչ,
Էլ քոռ, կրկոռ, յոտոպ-պատոպ,
հոլիք արտող Գօգոռ, Գոգոռ,
Էլ պատիկ ծրտ, տատա աղբատիկ,
դեղձանիկ ու վայրի աստղատիկ,
Էլ գառնակներ, գող լաչափի,
ագռաւներ ու երգիչ սոխակ,
Էլ արտուտիկ, ճայ, բազ ու բազ,
արծիւ, բազէ, ծուռտ ու ցին
Անդի դիմեմ հաւաքեցէք։
Հաւաքեցէք գաշտան մի օր,
որ ընտրեմ ձեր թագաւոր։
Թագաւորը նա կը լինէր
ով որ բարձր թռիչք կանէր։

Հէնց որ աւին ադամանդն
նշանաւոր թէ անգոռն
թռչուններքը լքած անգոն,
դեպ ակրկինք համ վերադան։
Հօ հեռու չան չէր, ինչ էր կարծում,
սկսեր էր մի մեծ ծիրում։

Շատ թռչուններ թռյլ ու տկար,
չը դիմացան էնքան երկար.
թևերը կախ իջան սարին,—
աչքդ տեսնէր էգուեղ բարին...
Երբ արծիւը յաղթանակած
սև ամպերից գալիս էր ցած,—
Թռչունները ուրախացան
ծլվլոցով իրար անցան.—
—Կեցցէ՛, կեցցէ՛, արծիւ արքան,
որ բարձրացաւ տեսէք ինչքան,
նրա նման հզօր չը կայ,
նա թող ապրի, լինի արքայ։

Բ.

Էս մէջօջին, մէկ էլ յանկարծ,
երբ արծիւը գալիս էր ցած,—
Թևի տակից վիւ-վիւ, վիւ-վիւ,
դուրս սլացաւ մի պստիկ ծիւ...
Դուրս սլացաւ, ասաւ.— արի՛,
Թէ արծիւ ես, ինձ հետ Թռի...
Բայց որտեղից, արծիւն յոդնած,
հաւքերի մէջ ընկաւ ինաց։
Ծիւը արագ, թեթև, թեթև,
հա ճախրում էր դէպի վերև։
—Ամօթ, ամօ՛թ մեզ,մեր դասին,—
ամաչելով հաւքերն ասին.—
—Բա էսպէս էլ խայտառակ բան
պստիկ ծիւը լինի արքան...
Ծորհուրդ արին Թէ ինչ անեն,
որ էն ծաին արքայ չանեն։
Ասին, որ գայ իջնի սարին՝
ասեն էն սուտ Թագաւորին.—

—Լաւ իմանաս,
մինչև չերթաս
դու մի էնպէս
վայտ չը բերես՝
ոչ ծուռ լինի, ոչ էլ ուղիղ,
դու չես լինի օրինաւոր
Թռչունների տէր Թագաւոր։
Իջաւ սարին ծիւը վիւ-վիւ,
էնպէս պստիկ, էնպէս վախտ՝

իջաւ, ասաւ. «Ես եմ արքան,
Թող հաւքերը գան պատիւ տան։
Եւ հաւքերը միաբերան
ամեն կողմից ասին նրան.—

«Վիւ, վիւ, վիւ, վիւ,
այ պստիկ ծիւ,
լաւ իմանաս,—
մինչև չերթաս
դու մի էնպէս
վայտ չը բերես,—
ոչ ծուռ լինի, ոչ էլ ուղիղ,
դու չես լինի օրինաւոր
մեզ՝ հաւքերիս՝ տէր Թագաւոր։
—Վիւ-վիւ, վիւ-վիւ, ինչ էք ասում,
ես ձեր արքան, ձեզ եմ լսում...
Ձեր ուզածը մենակ այդ է,
չափարները լիքը վայտ է...
Իսկոյն, իսկոյն գնամ բերեմ,
գամ ձեզ վրա Թագաւորեմ։—
Ասաւ ու հոպ, Թռաւ, գնաց,
էն գնալն էր, գնաց ինաց...

Գ.

Էն օրւանից մինչև էսօր,
պստիկ ծիւը ոլոր-մոլոր,
սարին բոլոր,
սարին կլոր,
դէս դէն ընկած չափարներում
ուզած վայտն է միշտ որոնում,
որ գայ դառնայ օրինաւոր
Թռչունների տէր Թագաւոր։
Չափարներում՝ վիւ-վիւ, վիւ-վիւ
արքան դարձաւ Չափարածիւ։

Փաչա-փաչա—երկար ոտանի։
Հաչա-հաչա—երկճիւղ։
Հաւքեր—Թռչուններ։
ազդանշան—նշան։
վտիտ—լղար, նիհար։
չափար—փշէ ցանկապատ։

67. Տանը

Տանը ոչ ոք չը կար. մէկ էլ յանկարծ բարձրացաւ մի աղմուկ։ Ծօսում, վիճաբանում էին տան կամ-կարապետները։

— Օ՛ֆ, ափսոս, ամբողջ կեանքս այստեղ, այս տանը պէտք է անց կացնեմ, —ասաւ պահարանը,—անցաւ այն ժամանակը, երբ ես մի սիրուն, չահել ծառ էի, ոչ ոք չէի հալածում, եթէ ասեմ, որ ես, իմ արկղները, մէջքիս ու կողքիս տախտակները միևնոյն աճարի ծառիցն ենք։ Այժմ ինձ մի բան է մխիթարում, որ ես այս սենեակի զարդն եմ։

— Ներիցէք, պարոն պահարան,—կանչեց ընկուզէ գրասեղանը,—ինձ ինչի՞ տեղ ես դնում։ Պարծեցէք ինչքան կուզես, բայց ուրիշի պատիւն էլ ճանաչիր։ Ես լուսամուտի դիմաց եմ, մի գեղեցիկ այգու մէջ. ճիւղերիս վրա երգում էին թռչունները։ Ծոն օրերին աղջիկ ու տղայ հաւաքւում էին իմ տակերի տակ, պար էին բռնում ու երգում։ Ա՜խ, ինչքան երջանիկ էի ես այն ժամանակ։

— Լաւ կը լինի երկուսդ էլ լռէք,—բարկացաւ տան յատակը,—երկուսդ էլ ապրել էք դիւղում և ոչինչ չէք տեսել ձեր կեանքում։ Ա՛յ, ուրիշ բան եմ ես։ Եղևնի էի սարերի մէջ, ամեն անգամ տեսնում էի պայծառ արևի արշալոյսն ու վերջալոյսը։ Առաւօտ դիւղեր տեսնում էի լուսինն ու աստղերը, տեսնում էր ինչպէս կայծակը փայլում էր ամպերի մէջ։ Ա՛յ, ես այսպիսի բաներ եմ տեսել։ Քամին էլ ինձ չէր յաղթում... Իմ փայտից ջութակ են շինում։ Ա՜խեթ դուք ջութակ էլ չէք լինի տեսած։

— Գիտենք, գիտենք այն էլ գիտենք, որ քո փայտից դազաղ էլ են շինում... Հիմա էլ դուք ամէնքդ իրար յատակ։ Դուք, պարոն պահարան և պարոն սղոցանկիւնագիծ-գրասեղան-անցաք,—ասաւ կաղնե դուռը,—ես որ չը լինեմ՝ դուք ոչինչ էք լինէք։ Գիտէք ես ով եմ... Կաղնին եմ, հաստատուն կաղնին։ Իմ փայտից ծառեր են շինում, իմ գերանները՝ տներ են ծածկում, ինձ պատպատում։

— Շատ մի խօսեցր,—ընդհատեց գրասեղանը,—դու...

Ու դեռ բառերը բերանը չը վերջացրած,—

— Լռիր, լայն բերան,—ընդհատեց նորէն մարմարէ սեղանը,—դուռը ճիշտ է ասում, կաղնին արժանի է իսկ ես, գիտէք, մարմարից եմ. մարմարից շինում են արձաններ, անօթներ և ուրիշ շատ թանգագին բաներ։

Բոլորից յետոյ խօսեց յատակը.

— Ես մի հայտնի գաւառուկ էի. արածում էի կանաչ դաշտերում։ Խմում էի սառն աղբիւրների ջուրը և լսում էի հովի քաղցր սրինգը։

Իմ ինչ, դուք կարծում էք, մենակ գոքը ես եղել։ Ես, ինձ մօրեղբայրս, մամիս կերան բաւական չէր, հարսն էլ այրեցաւ ինձ։

Ինչ չէին թօսել տան մէջ պարտիները, թէ յատկապէս դուռը ճրոճաց։ Ուշն ուռաւ տանտիկինն ու խօրը լռեցին։

Ի՜նչ կասէր գորգը, լամպը, ինքնաեռը, բաժակը... Թէ ինչ ի՜նչ է եղել պատահ։

68. Հուշ

Ցաւի հովանին, սրերի ղիրեն,
Մխուր ողբերգակ աղիների գալիճն,
Հաճելի դիրքը գրուբար կանայով,
Մի սխալների գեղեցկութիւնով
Միշտ ասում են ձեզ,—ոմ դու անկատար,
Որ խնդիանաստան դու ճանապարհորդ,
Ինչու չես գալիս այս հատարատար
Բարդեան լինում մանանակով կորդ։

ՎԱՐԺՈՒԹԻՒՆ.—(պատասխանը գրել մատանի գրքի)։

1. Ինչ՞ու ես միշտ ասում ինձ։ 2. Ինչ, ես ասում ինձ։

69. Պարտքի տեղ

Ցերեկ ամուր հանչաց ու ներս մտաւ Ապրօն ալիւրի պատիկը տխուր։ Ապրօն իր բերը ցած դնելով մօտիկում մարտ ու հառաչանքով ասաւ

— Նանի, էդուց գնալու եմ ծառայութեան։ Խոյիկը մը տուր մայրը՝ եղաւումը։

— Ծառայութեան, էլի... հօրս պարտքի փոխը։

— Վայ քոռնամ ես, էդ ինչ ասիր, որդի... էդ ով ասաւ քեզ...

— Քօխւէն, Սահակ քօխւէն,— պատասխանեց Ապրօն և շարունակեց։

— Ալիւրը մէջքիս գալիս էի, մէկ էլ տեսնեմ՝ մինը հասկցս ձէն է տալիս։ Շուռ եկայ, տեսնեմ քօխւէն է։ Մօտ գնացի, ու դեռ խօսք չասած, նա ասաւ, որ Մակիչ աղէն գանգատ է արել ու մեզանից հօրս թողած պարտքը ուզում է։ Քօխւէն թէ՝ որդի, աշխարհի օրէնք է, հօր պարտքը որդիքն են տալիս, համի էլ դու, հասակով տղայ ես, ինչի՞ ես թողնում, որ քո հօրը շուտ շուտ յիշեն, գնա որդի, մի երկու տարի ծառայի Մկրտիչ աղին, համ հօրդ պարտքից կազատուես, համ էլ վերջը մի քանի մանէթ փող կաշխատես ձեզ համար։

— Ախր պարտքի տալը մի հետ կը լինի թէ տասներկու հետ... Ախր հէրդ նրա պարտքը ուել, պրծել է իր ժամանակին, էլ ինչ է ուզում։ մեզանից,— ասաւ Եզոսմն ու ակսեց աչքերից արցունքներ թափել։

— Էլ ինչ ես լաց լինում, նանի, ինչով կարող ենք ազատուել էն գայլի ձեռից, լաւն էն չի՞, որ մի բանով վերջ տանք... Բա լաւ է, որ ամեն պատահած ժամանակ քո ճամբէն կորի ու քեզ նեղութիւն տայ... Էն ինչ է բերել քո գլխին ձորի թաղում, էն ո՞նց է վախեցրել, լեզու պատառ արել մեր Հեղուշին։ Խեղճ քոյրս ինչով էր մեղաւոր նրա առաջ։ Մի տես, գոյնը թռել՝ սպիտակ կտաւ է դառել։

— Ո՞վ ասաւ քեզ, Ապրօ։

— Ով ասաւ, ասաւ... Չէ, նանի, որ իմանամ թէ Մակիչը հէնց սուտ է ասում, էլի չեմ թողնի, որ նա ամեն անգամ հօրս անունը յիշի... կերթամ, մի երկու տարի ծառայութիւն կանեմ, կազատուենք նրանից։

— Բա՞ մենք, բա՞ էս երեխէքը... Ախր դու էլ որանցից մէկը չես, քո ինչ ծառայութեան ժամանակն է, որդի...

— Ինչքան կարողանամ, էնքան էլ կը ծառայեմ, կախելու հօ չեն ինձ։

Այս խօսակցութեան ժամանակ մայր ու որդի չէին նկատել թէ՝ ինչպէս Հեղուշը լսելով եղբօր խօսքերը, քաշուել էր պատի տակն ու հոնգուր-հոնգոր լաց էր լինում։ Մէկ էլ, Ապրօն լսելով նրա լացի ձայնը, մօտ գնաց ու ասաւ Հեղուշին.

— Հեղուշ ջան, լաց մի լինի. դու նանին կօգնես իմ տեղ, ես էլ կերթամ մեր հօր տեղ աղի դռանը ծառայութիւն կանեմ, մինչև որ Աստուած ողորմած է, մի դուռը կը բացւի մեզ համար։

Ու տասներկու տարեկան Ապրօի ձայնը լսւում էր այնպէս հաստատ, նրա խօսքերը ամենքի վրայ թողնում էին այնպիսի լուրջ տպաւորութիւն, որ ասես թէ խօսողը քսան տարեկան տղայ լինէը։

Հեղուշը գրկելով եղբօրը, կրկնում էր անդադար.—

— Չէ, Ապրօ ջան, մի գնա, չէ, Մակիչը վատ մարդ է, քեզ կը ծեծի, կը թակի, հաց չի տայ որ ուտես...

Բ.

Այդ օրից հազիւ անցել էր մի ամիս... Ապրօից ոչ մի լուր չը կար։ Նա գնացել էր հօր պարտքը իր ծառայութիւնով վճարելու։

Նա Մակիչ աղայի հորթարածն էր սարումը։ Եղումը՝ օրը մէկ էր, տան անգամ լաց էր լինում իրենց հետ պատահած այդ դժբախտութեան համար։ Երեխաները Ապրօին յիշելով անդադար կրկնում էին.

— Արի, արի, Ապրօ, արի մեզ համար ալիւր բեր, հաց բեր։

Իսկ Հեղուշն այլևս իրան չը պարզեց, Մակիչի ահն ու սարսափը սրտումը, ընկել էր անկողին։ Նա օր-օրի վրա նւազում, մաշւում ու մանաւանդ եղբօրը տեսնելու ցանկութեամբ տանջւում էր։

Բայց այդ ցանկութիւնն էլ մնաց անկատար...

Մի առաւօտ, երբ Նալբանդենց դուռը լիքը հարևաններ էին հաւաքւել ու խնկի ծխի մէջ շրջապատել էին Հեղուշի անխօս մարմինը, մի թուրք հովիւ մօտեցաւ նրանց ու խուրջինից հանելով մի գլուխ պանիր, տւեց Ապրօի մօրեղբօրն ու ասաւ.

— Ախպէր, էս պանիրը Ապրօն է ուղարկել քրոջ համար, տւէք նրանց։ Բակում հաւաքւածները լսելով թուրքի խօսքերը, ցաւելով ասում էին մէկ-մէկու.

— Խեղճ տղայ, ինչ էլիր իմանում թէ քո ուղարկած պանիրը քրոջդ ժամահացին է պէտք գալու։

Իսկ Ապրօի փոքրիկ քոյրն ու եղբայրը, տեսնելով պանիրը՝ կրկնում էին անդադար.

— Ջան, ջան, Ապրօն մեզ համար պանիր է ուղարկել, պանիր։

վճարել—տալ։ | սարսափ—երկիւղ, վախ։

70. Դեղձանիկն ու տատրակիկը

Դիղձանիկը մի թակարդում
զարնըւում էր ու թըրփըրտում։
Մի տատրակիկ՝
պուճուր ձագիկ՝
ծիծաղում էր նրա վրա.
—Բա ամօթ չէ՞,—
ասում էր նա,—
օր-ցերեկով,
բաց-բաց աչքով
ընկար այդպէս
դու կոյրի պէս։
Ես լինէի,
չէի խաբւի,
իմ արևը...»
Մին էլ, ըհը՛,
ոտն ու թևը
սրնապանծը
գցեց ցանցը։
Տեղն էր, տեղը այն տատրակին,
ինչու ծաղրեց դեղձանիկին։

թակարդ—գափանդ, ծուղակ։ | սնապանծ—պարծեցող։

71. Ջրի տրտունջը

Ջուրն ասում է.—

— Իմ թշնամին մարդն է։ Այդ մարդը ինչեր չէ արել ինձ... Որքան ջուր է առուներով լճերից տարել։ Քանի, քանի ճահիճներ է ինձ բացրել։ Քանի քանի լճեր է փչացրել և, որ ամենամեծ չարիքն է, կարում է անասունները, որ ես տեղ չունենամ ջուրս պահելու։

Այն տեղերը, որտեղից մի ժամանակ աղբյուրներ էին վազում, կարկաչում, որտեղ խոտը կանաչին էր տալիս, որտեղ թփեր ու ծառեր էին բուսել, այժմ միայն չոր հողն է մնացել։ Ոհ, մարդը իմ գլխին մի մեծ փորձանք է...

Ես դեռ չեմ հաշում այն ամեն վնասները, որ նա ինձ տալիս է. ձկներս սրսում, ջրային թռչուններս կոտորում, ափերիս խոտը հնձում է և դեռ դրանով էլ չի բավականանում։

Ես նրանից ջուրս թագցնում եմ գետի խորքում, նա ջրծոր է վռնում, ջուրս գողանում։ Իսկ որտեղ ջուր չը կայ, այնտեղ կեանք չը կայ։

Ահա ես այսպիսի թշնամի ունեմ, ինչպես չը սրտնեղամ, ինչպես չը բողոքեմ։

Ծրտունջ—ժժգոհություն։ | *բողոքել*—գանգատվել։

ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆ.—(պատասխանը գրել առանց գրքի)։

1. Ի՞նչ է ասում ջուրը։
2. Ի՞նչ է տեղ մարդը, որ ջրին թշնամի է դարձել։
3. Այժմ ո՞րտեղ է միայն չոր հող մնացել։
4. Ջուրն ի՞նչ է ասում. մարդը գլխին ի՞նչ է դարձել։
5. Ի՞նչ վնասներ է տալիս մարդը ջրին։
6. Ի՞նչ է անում մարդը գետնի խորից ջուր հանելու համար։
7. Որտեղ ջուր չը կայ, այնտեղ ի՞նչ չը կայ։
8. Այդ բոլորից յեթոյ ջուրն ի՞նչ է ասում մարդու համար։

72. Զալոյի էշը

Ա.

Զալոն մի էշ ունէր միայն, մի հատիկ էշ։ Ուրիշները գոնեպան չորքոտանիներ էին աշխատեցնում իրենց տան համար, իսկ նա ամեն տեղ էլ իր էշովն էր գործի գնում։ Զալոն օրական երկու ճամփա աղբիւրից ջուր էր բերում այդ էշով, չաղացը ալուն տանում, անասուը վայտի գնում. սար ու դաշտի երկար ու ձիգ ճամբան հո ոտից գցել էր խնդճ առաուներին։

«Աղքատի լեզուն կարճ է լինում»։ Ունևոր հարևանները անդամ ձեռաց գործի համար Զալոյ էշին էին վազում, ասելով թե իրենց էշն

ու ձին տանը չէին։ Մի խօսքով, ամբողջ թաղն ուրիշակը օգտագործում էր աղքատ Զալոյ սուս ու փուս բնաւորութիւնից և այնքան էշը տանում էին, որ ուժերին։ Շատ քանդիմքուց յոգնած, էշը ժամանակ պատիում էր պետերին, իսկ նրա մի տարեկան քուռակը չը դիմանալ՝ մի օր էլ վայր ընկաւ ու սատկեց։

Այդ բոլոր չարչարանքը չկարծես բաւական չէր Զալոյ էշը ուրիշ թշնամիներ էլ ունէր։ Ամբողջ գիւղի չարաճճի տղաները, ինչ որ էշը գտնում էին ալաթան, մի հնարքով դռներից հեռացնում էին և ջուրն ու կեռն վրան թափելով, այնքան ալպում ու վազեցնում էին անբան անասունին, որ քաշ ու քրտինքի մէջ լողացնում էին։ Տղաների այդ վարմունքը յաւ ու կրկակ էր դարձել Զալոյ համար։ Մեծերին խորը էր



անում, բան չէր ասում, իսկ փոքրերին թէկուզ մասիծում էր պատահած ժամանակը մի լաւ թակի, բայց այնպէս փախչում, թագնում էին անպիտանները, որ նրա առաջ ձնում էր միայն էշը էշացած կանգնած։ Այսպիսի դէպքերում Զալոն սրտի դայլայլը էշին էր հանում, այնքան վեր էր հատում, որ էշի յետին ոտքերն ուղիղ գնալու փոխարէն միշտ թեք-թեք էին գնում։

Մի կիրակի օր էր։ Զալոն տեսաւ նորից, որ էշը դաման չի։ Իջաւ գետամէջ, դէս ու դէն նայեց, որ ու նրա գոմն ազ մարդը մտած չը կայ ու կալատանն ու չաքարանը տնազեց, բայց էշը չը կար ու չը կար։ Հասկացաւ, որ ազանները նորից էշին տարել են ծանկելու։ Զայրացած վերցրեց մի հոնի ձող և փիչ կիչ դուրս գալով դեպի մօտակայ ձոր

տերը՝ անդադար կանչում էր. «էհէյ, էշ տանո՜ղ, էհէյ, էշ տանո՜ղ»։

Սակայն ոչ ոք չէր պատասխանում.

Զալօն աւելի կատաղեց և բերանը փրփուրով լիքը այս անգամ սկսեց Թունդ-Թունդ հայհոյանք թափել «անամօթների» գլխին։ Երբ տեսաւ որ դարձեալ պատասխանող չը կայ, այնուհետև սկսեց ինքն իր էշին անիծել. «Երանի քեզ պէս ապրանք ուրիշն էլ ունի՞, թէ կենա ես եմ. գէշն ուտի քեզ, ինչ անասուն ես հա՜...»։

Յանկարծ նկատեց, որ դիմացի սարից իրենց Նասիբ ապէն ցած է իջնում։ Իսկոյն բարձրացաւ մի թմբի գլուխ, ձախ ձեռը ականջին դրեց, աջ ձեռքով փափախը վերցրեց ու օդի մէջ ցած ու բարձր անելով սկսեց կանչել.— Էհէյ, Նասիբ ապէ, ապէ, ապէ։

Նասիբ ապէն Զալօի հօրեղբայրն էր։ Թէպէտ ծեր էր ու մազերը ապիտակ, բայց դեռ սուր լսողութիւն ունէր։ Լսելով Զալօի խօսքերը, ընդհատեց քայլերը և պատասխանեց.

— Հէյ, ապա, էդ ինչ է, էդ ինչ է...

Զալօն այնքան պինդ էր աղաղակում և այնքան յուզուած էր, որ Նասիբ ապէի ձայնը անլսելի մնաց նրան և շարունակեց.

— Ա՜, խլանաս դու, ապէ, Նասիբ ապէ։

— Ապա, էդ ինչ է, ինչ է, իմանում չե՞ս։

— Մեր էշը տեսար ո՞չ, էշը, էշը։

— Տեսայ, համա քեզի ո՞չ։

— Հիմի որ գնամ, էնտեղ կը լինի՞ թէ ո՜չ։

— Բա հօ գէլը կերաւ ո՜չ։

Իսկ աղաներն իրենց անելիքը արել և վերջացրել էին։ Երբ տեսել էին Նասիբ ապէին, էշը թողել էին և քարակիտուկների տակ տապ արել։ Այժմ էլ, երբ ականջներուն լսեաւ Զալօի և ապու ձայնն ու ձունը, ամեն մէկը շտապից փախչել։ Հատատապուշ Ապրօն ուզում էր Զալօին վախեցնի և հնարաւորութիւն տայ ընկերներին անվտանգ գիւղ մտնելու, բարձրացաւ մի սաղարթախիտ կաղնի ծառ, և կանչեց.—

— Էհէյ, իշատէրը, էշն արաը կերաւ, էշն արաը կերաւ...

Զալօն մի բոպէ սիրտ ննեց և լաւ գիտէր, որ եթէ արտերի պահապանը էշին բռնի և տուն անի, ահագին տուգանք են խլելու իրանից։ Իսկոյն ձայնը կարեց և սուս ու փուս, ծածուկ ճամբով այնպէս քայլեց դէպի ապնի ցոյց տւած տեղը, որ չը լինի թէ մէկը տեսնի և յայտնի արտերի պահապանին թէ Զալօն էշին էր մոն գալիս և նրա էշն է, որ արսն է ընկել ու կերել։

Զալօն երբ էշին հասաւ, տեսաւ որ խեղճ անասունը կանգնած է գլուխը խոնարհ, ականջները ցած, պոչը ոտքերի արանքում սեղմած։ Զալօն սիրտ քաշեց ու քթի ծակերից բարկութեան ծուխ ելաւ, սակայն

արտի պահապանի երկիւղից առանց մի խօսք ասելու, առաջն արաւ կենդանուն ու քշեց։

Ախ՜դէ անասուն։ Ապրատի էշ էր՝ հանգիստ չէին տալիս ո՛չ էշին, ո՛չ տիրոջը։

1. Զալօն ինչո՞ւ չէր բողոքում, ինչո՞ւ էր սուս անում։
2. Ի՞նչպէս կը լինէր այս ճի պ ատմութիւնը, եթէ Զալօն մի հարուստ մարդ լինէր։


73. Թշնամիներ



ՇԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ.—(պատասխանեցէք հետեւեալ հարցերին գրաւոր և բանաւոր)։

1. Մի անգամ ո՞վ դուրս եկաւ իր բնից եւ ինչո՞ւ։ 2. Դեռ մուկը ուտելիք չը գտած, ի՞նչ արաւ տանիքի վրայ։ 3. Տանիքի վրայից նկատե՞լ էր կատուներին։ 4. Եթէ նկատած լինէր նա իսկոյն ի՞նչ կանէր եւ ո՞րտեղ կը մտնէր։ 5. Բայց որովհետեւ չէր նկատել, ի՞նչպէս էր նստած։ 6. Նա հանգիստ նստած ժամանակ ովքե՞ր էին նկատել նրան։ 7. Կատուները մկների ինչե՞րն են։ 8. Հէնց որ մկան ձայն են լսում եւ կամ մուկը տեսնում, ի՞նչ են անում։ 9. Ինչո՞ւ այս կատուները չը կարողացան մկան յետեւից բնկնել ու բռնել։ 10. Ներքեւից կատուները ի՞նչ էին արել եւ ի՞նչպէս էին նայում մկանը։ 11. Բայց ո՞ւմ բախտն էր բանել թշնամիներն ի՞նչ չը կարողացան անել։

74. Վատ ընկեր



Մի տղայ ամառվան տաք օրերից մեկում գնում էր ճամփան։ Ճամփի եզրին մի ծառ կար, ծառի տակ էլ՝ մի խնձորենի։ Ծառի վրա հասած խնձորներ էին կախված։ Տղան ուզեց խնձորներից քաղել, բայց ծառը շատ բարձր էր։ Ինչ անի, ինչ չանի, տղան չկարողացավ խնձորենին բարձրանալ։ Նա սկսեց քարեր նետել խնձորների վրա։ Մի քանի քար նետեց, խնձորները չընկան։ Հետո մի մեծ քար վերցրեց, որ ուժգին նետի։ Այդ ժամանակ ծառի տակ մի ծեր մարդ երևաց։

— Ա՛յ, տղա՛, ինչ ես անում, ինչո՞ւ ես ծառը քարկոծում,— հարցրեց ծերը։

— Ես ուզում եմ խնձորներ քաղել, բայց ծառը շատ բարձր է, ես չեմ կարողանում ինձ համար խնձորներ քաղել,— պատասխանեց տղան։

— Ա՛խ, տղա՛, տղա՛, ինչ վատ ընկեր ես դու,— ասաց ծերը։ — Ես քեզ համար խնձորներ եմ քաղում, իսկ դու ինձ քարերով ես ծեծում։

Ա ն ա ս ։— Ուրիշի տարար փոքրե՛, իրեն ընկերն ուզե՛։

75. Ծիտիկները

Ձմեռ էր։ Ամենուրեք ձյուն էր։ Ծիտիկները չգիտեին, թե ինչ անեն, որ ձմեռը կարողանան ապրել։ Ձյունի տակ ոչ մի հատիկ չէին գտնում։ Ուր թռչեին, ուր գնային, ամենուրեք ձյուն էր։ Ծիտիկները սկսեցին մոտենալ մարդկանց տներին։ Մարդիկ ցանում էին հատիկներ, որ ծիտիկները ուտեն։ Ծիտիկները ուրախացան, որ հատիկներ գտան։ Նրանք սկսեցին ուտել հատիկները։ Ուտում էին, ուտում էին, ուտում էին, մինչև որ կշտացան։ Կշտացան ու ասացին.

— Ա՛խ, մարդի՛կ, մարդի՛կ, ինչ լավ եք դուք։ Ինչ լավ է, որ դուք կաք աշխարհում։ Եթե դուք չլինեիք, մենք ինչպե՞ս կարողանայինք ձմռանը ապրել։

76. Առաջին գարին

Երկու քուռակ դեռ գարի չէին կերել, առաջին անգամ նրանց գարի տվին. չը գիտես որտեղից դուրս թռան երկու մուկ, թաթերը թափ տվին ու սպառնացին.

— Է՛յ, քուռակներ, դնչերդ վեր։

Այնպէս անսպասելի էր այս հրամանը, որ նրանք դնչերը վեր ցցեցին ու այնպէս էլ մնացին։ Իսկ մկները ձայն տվին իրենց ընկերներին։

Դրանց ձայնի վրա հաւաքւեցին Բօչոն, Պոչոն, Կաճոն, Ղճոն, Ճուռլոն, Մոլոն և ուրիշ շատ մկներ։ Թափւեցին մսուրի մէջ և մի քանի րոպէում բոլոր գարին կրեցին, տարան իրենց բունը։

— Էս ովքե՞ր էին, էս ինչ բան բերին մեր գլուխը,— հարցրեց Ղաշիկ քուռակը Փաշիկին։

—Կարելի է մեր տանտիրոջ ազգականներից են, Ղաշիկ, էս էլ մեր բախտից է,— պատասխանեց Փաշիկը։

Այդ ժամանակ դոմի երդիկից ներս թռաւ մի ճնճղուկ, դէս ու դէն ընկաւ մսուրի մէջ՝ բայց մի հատիկ գարի չը գտաւ։

— Ձեր տունը շինւի, էնպէս կերել էք, գեղապտեղ համար մի հատ գարի էլ չէք թողել, բա էդպէս կանե՞ն,— ասաւ ճնճղուկը։

— Է՛հ, ծիտիկ, մարդ մարդու գարդ չը գիտէը, կէս գիշերին ժամ էր կանչում։ Բա չես ասիլ՝ տանտիրոջ ազգականներն եկան, բոլորը տարան։

— Տանտիրոջ ազգականնե՞րը, այդ ովքե՞ր պէտք է լինեն, պոչ ունէի՞ն։

— Այն էլ ինչպիսի պոչ, երկար, մարակից էլ երկար...

— Հա, հասկացայ, մկներն են եղել։ Դէ որ այդպէս է, տանտէրը մի ուրիշ ազգական էլ ունի, անունը Մատան, նրան կասեմ, նա կը գայ դրանց հախից,— ասաւ ճնճղուկն ու թռաւ։

Միւս օրը Մատանը մարաղ էր մտել մսուրի մէջ։

Եկան մկները, եկան ու գոռացին.—

— Է՛յ, քուռակներ, դնչերդ վեր։

Յանկարծ Մատանը վրա ընկաւ մէկին բռնեց, միւսները փախան։

— Տեսա՞ր, Փաշիկ, տանտիրոջ էս մի ազգականն ինչքան քաջ էր, —ասաւ Ղաշիկ քուռակը։

Այդ օրը քուռակները վերջապէս վայելեցին իրենց առաջին գարին։ Նրանք չը գիտէին ինչպէս շնորհակալ թիւն յայտնեն տանտիրոջ քաջ ազգական Մատանին։

Սպառնալ—վախեցնել։ | *երդիկ*—տանիքի լուսամուտ։

77. Ապրի արեւը

Ա.

Մարնավաճառի խանութը մտաւ մարդու մէկը։

— Ի՞նչ էք կամենում,—հարցրեց խանութպանը։

— Քսան գրուանքայ շաքար, տասը գր. սապոն և հինգ գր. բրինձ։

Խանութպանը կշռեց, փաթաթեց, կապեց, դարսեց արկղի մէջ, ամբացրեց արկղի բերանն ու դարձաւ ասաւ.—

— Ինդրեմ ձեր աշկերտի ձեռքով ուղարկէք մեր տուն,—ասաւ ու իր հասցէն գրեց արկղի վրայ. «Խրիմեան փողոց, № 25, տուն Սարուհանցի»։

— Շատ բարի, իսկոյն կուղարկեմ,—պատասխանեց խանութպանը։

Գնողը գնաց։

— Այ տղայ, Սաքօ, արի էս արկղը տար, հասցէն վրան գրած է։ Տես, ուրիշի չըտաս,—կանչեց խանութպանն իր նոր աշկերտին։

— Լաւ, աղա ջան,—ասաւ Սաքօն,—արկղը դրեց գլխին ու դուրս եկաւ խանութից։

Սաքօն հազիւ տասներկու տարեկան տղայ էր։ Մայրը նրան խանութի աշկերտ էր տւել։

Գնում էր Սաքօն ծանր բեռը գլխին դրած, ու մտածում։

— Ա՛յ, ինչ կը լինի, եթէ ինձ մի քանի կոպէկ բախշի պարոնը... կը տանեմ, կը տամ մայրիկիս... ի՞նչ կուրախանայ... Օ, երանի մայրիկս տեսնէր թէ ինչքան ապրանք են ինձ հաւատացել։

Մի քիչ գնալուց յետոյ՝ Սաքօի ձեռքերը յոգնեցին, վզի երակները ցաւեցին, քրտինքը ծորում էր ճակատից։ Նա շուտ-շուտ մէկ աջ ձեռքով էր բռնում արկղը, մէկ՝ ձախ։

— Օ, էս ինչ ծանր է, վայ վիզս կոտրւեց,—ասաւ նա ու լաց եղաւ։

Արցունքները նրա աչքերից գլորւեցին մօր կարած սպիտակ գոգնոցի վրա։

— Ինչո՞ւ ես լալիս,—հարցրեց նրան մի աշակերտ, որ գրքերը կռան տակը դրած գալիս էր։

— Ծանր է, վայ վիզս... ասաւ Սաքօն։

— Կաց մի տեսնեմ,—ասաւ աշակերտը ու վերցրեց արկղը։

—Օ՛, այս ինչ ծանր է, անխիղճներն ինչպէս են չարչարում երեխաներին, ո՞ւր ես տանում, այ տղայ, խանո՞ւթ։

— Ո՛չ, արկղի վրայ գրած է,—Խրիմեան փողոց... № 25։

— Լաւ, գնանք, հէնց իմ ճամբիս վրա է...



ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆ

79. Մեր սիրելիները

Երեխաներ, դուք կարդացած կը լինէք Պերճ Պուշեանի, Ղազարոս Աղայեանի և Յովհաննէս Թումանեանի գրածներից։ Կարդացած և սովորած կը լինէք մէկի կամ միւսի փոքրիկ պատմութիւնները ու հէքիաթները, գեղեցիկ ոտանաւորները ու քաղցր երգերը։ Այդ անճնաւորութիւնները մեր սիրելիներն են, մեր լեզուի ուսուցիչները և հայերէն գիրք գրողները։

Դրանք գրեթէ պատանեկութիւնից սկսած, իրենց երիտասարդական ոյժն ու կորովը, մտքն ու գրիչը, գործ են դրել հայերէն գրքեր ստեղծելու։ Հայերս ուրիշ շատ գրողներ էլ ունենք, բայց սրանք են, որ ձեզ նման մանուկներին ու ձեր ընկերակից պատանիներին սիրել են ու հասկանալի լեզուով խօսել ձեզ հետ։

Կարդացողները զարմանում են թէ ինչպէս են գրել, որ այդքան գեղեցիկ ու քաղցր են դուրս եկել նրանց գրածները։ Աստած այնպէս է արել, որ նրանք երեխայի հետ երեխայ լինեն, պատանու հետ՝ պատանի և մեծի հետ՝ մեծ։ Ու այդ է պատճառը, որ ինչքան կարդացող հայ մանուկներ կան ամենքն էլ հեշտ են հասկանում դրանց գրածները։

Տեսէք, ձեր այս դասի ճակատը զարդարող երեք պատկերը ձեզ են նայում։ Մէջտեղը կանգնած է մեր սիրելի վիպագիր հանդուցեալ Պերճ Պուշեանը, նրա աջ կողմը՝ մեր սիրելի բանաստեղծ Յովհաննէս Թումանեանը, իսկ ձախ կողմը՝ մեր սիրելի պապ և մանուկների մեծ ու սուցիչ, լուսահոգի Ղազարոս Աղայեանը։ Սովորենք դրանց գրածները՝

80. Հնձվորներ

Ահա եկաւ խոտ հարողը,
Ուսին դրած զերանդին,
Բոլոր խոտը սա հարել է,
Բան չի թողել մեր հանդին։
—Մ՛յ խոտ հարող, ասա տեսնենք,
Դու ինչպէս ես խոտ հարում.
—Այսպէս ահա, լաւ նայեցէք,
Ես այսպէս եմ խոտ հարում.
Հէպ, հօպ,
Հէպ, հօպ։
—Մ՛խ, ինչ լաւ է, եկէք սովրենք,
Մենք էլ այսպէս խոտ հարենք.
Հէպ, հօպ,
Հէպ, հօպ։
Ահա եկաւ արտ հնձողը,
Զեռքին փայտէ մատնոցները,
Պատրաստել է սուր մանգաղը,
Պէտք է հնձէ մեր արտերը.
—Հնձող եղբայր, ասա տեսնենք,
Դու ինչպէս ես հունձ անում.
—Այսպէս ահա, լաւ նայեցէք,
Այսպէս եմ ես հունձ անում.
Հէպ, հօպ, հէպ,
Հէպ, հօպ, հէպ...
—Մ՛խ, ինչ հեշտ է, եկէք սովրենք,
Մենք էլ այսպէս հունձ անենք,
Հէպ, հօպ, հէպ...
Հէպ, հօպ, հէպ ..

Ղ. Աղայեան

Խոտ հարել—խոտ հնձել.
Հանդ—սար ու դաշտ։

Եղնատէրն ասաւ.—
—Բարև, բարև, խոտի դիզան,
քիչ խոտ չէք տայ, տանեմ եզան։

Ինքներեւն պատասխանեց.—
—Դէ որ բարև տուիր դու մեզ,
վեր կալ, վեր կալ ինչքան կուզես։

81. Հօտի վերադարձը

Ինչ դուրեկան է սրնգի ձայնը, երբ հովիւը սուլում է մի քարի վրա նստած, կամ մի լեռան գլխի թիկնած։

Դուք չը կարծէք թէ նա միայն իր ուրախութեան համար է ածում, ո՛չ, նա նրանով հասկացնում է իր սիրելի հօտին, թէ ժամանակ է ժողովել և գնալ դէպի փարախ, ուր սիրունիկ գառներն սպասում են լսելու իրենց մայրիկների մայիւնը։

Ո՜հ, ինչ հրաշալի տեսարան է, ինչ քաղցր բոպէ։ Գառները լսում են հեռուից իրենց մօր ձայնը, անհամբերութիւնից ուզում են կոտրատել փարախի դուռը և դուրս թափուել՝ դիմաւորելու ամենաթանկագին մօրը, որ իրենց համար կուրծքը լիքը կաթն է բերում։

Մինչև որ հովիւը բաց կանի փարախի դուռը, ուլերը՝ այդ պստիկ սատանաները, քիչ է մնում, որ բարձրանան նրա ուսերը։ Նախանձելի է հովւի դրութիւնը հօտի վերադառնալու ժամանակ։

Ուլերի ու գառների մկըկոցը, այծ ու ոչխարի հարայ-հրոցը նրան մի անգամ էլ ուրախացնում, երջանկացնում են։

Ոչ ոք չի կարող իր բոլոր ցաւերը չը մոռանալ այն միջոցին, երբ գառնուկները իրենց անհանգիստ պոչիկները խաղացնելով՝ իրար գլխով են դիպչում։

Գառն ու ոչխարը իրար են խառնուում, նրանցից իւրաքանչիւրն աշխատում է գտնել իր մօրը կամ ձագին։ Բաւական է, որ մայրը մի փոքր հոտոտէ, իսկոյն յետ է խփում իրեն մօտեցող օտար գառանը և ցատկում է դէպի այն կողմը, ուր իր սիրելի հարազատն է։

Մօր անուշ մայիւնը սիրտ է տալիս անմեղ գառնուկին, որ վազելով դէպի ինքն է գալիս։ Եկաւ թէ չէ՝ իսկոյն ոտքերը բաց է անում և թոյլ տալիս իր ամենասիրելի զաւակին, որ փշփշալով ծծի իր պտուկները։ Մինչ նա ծծում է մօր կուրծը, մայրն անդադար լիզում է փոքրիկ գառնուկի թաւշանման մորթը։

Անխիղճ են այդ միջոցին մարդիկ, նրանք խլում են խեղճ գառան բերանից նրա մօր պտուկը և կաթի մեծ մասն իրենք են կթում։ Անբան անասունն իհարկէ լաւ գիտէ մարդկանց ա՛խրաւութիւնը. ինչքան էլ նրանք կթեն, նա էլի իր զաւակի բաժինը թագցնում է իր կուրծի մէջ։

Փարախ—ոչխարի դոմ։ | *անիրաւութիւն—անարդարութիւն։*

Ա ո ա ծ.— Աբօտ գնաց ծնած մաքին, կաթը տուից անուշ ձագին։

82. Անբախտ վաճառականներ

Ա.

Մի օր Զըղչիկն ու Ճայն եկան
Թէ՝ եկ դառնանք վաճառական։
Ասին ու խելք խելքի տուին,
հաւան կացան, պայման դրին.
բայց՝ արի տես... որ փող չունենք։
Շատ միտք արին, թէ ինչ անեն.
վերջը եկան Փըշի մօտը,
ընկան նրա ձեռն ու ոտը,
ու մուրհակով,
շահով, կարգով,
փող վեր առան բաւականին,
ինչքան պէտք էր իրենց բանին։
Զիղչը ճնաց, առպահ դառաւ,
Ճայը բոլոր փողերն առաւ,
առաւ, նստեց նաւի միջին,
հասաւ Մսըր, Զինումաչին,
Ֆարս, Հնդստան, Արաբըստան...
Էլ Թանկագին քերմանի շալ,
էլ մարգարիտ, զմրուխտ ու լալ,
հնդու խուրմա, փոտա, բադամ,
և... ո՛ր մէկի անունը տամ։
Ինչ որ տեսաւ, աչքը սիրեց,
բօլ-բօլ առաւ, նաւը լցրեց.
նաւը լցրեց հազար բարով
ու ետ՝ եկած ճանապարհով
ուրախ-ուրախ տուն էր գալիս։
Ճամբին ծովում սարսափելի
ալեկոծում, մրրիկ ելաւ,
երկինք հանեց ալիք ու նաւ,
երկինք հանեց, թողեց ներքև,
ողջ կլանեց անդունդը սև։
Միայն սովդաքեար Ճայը էնօր
ազատուեցաւ մերկ ու տկլոր։
Ազատուեցաւ, փառք իր Աստծուն,

բայց ինչ սրտով խեղճը գայ տուն.
գայ՝ ինչ ասի պարտքատէրին,
ինց երևայ իր ընկերին...

Բ.

Ընկերն էնտեղ՝ դուռը կտրած,
աչքը ճամբին, վիզը ծռած,
համրում է օրն օրի վրա
թէ՝ մեր Ճայը երբ պիտի գայ...
Երկար նայեց, ճամբէն պահեց,
շատ լաւ ու վատ երազ տեսաւ,
մինչև պարտքի օրը հասաւ,
ու՝ մուրհակի թուղթը ձեռին,
փուշը տնկւեց կտեր ծէրին։
—Էյ, բարեկամ, ինչ բանի էք.
էլ չէք ասում թէ պարտք ունէք...
գործ բռնեցիք, հօրս ողորմի,
ետ տուէք դէ փողս հիմի։
Թուղթ էք տուել՝ վախտ լմացէք,
ամօթ, աբուռ, ահ ունեցէք...
Թալան հօ չի... մեղք եմ ես էլ...
Ախպէր, էսպէս բան էք տեսել.
ոսկի տայ մարդ իրեն ձեռով,
չը կարենայ առնել զօռով...
Սրանից ետը դէ արի դու
ու ձեռ մեկնի աղքատ մարդու...»
Գոռգոռում էր ողջ թաղակում.
հայհոյում էր խայտառակում,
ամեն մարդ էլ, ով որ լսում,
հէնց մի բերան էն էր ասում.
—Ա՛յ ամօթ ձեզ, Զղչիկ ու Ճայ.
ինչ ենք լսում, վայ, վայ, վայ, վայ,
անուններդ վաճառական
ու էս տեսակ խայտառակ բան...
Վայ, վայ, վայ, վայ, Զըղչիկ ու Ճայ։

Գ.

Զղչիկն էսպէս միշտ լսելիս՝
սիրտը բերնով դուրս էր գալիս։

Բարկանում էր իրեն մաքում,
անիծում էր, չքում, թքում.—
—Մ՛յ քո տունը քանդուի, ա Ճայ,
այ դու դառնաս Գրողի վայ.
էս ինչ բան էր, որ դու արիր,
գլուխս էս ինչ փորձանք բերիր...»
Ու խնդրում էր ամեն անգամ.
—Մի՛ նեղանա, փուշ բարեկամ,
շատ ես կացել, կաց մի քիչ էլ։
Թուղթ ստացայ երեկ Ճայից,
թէ՝ դուրս եկայ Արաբկայից.
որտեղ որ է՝ շուտով կը գայ,
դեռ մի բան էլ աւել կը տայ...
—Ես չեմ ուզում աւելն, ախպէր,
կանխիկ համրած իմ փողը բեր.
շահ էք գրել, վախտ էք գրել,
ինչ գրած է էն եմ ասում,
ձեզնից աւել բան չեմ ուզում։
—Ջէ՛, աղա Փուշ, թէ վաղ թէ ուշ,
փողն իր կարգին, շահն իր կարգին,
իսկ պատիւըդ... ես իմ հոգին...
Ես յոյս ունիմ...ասենք պարտենք..
Բայց չէ՞ ախար մենք էլ մարդ ենք...
Ջէ՛, քո արածն ով մոռանայ,
իր Աստուածն էլ նա կուրանայ...

գ.

Ծեղքը էապէս լեզու ածաւ,
շատ յոյս տւաւ, շատ խոստացաւ,
շատ սուտ ասաւ պարտքատէրին,
շատ սպասեց իր ընկերին։
Բայց ընկերը չը կա՛յ, չը կա՛յ։
—Էս ինչ ցաւ էր Աստուած վկայ,
ինչ իմ բանն էր՝ մտայ մէջը,
որ խայտառակ լինեմ վերջը...
Ինչպէս պրծնեմ էս կըրակից,
էլ ինչ ասեմ, ինց սպասեմ.
Նա ճրը կը գայ, ինչ իմանամ,
որ ջուրն ընկնեմ... ում մօտ գնամ...

Շատ միտք արաւ, դէս, դէն թռաւ,
ինչ որ ունէր տանը, հագին,
ողջ հաւաքեց, տւաւ պարտքին,
ցիփ մերկացաւ, էլ չը պրծաւ։
Վերջը տեսաւ, որ ճար չեղաւ,
թևեր առաւ, ինքն էլ փախաւ։
Փախաւ կորաւ, որ էլ էնպէս
դառարկ, մնանկ ու սևերես,
ոչ պատահի պարտքատէրին,
ոչ երևայ լոյս-աշխարհին։

ե.

Այնուհետև, իր նամուսից,
Ձղջիկը մերկ, փախած լուսից,
ցերեկները դէս դէն թաքչում,
գիշերն է միշտ մթնում թռչում,
որ չերևայ իր թայ-թուշին,
ոչ պարտքատէր աղա-Փուշին։
Ճայն էլ ծովում, ճչում, ծւում,
ջուրն է մտնում, դուրս է պրծնում,
թևին տալիս, ման է գալիս,
թէ մի գուցէ բախտը բանի,
կորուստն էլ ետ ջրից հանի։
Իսկ Փուշն, արդէն յոյսը հատած,
ճանկ ու ատամ սուր պատրաստած,
կողքովն ով որ անց է կենում՝
քաշում է փէշն ու հարցընում,
թէ՝ չէ՞ն տեսել մէկն ու մէկին,
էն լերը Ճային կամ Ձղջիկին։
Ու էն օրից մինչև օրս էլ
մէկը մէկին դեռ չեն տեսել։

83. Աղբիւր

Ասրի լանգում, ժայռի տակ,
Գուր էր բղխում սառնորակ,
Եւ գրւելով խորերում
Իսուր ֆահիֆ էր դառնում:

Նրա առջև հովիւը
Փորեց, շինեց մի խոր գուշ,
Տարաւ ջրեց իր հօտը՝
Էն աղբիւրից սառն-անուշ:

Անկուրն եկաւ կրծակէկ
Ասուն աղբիւրը որ կեսաւ
Գլխարկին առաւ ու կոխէց,
Խմէց, սիրտը հովացաւ:

Ասաւ. –Աղբիւր, քո ակը
Հաստատ ճնայ, վարարի,
Քո շինողի օր-կեանքը
Ջրի նման երկարի:

ՎԱՐԺՈՒԹԻՒՆ.—(պատասխանը գրել առանց գրքի):

1. Սառնորակ ջուրը ո՞րտեղ էր բղխում:
2. Ջուրն ի՞նչ էր դառնում, գրւելով խոտերում:
3. Ի՞նչ շինեց հովիւը նրա առջեւ եւ ի՞նչ արաւ:
4. Ո՞վ եկաւ ծօթակէզ:
5. Սառն աղբիւրը որ տեսաւ, ի՞նչ արաւ:
6. Խմելուց յետոյ ի՞նչ ասաւ:

84. Երիտասարդ քարտաշը

Երկու քարտաշ, մինը ահել, մինը չահել, քարէ պատ էին դնում բարձր սանդուխտների վրայ կանգնած:

Ներքևը—գետնին ընդարձակ քաղաքն էր փռւած, իսկ նրանց շուրջը քամին էր ոռնում գայլի նման և ուզում էր պոկէ սանդուխքի տախտակներն ու խորտակի նրան:

Յանկարծ եկաւ քամու մի ուժգին թափ, տախտակները պոկեց, սանդուխտն իրարից հանեց և շպրտեց գետին: Մեղմ քարտաշները ծնացին մի տախտակից կախ ընկած:

—Ընկերը, մեր կեանքի վերջն է, այս տախտակը երկուսիս չի դիմանայ,—ասաւ երիտասարդ քարտաշը:

—Վայ ինձ, ես ինչպէս մեռնեմ, ում կը կերակրի իմ հինգ որդուն,—մղկտաց ծերը:

Երիտասարդը յուզւեց ու ասաւ.

— Ես եմ ու ես, ընկերը, ուրիշ ոչ ոք չունեմ, որ դարդ անեմ, թող ես մեռնեմ... Ինաս բարով,—ասաւ երիտասարդ քարտաշը,— բաց թողեց բռնած տախտակն ու ընկաւ գետին: Ընկաւ գետին ու չախչախւեց:

Մարդիկ հասան օգնութեան, ծերը քարտաշին ազատեցին:

Ու նա այնուհետև, իր ամբողջ կեանքում, արտասուքն աչքերին պատմում էր իր երիտասարդ ընկերի անձնազոհութիւնը: Յիշում էր նրա մարդասիրութիւնը, և ամբողջ ընտանիքով օրհնում էին նրա յիշատակը:

Լաւ ա՞րաւ երիտասարդ քարտաշը:

Անել—ծեր:	*յուզւել—բորբոքւել, տաքանալ:*
խորտակել—փուլ տալ:	*չախչախւել—փշրւել:*

---

85. Ձանձ

Խոնարհ ու հեզ
մի յոգնած եզ
արօրն ուսին,
ճանճը պոկին,
մի երիկուն
գալիս էր տուն:
Մին էլ ճամբին
մի ուրիշ ճանճ
էն նստած ին

ասաց.—
«Տօ մանչ,
էս եզան հետ
ո՞րտեղից էդ».
Նա ցից արած
քիթը, ասաց.
—Մենք որտեղից.
վարում էինք,
վարատեղից:

Այս առակն ի՞նչ է ուզում ասել:

Հեզ—համեստ, խոնարհ:	*Մանչ—տղայ:*

86. Խոտհունձ

Ա.

Տաք և լաւ ամառ էր, խոտհնձի ամենաթունդ ժամանակը։ Համաբեա բոլոր գիւղն առաւօտից մինչև երեկոյ շարունակ բանում էր մարգագետիններում։

Կանաչ դաշտերում կասես թէ գոյն-գոյն խաշխաշի ծաղիկ լինեը շաղ տւած—այնքան կարմիր, սպիտակ, վարդագոյն հագուստներով տղայ, աղջիկ էին երևում։

Հնձւորները երկար շարւած՝ իրար հետ վեր էին տանում, իրար հետ վեր բերում սուր գերանդիները. բարձր, հիւթալի խոտը՝ ամեն անգամ գերանդին վրա բերելիս՝ տեղիցը թռչում էր, գլուխը կախ գցում ու գետին ընկնում։ Մի անասելի տխրութիւն կար այդ գլուխ տալու մէջ. խոտը հրաժարւում էր կեանքից ու իր վերջին ճնաս բարովն էր ասում բնութեանը...

Մարգերի վրայով մի թեթև քամի էր գալիս հնձւորի առաջ ու դեռ չբ հնձած խոտը գետին էր կռացնում։ Մարդ կը կարծէը թէ այդ գլուխ տալը պատասխան էր իրենց մեռնող ընկերներին...

Գերանդիների զընգզընգոցն ու չըխչըխկոցը հա լսւում էր դաշտերում. հնձւորները շարէշար առաջ էին գնում, և ամեն ձեռք վեր տանելովը, ամեն գերանդի վրա բերելովը, նոր-նոր զոհեր էին թափւում գետին...

Մէկ-մէկ յանկարծ սուր գերանդու սակիցը դուրս էր պրծնում վախեցած լորն ու նոյն րոպէին վեր էր գալիս, համարեա հնձւորի ոտներին կպչում, այս կողմն այն կողմն էր թռչկոտում ու իրան գետնովը տալիս...

Անգութ հարւածը կործանել, քանդել էր նրա հարազատ բունը, փոքրիկ ճուտիկներին ցրւել՝ խոտովը մին էր արել։—Մէկի ոտիկն էր կտրել, մէկի գլուխն էր արնաշաղախ արել, որի թևերն էր տարել, փշրել, որին էլ բոլորովին մահացրել...

Հետևում, հնձած տեղերով ճռճռալով դէս ու դէն էին գնում ծանր սայլերը, չոր խոտը բարձած։

Կանայք շարէշար, փոցխերը ձեռներին, շուռ էին տալիս դեռ չը չորացած խոտը, չորը խրձում էին ու դիզում։

Ամեն տեղ գործը եռում էր, լսւում էին ուրախ երգեր և հեռու, հեռու տարածւում։

Բ.

Խոտհունձն էլ մի ուրախ, գւարթ աշխատանք է, մի մեծ տօն գիւղի ու գիւղացիների համար։

Ո՜հ, ինչ ուրախութիւն, մեծն ու փոքրը գնում են սարերը՝ հայթայթելու իրենց աչքի լոյս կենդանիների տարեկան պաշարը։

Մի տեղ խոտ են հնձում, մի ուրիշ տեղ հնձածը ժողովում, կալրում ու խրձեր կապում, գիւղն ուղարկում։

Մի տեղ հնձւորը ծալապատիկ նստած՝ քաղում է իր-գերանդին, որ շարունակի հունձը։

Քաւ ու քրտինք մտած՝ աշխատում են բոլորը՝ թէ մարդ, թէ կենդանի... Այո, ծանր աշխատանք է խոտհունձը, բայց հաճելի ու անչափ դուրեկան։ Տևում է շաբաթներ և ոչ ոք չի ձանձրանում դրանից։

Կէսօրին մօտիկ հնձւորները ժողովւում են սառն աղբիւրների շուրջը, թրջում են սառը ջրի մէջ ցամաք հացը, լաւ փափկացնում և ուտում մեծ ախորժակով։ Պատահում է, որ ուրիշ կերակուր էլ են ուտենում, բայց շատերի կերակուրը հացն ու ջուրն է մենակ։

Ուտում են, ուտում ու կրծքի վրա պառկելով գետնին՝ մեկնում են գլուխները աղբիւրի ակնին, խմում են նրա զուլալ ջուրը։ Խմում են անվերջ ու կանգնելով ասում.

—Էդ ակիդ մատաղ, այ աղբիւր, քո ջուրը մեղր ու կարագ է թամամ։

Գիշերում են խոտհարքներում։ Մութն ընկնելուն պէս բոլորւում են իրենց համեստ ընթրիքի շուրջն ու շուտ-շուտ ջրով լիքը կուլաները գլուխները քաշում, խմում ու վերջը իրենց աշխատանքից գոհ, պառկում են քնելու։

Քնում են քաղցր, խոր, հանգիստ քնով՝ կասես փափուկ մետաքսէ անկողնում լինեն պառկած ու փափուկ բարձերը գլխների տակին դրած։ Տակներին խոտ է, վրանները խոտ, շա՜տ-շա՜տ մի կարպետ գցած վրայից։

Բայց երկար չի տևում նրանց քունը։ Գիշերւայ կիսին, երբ հեռու, կապուտակ երկնքի վրայ երևում է «բազուկ» կոչւող աստղախումբը, նորից հարայ-հրոցն ընկնում է սարերը, արթնանում են բոլորն ու նորից գործի կպչում։ Բա, աշխատանքի օրեր են, չի կարելի շատ քնել։

Հրաժարւել— յետ կանգնել խօսքից։
միահամուռ—միասին, խմբովին։
հայթայթել—հոգալ, ճարել։
հաճելի—դուրեկան։
ձանձրալի—դուր չեկող։
զուլալ ջուր—պարզ, յստակ ջուր։

87. Տաւարածի ճաշը

Մի խամ տաւարած,
բաւական քաղցած,
աղբրի մօտ նստած,
ուտում էր չոր հաց։
—Ցամաք մի ուտի,—ասաւ ընկերը,—
—Բա ինչով ուտեմ, ուրիշ բան չունեմ։
—Դանակով, եղբայր, դանակով...
—Էդ լաւ ասեցիր.
դանակով կտրեմ,
Չրումը թրջեմ,
էլ ցամաք չուտեմ...

Ցամաք հացը ե՞րբ է անուշ թուում։

---

88. Հնձւորի քունը

Քնել է դաշտում ծառի տակ պառկած,
հնձւոր մշակը, հէնց էնպէս, բաց-բաց.
ծառի հովանին վերմակ է դարձել,
կանաչը՝ դոշակ, ծաղկունքը՝ բարձեր։

Ջընդ-ջընգան քամին գնում է, գալիս,
քնքոյշ թևերը վրան թափ տալիս,
կանաչ անտառի սըւսըւոցը խուլ
նրա ականջին փըսփըսում մի լուր...

Քնած է էդպէս ծառի տակ պառկած,
հնձւոր մշակը, հէնց էնպէս, բաց-բաց,
ծառի հովանին վերմակ է դարձել,
կանաչը՝ դոշակ, ծաղկունքը՝ բարձեր։

Ինչո՞ւ չեն մրսում այդպէս ճնողները։

ծառի հովանին—ծառի շուքը։
քնքոյշ—նազիկ։
խուլ սրւսրւոց—անորոշ ձայն։
լուր—համբաւ, խաբար։

89. Արդի ուլածը

Վարդավառի շաբաթ օրը լուր բերին ապրը թէ Վարդան պապը հիւանդացել է ու մահճում է ուլում...

Վարդիկաղ նաներ վեր կացաւ, մի փոպրակ մաճուն պատրաստեց ու մրւս օրը վաղ-վաղ իր քոռ Վարդգէսին գնաց, որ գնանք։

Վարդգէսը վերցրեց փոպրակը, ճամբա ընկաւ ու կէս օրին մաճուներ գոռն հասցրեց։ Վարդան պապին կերաւ արդի ուլածը և օրհնեց։

—Վայ օրհնւի քո ծնունդը, Վարդգէս ջան, հող բռնես՝ ոսկի դառնայ, վարդ մանուշակի պէս հոտ ունենաս, որ ինչ մաճուն հասցրիր։

Մրւս օրը Վարդան պապը ոտի վրայ էր։

ՎԱՐԺՈՒԹԻՒՆ.—(պատասխանը գրել առանց գրքի)։
1. Վարդավառի շաբաթ օրն ի՞նչ լուր բերին սարը։
2. Ի՞նչ արաւ Վարդիկաղ նաները։
3. Վարդգէսը վերցրեց տոպրակն եւ ի՞նչ արաւ։
4. Վարդան պապին կերաւ արդի ուլածն եւ ի՞նչպէս օրհնեց։
5. Մրւս օրն ո՞վ էր ոտի վրայ։

90. Շրւանի վահը



Մի լուծ եզն ունէինք մենք,—մէկի անունն՝ Ալւան, միւսինը՝ Շրւան։

Եզներ եմ ասում, ինչ եզներ, նկարած պատկեր. գեղեցիկ, ուժեղ, խոշոր ու խելօք, աննման եզներ։

Իրար շատ նման, իրար շատ սիրող, հաւասար ուժով, հաւասար խելքով։

Երբէք իրարից անջատ չէին լինի. միշտ միասին էին՝ լծած թէ արձակ, գոմում թէ դաշտում, արածելիս թէ հանգստանալիս։

Բայց, ախ, երանի թէ չը գար մեծ ազարի տարին...

Ալւանը հիւանդացաւ, մեր ամբողջ տունը մէջ ընկաւ...

Շրւանը երբէք, ոչ մի րոպէ չէր հեռանում հիւանդ ընկերոջից։ Թէև մենք շարունակ աշխատում էինք հեռու պահել, բայց նա միշտ վազում, գալիս էր ընկերոջ մօտ, լիզում էր նրան ու տխուր մզզում։

Չորրորդ օրը, որ զարթեցինք, Ալւանը պառկած էր հանգիստ ու անշարժ. չարդախ պոզերը դէպի սրահը, ոտքերը չռած։

Շրւանը կանգնած նրա մօտ, բարձր բառաչում էր ու լիզում նրան։

Լացով ու սգով Ալւանին սայլին դրինք, տարանք հեռու թաղեցինք։

Հօրեղբայրս ասում էր.—Մարդ իր եղբօր կաշին չի մաշկի...

Երկու օր անցաւ. էս մեր Շրւանը ոչ արածում էր, ոչ խոտ ուտում, ոչ ջուր խմում...

Նիհարեց, դարձաւ չոր ոսկրակոյտ ու ինքն էլ հիւանդացաւ։

Նրա հիւանդութիւնը երկար չը տևեց։

Գալիս էր, նստում Ալւանի ընկած տեղը ու աչքը պլշած, մզզում էր տխուր ու տրտում։

—Եկէք, երեխէք, կամաց քշեցէք, տարէք Է—հեռու։—Թող էնտեղ սատկի, աչքներս չը տեսնեն։

Ու մենք լաց լինելով քշեցինք, տարանք շատ հեռու։ Ճակատը պաչեցինք, պոչի մազից մի փունջ կտրեցինք, իբրև սիրոյ նշան ու վերադարձանք տուն։

Առաւօտը, երբ զարթեցինք, դժւար էր հաւատալ։

Շրւանը պառկած էր սրահի առաջ, ճիշտ այն դիրքով, ճիշտ այնտեղ, որտեղ Ալւանն էր մեռել... Մեռնելիս էլ ուզեց ընկերոջ հետ նոյն տեղը մեռնել։

Ազար—անասունների հիւանդութիւն։ | *սրահ*—տան առաջի ծածկ։

91. Ագռաւն ու աղւէսը

Խախտի բերմամբ
Թէ պատահմամբ,
Մի մեծ ագռաւ
Մի գունդ պանիր
Դաշտում գտաւ,
Կըտուցն առաւ,
Ծառին թառաւ։
Օ՛, ինչ պանիր,
Դեղին ոսկի...
Բայց դեռ չառած
Համը իսկի,
Աղւէսն անցաւ
Ծառի մօտով,
Գերւեց, էրւեց
Պանրի հոտով։
Վազեց գնաց ընկնի ջուրը
ԵՒ թուլացաւ կուռն ու ճուռը։
Էն ժամանակ, իրա ձևին,
Ծառի տակից, աչքն ագռաւին,
Հեզիկ-նազիկ,
Փափկամազիկ,
Բացեց լեզուն
Անուշ-մեղուշ,
Թափեց-չափեց
Շաքար ու նուշ։
— Ինչքան լաւն ես,
Ես քո գերին,
Քո էդ սևիկ
Վառ աչքերին,
Նուրբ ծալքերով
Զոյգ թևերին։

Մի դու մըտիկ,
Էդպէս քըթիկ,
Էդպէս ճըտիկ,
Մախմուր ագին,
Խաս ու դումաշ
Աւոլաս հագին։
Գիտեմ, անշուշտ
Իմ քուրիկի
Ձայնն էլ կըլի
Հրեշտակի։
Երգի, քուրիկ,
Մի ամաչի,
Իմ ուզածը
Մի մեծ բան չի։
Թէ որ չըքնաղ էդ տեսքիդ հետ
Երգելում էլ եղար վարպետ,
Օ, կը դառնաս,
Իմ սրբուհի,
Թռչուններիի
Մայր թագուհի։
Ագռաւ ազին
Իրա մասին
Գովեստներից
Շըշմած, ուռած,
Ագռաւային
Բըկովը մին,
Որ չը կռռաց,
Պանիրն ընկաւ
Կապիցը ցած.
Շողոքորթը
Ըռխեց, գնաց։

Այս առակն ի՞նչ է ուզում ասել։

Կուռն ու ճուռը—ձեռն ու ոտը։
անշուշտ—անկասկած։
Ես զի—մեծ մայր, նանի։
խաս ու դումաշ—մետաքսէ, թրթիշումէ,
շողոքորթ—քաղցրախօս։
ըռխել—բերան։

92. Գայլի խոստովանանքը

Գայլի մահը մօտեցել էր։ Նա մեռնում էր,—դրա համար էլ սկսեց իր մեղքերը մէկ-մէկ խոստովանել... Բայց ընդամենը երեք ժամ էր ճնացել, որ հոգին տար. իսկ մեղքերն այնքան շատ էին, որ երեք օրն էլ բաւական չէր լինի բոլորը խոստովանելու համար։

Գայլը տեսնում է, որ հնար չը կայ, սկսում է իր արած լաւութիւնը մէկ-մէկ հաշուել։

— Մի անգամ,—ասում է նա,—մի գառն անցաւ մօտովս, իսկ ես, թէև շատ քաղցած էի, բայց ձեռք չը տւի նրան։ Ցիշում եմ թէ ինչպէս այդ ժամանակ մի ոչխար հեռուում կանգնած՝ ծիծաղում էր ինձ վրա, որ ես գառանը մաս-մաս չարի։ Բայց չը նայելով այն ոչխարի ծաղրին, ես թողի գառանը, որ ողջ առողջ անցնի իմ մօտովը։

Էս մէկ... Մէկ էլ...

— Ցիշում եմ, ա՛յ գայլ,—ձայն տւեց ոզնին, որ կանգնած էր գայլից քիչ հեռու,—այդ բանն այն ժամանակ պատահեց, երբ դու երկու թաթով թակարդն էիր ընկել և չէիր կարողանում տեղիցդ շարժուել։

Ո՞վ էր ճիշտ ասում, գա՞յլը թէ ոզնին։

93. Գայլն ու կատուն

Գայլն անտառից, փախաւ դեղը.
—Նեղն եմ, նեղը,—
ասաւ կատուին,—
քո հօր պատւին,
Աման քալա,
մի ճար արա։
Մի տես հալա
որարդ ու շուն, թազի, թուլա,
միաս են կրծում,
ինձ հալածում։
Աստած կարի դրանց հոտը,
մի մարդ ցոյց տուր պահւեմ մօտը։
—Այ ցեղակից,—գոչեց կատուն,—
գնա մտիր Մարօի տունը.
նա չափազանց բարի կին է։
—Ես էլ գիտեմ, որ անգին է,
բայց որ նրա հնդթին եմ կերել...
—Ինչդ կանգնէը, լաւ չես արել։
Եկ Դաւթի մօտ, դուրս կը կանչեմ։
—Նրանից էլ շատ կամաչեմ.
հէնց ամառը
կերայ Դաւթի փոքրիկ դառը։
—Ո՛չ ասեմ էլ. հա, մեր Զաքին։
—Էս գարնանն էլ՝ նրա մաքին
—Ո՛վ ճնաց էլ... հա, երէցը...
—Էս աշնանն էլ՝ դրա էծը։
—Այ դու ուտես չոռի մեծը.
քանիսն եղաւ...հինգը...վեցը...
ինչ երեսով, այ գող վատթար,
գիւղը մտար... տեղ չը գտա՞ր։
Գիւղն յիմար է,
որ թշնամուն պատսպարէ...
Ով ինչ բրթի,
էն կը խրթի։

Այս առածն ի՞նչ է ուզում ասել։

94. Գարնան շնորհը

Կանուչ տերեվով ծառը ծաղկեց
ու կոկոններով ինքուշ խազեց.
Կենսատրուր ցօղով մարգարտանման
ուռճանում էր նա շնորհը գարնան...
Եւ ծառը սիրով նրան ողջունեց
ու խոնարհելով ճղները կախեց։

Գարունն է եկել նախշուն թևերով,
Նախշուն թևերը՝ պէս-պէս ջևերով։

ՎԱՐԺՈՒԹԻՒՆ.— (պատասխանը գրել առանց գրքի)։

1. Ի՞նչով ծածկուեց ծառը եւ ի՞նչերով ճոխացաւ։ 2. Գարնան շնորհով ի՞նչով էր ուռճացում նա։ 3. Ո՞ւմ ողջունեց ծառը սիրով եւ ի՞նչ ասաւ։ 4. Ի՞նչպէս է եկել գարունը։ 5. Նախշուն թեւերն ի՞նչ ձեւերով։

95. Մայր-հողի գանգատը

Երազում Մայր-հողը հարցրեց Վահանին. «Ճանաչո՞ւմ ես ինձ, Վահան, գիտես ես ո՞վ եմ։

— Ոչ, դու ո՞վ ես, չեմ ճանաչում,—պատասխանեց Վահանը։

— Ես Մայր-հողն եմ, ամբողջ աշխարհին կերակրողը։ Ես քո տատն եմ, սիրելի Վահան,— ասաւ լացակումած Մայր-հողը։

— Ինչո՞ւ ես լալիս, տատի,—հարցրեց այս անգամ Վահանը։

— Ի՞նչպէս չը լամ, սիրելիս, իմ անհոգ զաւակը, էն երկրագործը,

ինձ շատ է բարկացնում։ Նա միայն վարելը գիտէ և շարունակ միևնոյն սերմը գցելը։ Ինձ չի կերակրում, չի պարարտացնում։ Ասա նրան, Վահան, որ ես իրանից շատ դժգոհ եմ։

— Կասեմ, տատի, կասեմ։

— Ասա նրան, որ եթէ նա ինձ ամեն տարի պարարտացնի ու սերմը փոխի, ես նրան մի տարում չորս տարուայ պաշար կը տամ։

— Լաւ, լաւ, տատի այդ էլ կասեմ։

— Հոգիս հանեց այս անպէտք քոլը։ Մի դժար բան չի սրանից ազատուելը։ Թող աշնանը մի բերան վարի ինձ, գարնանը մի անգամ էլ աշօրով շուռ տայ, ամառը թողնի արևի տակ, պրծաւ գնաց,— Վահան, այս էլ յիշեցրու նրան։

— Այդ էլ կասեմ, տատի, միամիտ կաց։

— Դու նրան այսպէս ասա.—Մայր-հողը պատւիրում է, որ իրեն լսես, եթէ ուզում ես հաց ունենաս։ Ականջ տարաւ նրա անտեղի գանգատը թէ՝ հողը ծերացել է, ուժից ընկել, էլ բանի պէտք չէ։ Ոչ, հէնց ինքն է անպէտքը։ Այս էլ ասա, Վահան։

— Կասեմ, կասեմ, տատի, միամիտ կաց։

— Գիտէս, Վահան, ես տեսակ-տեսակ հիւթեր ունեմ. հիւթ ունեմ հացաբոյսերի համար է, հիւթ ունեմ, գետնախնձորին է պէտք։ Հիւթեր էլ ունեմ, որ պանդան բանջարեղէնի է հարկաւոր։ Ամէն բոյս իրեն հարկաւոր հիւթն է ծծում։ Իմ բոլոր հիւթերը, որ ծծեն, չէ որ ուժասպառ կը լինեմ։ Ժամանակ էլ չեն տալիս, որ նոր հիւթեր հաւաքեմ։ Կովը, որ կով է, նրան կթելուց յետոյ՝ ժամանակ են տալիս, որ կաթ հաւաքի։ Ջիւն էլ շարունակ չեն հեծնում. սրան էլ են հանգիստ տալիս։ Այդ էլ կասես, Վահան։

— Իմացայ, տատի, իմացայ։ Բոլորը մէկ-մէկ կասեմ,—քնի մէջ բղաւեց Վահանն ու իր ձայնից զարթնեց։ Զարթնեց ու պատմեց իր հօրը։

Ո՞ւմ էր ասում Մայր-հողը։

Քոլ—անպէտք խոտ։	*հիւթ*—սնունդ։
աշօր—չութ։	*ուժասպառ*—ոյժից ընկած։

96. Դէպի մայր-հողը

Տուր ինձ աշօրը, փոցխը, բահն ու թին,
Երթամ ակօսեմ կուրծքը Մայր-հողի,
գարնան արևը թող ղէմքս այրի,
Թող քրտնեմ նրա շոգերի տակին։

Թող ինչ որ կուզեն համարեն մալդիկ
Սև աշխատանքը չարքաշ գեղջուկի,
Նա ինձ կը բերի և՛ քախտ, և՛ բարիք
ԵՒ իմ վաստակը նա կը պահի։

Դէպի Մայր-հողը դիմեցէք շուտով,
Դիմեցէք վատահ ու քաղցր յուսով,—
Վայ նրան, ով որ փախչում է հողից.
Ով խուսափում է չարքաշ կենցաղից։

Դէ, եկէք երթանք դէպի Մայր-հողը,
Դէպի հինաւուրց մեզ հաց տուողը,
Դէպի այն հողը՝ Տիրոջ պարգևած,
Ուր որ դուքանը դեռ չէ ակօսած։

97. Ճնճղուկ

Ամեն երեկոյ ճնճղուկը թառ էր լինում մեր պարտէզի ծառի վրա։ Նա տեղաւորւում էր երկու տերևների արանքում։ Փոքրիկ գլուխը թագցնում էր թևի տակ, կծկւում էր, փոքրանում, որ չար բազէն իրեն չը տեսնի։ Եւ այսպէս անուշ-անուշ քնում էր մինչև լուսաբաց։



Արշալոյսին ամենից վաղ էր զարթնում, ճըթ-ճըթում էր, շարժում էր փոքրիկ թևերը, ողջունում էր արևին, թռչում գնում էր կերակուր ճարելու իրեն համար։

Եւ ինչ էր նրա կերակուրը... նրա կերածը...

Մի մոռացած պատուղ ծառերի վրա, մի քանի հատիկ ճամբին վայր ընկած։ Նա կատաղութեամբ էր ուտում կուպիկ, պատիկ մատիկ, ուտես կուպիկ, պատիկ մատիկ, խմես ջրիկ, առի եզրիկ, քը՛առո...

ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆ.—(պատասխանը գրել առանց գրքի)։

1. Ճնճղուկը ո՞րտեղ էր թառում ամեն երեկոյ։ 2. Ո՞րտեղ էր տեղաւորւում ծառի վրա։ 3. Ի՞նչ էր անում նա, որ շար բազէն իրեն չը տեսնի։ 4. Մինչև լուսաբաց ի՞նչպէս էր քնում։ 5. Ե՞րբ էր զարթնում նա եւ ո՞ւր էր գնում։ 6. Ի՞նչ էր նրա կերակուրը։ 7. Կերակրուելուց յետոյ՝ նա ի՞նչ էր անում։ 8. Առաւօտից մինչեւ երեկոյ նրա ի՞նչն էր լսում։ 9. Այսպիսով երջանի՞կ էր նա։

Ժողովրդ. երգ.—Ա՛յ ճնճղուկիկ, մոխրաթևիկ,
կարմիր տոտիկ, սեպատակ փորիկ,

98. Թիֆլիսի պռնտվածառը

Ամենավաճառ էր կովկասի թիֆլիս քաղաքում: Ամենրումածառն իր մանրունկն էր գովում, մրգավաճառն իր միրգը, չկնավաճառն՝ իր չուկը, գրավաճառը՝ իր գիրքը:

Ժողովուրդը խռնված աոուտուր էր անում: Ես էլ ինչ համար գնեցի մի հովանոց, գնեցի և մի սրինգ, որ ամառը ասում մեր հովիւը ինչ նվագել սովորեցնի:

Օհ, ինչքան լաւ է երեկոյեան հովին-զովին սրնգի ղլղոցը:

ՎԱՐԺՈՒԹԻՒՆ.— (պատասխանը գրել առանց գրքի)։

1. Կովկասի ո՞ր քաղաքումն էր տոնավաճառ:
2. Ո՞վ էր գովում իր մանրունքը, իր միրքը, իր ծուկը, իր գիրքը:
3. Ո՞վ էր խռնված աոուտուր անում:
4. Ես էլ ինձ համար ինչե՞ր գնեցի:
5. Սրինգն ինչու համար գնեցի:
6. Երեկոյեան հովին-զովին ինչն է լաւ:

99. Հունձ

Ա.

Լուսացել էր, գիւղը կենդանացել...

Եղտում հարսը վաղուց էր վեր կացել և պաշարի խուրջինը պատրաստել: Հացը, սխտորն ու քացախով լիքը շիշը խուրջինի մի մասն էր գցել, իսկ սրոցը, մատնոցը, սահէնն ու փարչը՝ միւս: Էշին էլ մի լաւ թիմարելուց յետոյ՝ փալանն ու չուլը կապել էր ու պատրաստել:

Մարդը ոտքի կանգնեց, հագաւ հնձի սիպտակ շապիկը, երեսին մի երկու չուփ ջուր խփեց, գլխի փափախով դէմքը սրբ ու ձախ քսմսեց, սրբեց, մանգաղը թևը ձգեց ու բեռնած էշն առաջն անելով՝ դուրս գնաց տնից:

Գնում էր էշին թօշ-թօշ անելով, ու մի հաց կռան տակը ղրած, և՛ ուտում էր, և՛ մտածում.

— Վերի վէշից կսկսեմ հունձը, մինչև ճաշը կաղնիներին կը հասնեմ, մի քիչ պատառ-մատառ բերանս կը գցեմ, յետոյ մինչև իրիկուն մի երեք տասնեակ խուրձ էլ, որ կապեմ, հալալ կը լինի կերածս:

Գնալիս, աղբիւրիցը փարչը ջրով լցրեց, ինքն էլ, էշն էլ մի կուշտ ջուր խմեցին և շարունակեցին ճանապարհը: Արևը մի չւան բարձրացել էր, որ նրանք տեղ հասան: Նա շատ ուրախացաւ, երբ հասուն արտը տեսաւ. նրա մտքովն անցած հազար ու մի տեսակ չար ենթադրութիւնները կորան, քէֆն եկաւ, որ հասկերը իրար քսմսելով մի խոնարհ ողջոյն տուին իրեն: Փափախը վերցրեց, ծունկ չոքեց, հասկերից մի փունջ բռնեց և համբուրեց. յետոյ աչքերը դէպի երկինք բարձրացրեց ու ասաւ.

— Տէր Աստուած, քաղցր է քո դատաստանը, մինչև օրս պահել-պահպանել ես ինձ, օրէս դէնն էլ ողջութիւն տուր, անվնաս հնձեմ, խրձեմ, դիզեմ, կրեմ, կասեմ ու դեղնազարդա ցորենիս տիրանամ, յետոյ ես գիտեմ իմ մարդկութիւնը:

Բ.

Նախ քան հունձը, մեր հնձւոր մշակը մօտեցաւ, խուրջինն ու վալանն իջեցրեց էշից, արձակեց արօտի: Յետոյ թաշկինակով գլուխը կապեց, հնձի մատնոցը ձախ ձեռքի մատներին հագցրեց, աջով վեր առաւ մանգաղն ու երեսին խաչ հանելով սկսեց հնձել:

Ոքքան հնձում էր ու ոսկեփայլ հասկերը բուռն էր անում, փունջ հաւաքում, գետնին դարսում, այնքան աւելի քաջալերւում էր:



Հնձեց ու հնձեց։ Օհա՛յ, ինչ լաւ էր հնձում...

Արևի թէժ բոցն ու կրակը չէր ազդում ոգևորւած մշակին։ Քրտինքը կաթկթում էր ճակատից ու ականջների քամակից, թիկունքն ու կուրծքը հօ և՛ քրանում թաց էին լինում, և տաք արևի տակ չորանում։ Բայց նա անդադար հնձում էր ու հնձում։

Երբ սովեց, մանգաղն առաւ, գնաց կաղնիների սաւերը, աչ ցուցամատով ճակատի քրտինքը ծոր-ծոր ցած թափեց, ապա հանեց սահէնը, սխտորը մէջին ծեծեց, քացախով լցրեց, հացը բրդեց մէջն ու մի կո՛ւշտ կերաւ, թթւաշ բրդոշն այնքան ախորժելի էր ու զովացուցիչ, որ երկրորդ անգամ պատրաստեց ու կերաւ։ Յետոյ փարչը շրթունքներին դնելով՝ մի կուշտ էլ ջուր խմեց, բթացած մանգաղը սրեց ու դարձեալ ոտքի կանգնեց, գնաց իր գործին։

— Մինչև մութը կը հնձեմ,—մտածում էր նա,—իրիկնապահին՝ կապիչները կը պատրաստեմ ու խուրձ կը կապեմ։

Այդպէս էլ արաւ։ Երեկոյեան, երբ համարեց, տեսաւ ուղիղ չորս տասնեակ խուրձն էր հնձել ու կապել։

Ուրիշ իմաստով են հնծում՝

Սահէն—պղնձէ մաթլաբի։ | *փարչ—փայտէ կուլայ։*

---

100. Հնձին

Բարի լուսի հով ու զովին
հնձւորն առաւ սուր մանգաղ,
փունջ-փունջ լասեր ընկան թևին՝
լիք-լիք հասկեր թևից կախ։

Մի օրւայ մէջ արտը հասուն
հնձւորները հնձեցին,
արևի տակ հասկ ու ցօղուն
չորացան ու դեղնեցին։

Լասերն առան խուրձ կապեցին
հնձւորները քրտնաջան,
խրձերն առան դէզ դրեցին,
շուքը մտան հովացան։

Ադեղուկ լորի շինած լուծը
քանդւեց գլխին հիմնովին,
կարեց աչքի անուշ քունը՝
էլ տեղ չկար ձագերին։

Լաս—գերանդու, մանգաղի մէկ բերան կտրածը։ | *շուք—շուաք, սուեր։*

101. Վաղին

Առաւօտ է օրը, քաղցր է եղանակը, զովարար է երեկոն։

Գիւղացին օրւայ շոգին կալը կասել, վերջացրել է. երեկոյեան թեղ է դրել դարմանախառն ցորենը, աչքը հիւսիս է դարձրել ու անհամբեր սպասում է իր գոմն քրտինքի պատուղը քամելուն։

Քամին է գեղջուկի աշխատանք պատկողը։ Երեկոյեան անուշիկ հովը փչելուն պէս՝ նա առնում է իր հարսելին ու թին և քամում է երկարաձիգ թեղը, մի ծայրից կամաց-կամաց անցնելով միւս ծայրը։

Ո՛վ սիրտն աղնչուի ուրախ կարող է լինել այդ րոպէին, եթէ ոչ անխոնջ գիւղացու սիրտը։ Եւ ինչո՞ւ չը պէտք է ուրախ լինի, երբ բախտ ունի ինքն իր աչքով իր հալալ վաստակի պտուղը տեսնելու։

Ամբողջ տարին ինքը, իր կինը, եղբայրը, երեխան, իր եղն ու գոմէշը ցուրտ ու տաքի դիմանալով հողի հետ են խաղացել. վարել են ու ցանել, փոցխել են ու ջրել, հնձել են ու կասել։

Այժմ իր ընտանիքի առ իր անասունների մի տարւայ ապրուստը հաւաքել է իր աչքի առջև ու սրտատրոփ սպասում է մի մեղմ քամու։

Կալտորի սիրտը դող է ընկնում, երբ կալ կասելիս երկնքում մի կատր ամպ է առաջ գալիս. նա աղօթում է Աստծուն՝ խնայել իր աշխատանքը, ցրւել ամպերը, հեռացնել անձրևները։

Քամի առաւ Նրան... Նրան այսօր մի զուլալ քամի է հարկաւոր։ Թող փչէ այդ քամին ու գիւղացին մի երկու ժամում իր թեղը քամուն կը տայ կը քամի, իր հասիկը գարմանից կը հանի։ Շեղջի ցորենը կը խախալի, ամբարը կածի, պսպղուն յարդը կը հալի, մարագը կածի։

Գիւղացու սիրտը տեղն ընկաւ, փչեց քամին ու նա քամեց իր թեղը. նա այժմ կարող է հանգստանալ։ Հանգստանալուց առաջ ցորենի դէզից խրձերը քանդում, փռում է կալումը վաղւան համար։ Վաղւան պատրաստութիւնը տեսնելուց յետոյ՝ մի խուրձն էլ գլխատակն է դնում ու շորերը հագին, կալի մէջ տեղը պառկում անո՛ւշ քուն է մտնում։

ՓՈՒԱԴՐՈՒԹԻՒՆ.— (պատասխանը գրել առանց գրքի)։

1. Ի՞նչպիսի օր է, ի՞նչպիսի եղանակ, ի՞նչպիսի երեկոյ։ 2. Գիւղացին օրւայ շոգին ի՞նչ է արել, երեկոյեան ի՞նչ։ 3. Աչքը հիւսիս է դարձրել եւ ի՞նչի է սպասում։ 4. Քամին ի՞նչ է. երեկոյին անուշիկ հովը փչելուն պէս՝ գեղջուկն ի՞նչ է անում։ 5. Ինչո՞ւ է ուրախ գիւղացու սիրտը եւ ինչո՞ւ պէտք է ուրախ լինի։ 6. Ամբողջ տարին ո՞վքեր են աշխատել, ի՞նչպէս եւ ի՞նչ են արել։ 7. Այժմ ո՞ւմ ապրուստն է հաւաքել իր աչքի առջեւ եւ ի՞նչի է սպասում։ 8. Երբ կալ կասելիս երկնքում մի կտոր ամպ է առաջ գալիս, ո՞ւմ սիրտն է դող ընկնում եւ նա ի՞նչ է անում։ 9. Ի՞նչ տուր Նրան. Նրան այսօր ի՞նչ է հարկաւոր։ 10. Քամին որ փչէ, գիւղացին մի երկու ժամում ի՞նչ կանի։ 11. Փչից քամին նրա սիրտը ի՞նչ եղաւ, այժմ ի՞նչ կարող է անել, ի՞նչպէս հանգստանալ։



102. Կալի երգը

Հորովել հօ, հորովել հօ...
Կալ արա, եզը չան, կալ արա,
կալամէջ գընալ ու գալ արա,
գոռ ես իմ ախպէրը օգնական,
կալ արա, ոռնեռիդ ես դուբբան...

Հորովել հօ, հորովել հօ...
Կալ արա, վարդիկ չան, կալ արա,
էսօր էլ արտալի բան արա,
կալ արա, ցորենը մեզ լինի,
պսպղուն դարմանը քեզ լինի...

Հորովել հօ, հորովել հօ...
Վարեցինք, ցանեցինք ես ու դու,
հնձեցի, կրեցինք էս ու դու,
կալերս էլ որ կասենք ես ու դու,
էլ ցարդ չենք ունենայ ես ու դու։

1. Կալն ինչի՞ համար է:
2. Ուրիշ ի՞նչ անուններ գիտէք եզների, զոմշների եւ ծիերի:
3. Ի՞նչ պիտոյքներ են հարկատր կալ կասելու համար:
4. Բացի կասելուց, էլ ի՞նչպէս են զատում հատիկը ծղօտից:
5. Բացի **Կալի երգից** էլ ի՞նչ երգ ունի գիտացին: Ո՞վ գիտի մի այդպիսի երգ:

Ղուրբան—մատաղ։ | Վարդիկ—եզան անուն։

103. Աչուն

—Էր՛, մեր աղայ, ինչ որ տեսնում եմ՝ էս տարի բախտդ բացել է, ուրախ ես շատ, էդ ձեր ես շատպուամ, կանգնի տեսնենք։

—Ինչի՞ չեմ ուրախանայ, փառք Աստծու, ամբարները բերնէ բերան լիքն են։ Մառանս, մինչև շէմքը, ձեռիս աշխատանքով պըմբուռմ է։

Կալ ու կուտս հաւաքել, վերջացրել եմ։ Եկող տարուան վարս արած՝ պատրաստ է։ Եզ ու պանրիս, թթուեղինիս տարեկան պաշարն էլ կապել, պրծել եմ։—Ահա այն պատասխանը, որ առատ տարեայ աշնանը լսում էք չանասէր գիւղացու բերանից։

Այ, երկրագործի, այգեպանի, անասնապահի լինն ամառան քրտնքի կաթիլները մարգարտի հատիկներ են, ալմաստ քարի փայլուն ու թանկագին ակներ։

Երբ գիւղացին, լի աշնանն, իր աշխատանքի պտուղները քաղում է անվնաս՝ նրա հոգին հանդարտում է, նրա սիրտն ուրախանում։



Այդպիսի աշնանը գիւղացու քրտինքով ապրուստ անողները՝ լի ու լի ստանում են իրենց բաժինն ու իրենց հասանելիքը։

Գիւղացին, կուշտ թէ քաղցած, բերրի թէ անբերրի տարին, իր բերանի պատառը կը կիսի իր պարտքի դիմաց։

Թագաւորական ու գիւղական հարկերը տալը, գիւղի գործից մինչև գիւղական դատաւորի, տանուտէրի, մեծաւորների սիրտ շահելը՝ գիւղացու սովորութիւնն է եղել հնուց։ Սովորութիւն, որ հիմա դառել է պարտականութիւն գիւղացու համար։

Բայց...

Բայց վայը կը գայ աշխատաւոր գեղջուկի գլխին, եթէ տարին երաշտ ու անբերրի լինի... Օջախի պղինձը կը ծախւի, վերջին կովը դուրս կը քաշւի դռնից...

Բայց, նա դարձեալ չի ընկճւի,—կասի.— Թող առողջութիւն լինի, եկող տարի էս տարուան ջանաներն էլ կը հանեմ...

Բախտը բանել—յաջողել։
Ջանասէր—աշխատասէր։
Բերրի տարի—առատ, պտղաւէտ տարի։
Գգիր—գիւղի տանուտէրի օգնական։
Հարկ—խարջ։
պարտականութիւն—պարտք։
Երաշտ տարի—չոր, անձնձրև տարի։
Ընկճել—ուժից ընկնել, ճնշել։

Ա ս տ ծ.— Ով որ յոյս ունի, աչքալոյս ունի։

104. Անձրևը

Անձրևը բարակ մաղում էր։ Երկնքի պատի խիտ լերկներից թեթևակի սլսլբում էին... Անթիւ, անհաշիւ թռչուններ, թեերը կախած, բաղձում էին ամպամրրիկի փետուրներին։ Ծառերը իբրև օթևան պատրաստել էին այդ թեւաւորներին։

Անձրևը վանեի գնաց ամպրկայաւ, մինչև որ վեր կացաւ քամին, ցրիւ տուեց ամպերը ու երկայ պարզ-պարեգակը։ Նորից թեին տուին թռչունները ու թռան իրենց իգականից դէպի կապուրակ երկինք։

Անձրևը կոչացրել էր օդը, կեանք էր լցրել երկրին։

ՎԱՐԺՈՒԹԻՒՆ.—(պատասխանը գրել առանց գրքի։

1. Անծրեւն ինչ էր անում՝։
2. Ալեւոր անտառի տերեւներն ինչ էին անում՝։
3. Ինչ էին արել անթիւ, անհաշիւ թռչունները եւ ինչ էին արել այդ թռչուններին ծառերն իբրեւ օթեւան։
4. Անծրեւն ինչ եղաւ, մինչեւ որ քամին վեր կացաւ ինչ արաւ...
5. Թռչուններն ինչ արին, անծրեւն ինչ էր արել։

105. Հորովհել հօ՛

Ամպը ելաւ բարձր սարը՝
եկաւ անձրևը,
ամպը եկաւ՝ քամին հեաը՝
կարեց անձրևը...
Մաճկալն ելաւ. մաճը բռնեց,
սև հողը վարեց,
մաճկալն առաւ գոգնոց կապեց՝
ցորենը ցանեց։
Հոտաղն ելաւ նստեց լծին՝
հօրիքը գնաց,—
հոտաղն լծաւ լծիցը ցած՝
արօրը մնաց։
Եզնարածը արօսի մէջ
հանգիստ պառկել է,
եզնարածը ակօսի մէջ
անուշ քնել է։
Լուսածագին արտուն ելաւ
երգեց իր երգը,
լուսածագին մաճկալն ելաւ
մաճն առաւ ձեռքը... հորովել հօ...

Հոտաղ—գութանի եզը պահող։ *արօս*—հանգստի թողած վարելահող։

106. Բակի շուները

Արդէն գիշեր էր։ Վախի պէս մի զգացմունք բռնեց սիրտս։ Ո՞րտեղ անցկացնեմ գիշերս, ինչ անեմ, ո՞ւր գնամ...

Քամին փողոցների աւազոտ փոշին լցնում էր քիթս ու բերանս։ Երբեմն կանգնում էի մի անկիւնում, մի դռան առջև ու նորից քայլում, որովհետև չէի համբերում, որ կանգնած ցնամ։

Քաղցած, ամբողջ օրը ոտքի վրա, մի մեծ քաղաք ընկած՝ թափառում էի... Ո՛չ մի լուսամուտից բարեկամական մի լոյս չէը շողում ինձ համար։

Ես անօթի էի և շատ յոգնած, հազիւ էի կարողանում քայլել. եթէ մի տաք անկիւն գտնէի՝ մեռածի պէս խկոյն կը քնէի՝ մոռանալով քաղց և ամէն բան։

Վերջապէս, երկար թափառելուց յետոյ՝ գտայ մի բաց դարպաս։ Ներս մտայ։ Դա մի լաւ պատսպարելու տեղ էր, քամի էլ չկար։ Փողոցի լապտերի դժգոյն լոյսն աղօտ լուսաւորում էր բակը։ Դիտեցի չորս կողմս և տեսայ, որ մի անկիւնում, խոտերի վրա, հանգիստ նստած է մի մեծ շուն՝ առջևը հաց և մսի կտորներ։ Ջը վախեցայ, որովհետև նա լուռ նայում էր ինձ... Երևում էր, որ վրաս յարձակելու ոչ մի միտք չունէր։ Նա նայեց և աչքերը խփեց։

Ես շփեցի նրա գլուխը և բոլորովին հանգստացայ, ապահով տեղ էի գտել։ Լաւ տեղաւորեցի, ոտներս մեկնեցի և նրա առջևից սկսեցի ջոկել, իմ կարծիքով, այնպիսի մաքուր կտորներ, որոնց շան բերանը չէը դիպել։ Ջոկեցի և կերայ։

Իմ հարևանն այդ մի կողին աչքերը գցեց վրաս։ Ես մի փոքր վախեցայ. ով գիտե, յանկարծ չը յարձակի վրաս։ Բայց նա իմ սպասածից շատ բարի էր։ Նա միայն նայեց, և ապա վեր կացաւ թաթերով հանեց խոտի տակից հացի կաորներ ու ոսկորներ։ Յետոյ նստեց իր պաշարի առջև և նայեց երեսիս։ Վեր առաւ մի ոսկոր և սկսեց կրծել, երևի օրինակ էր տալիս ինձ, որ ես էլ կարող եմ մանակացել այդ անմահ սեղանին։



Ես հիացած էի, բայց աւելի շատ զգացւակ։ Զգում էի իմ և՛ բախտաւոր եմ և՛ աշխարհի մէջ ոչ մէնակ։ Բռնեցի բակի շան գլուխը և սիրով համբուրեցի։

Շունն ընթրելուց յետոյ՝ աչքերը խփեց ու քնեց։ Ես էլ՝ գոհ սրտով պառկեցի նրա կողքին ու քնեցի։ Առաւօտեան երբ վեր կացայ, թափ տւի վրայիս խոտերը, վերջին անգամ բռնեցի շան թաթը, հնօրհակալութեամբ սեղմեցի ու հեռացայ. ասի. «Որ պաշտօն դանեմ, սիրելի ընկեր, կը գամ ու քեզ կը տանեմ...»

Մի երկու շաբաթից յետոյ, երբ պաշտօն գտայ՝ եկայ տանելու նրան, բայց նա չը կար...

Հիմա քանի յիշում եմ այդ դէպքը, ինձ թւում է, որ ես մի ազնիւ բարեկամի հետ եմ ընթրել։ Այն րոպէին շունն իմ աչքում մարդ էր դառե ...

Ով գիտէ շան մասին մի ուրիշ պատմութիւն։

Դարպաս—բակի մեծ դուռ։
ապահով—անվտանգ, անվրկիւղ։
հիանալ—գոյլել։
պաշտօն—գործ, ծառայութիւն։

107. Տերեւներ

Ծլում ենք, ծաղկում,
գարնան օրերին
ու հիւր ենք մնում
կանաչ ճիւղերին։
Ամռան արևը
գալիս է շողում,
գոհար շաղիկը
մեր սիրտը ցօղում։
Դաշտը մերկացաւ,
էլ ծաղիկ չը կայ,
մեղմիկ զեփիւռը
էլ չի շընկշընկայ,

Ինչո՞ւ ճիւղիցդ
կախւենք ու գեղնենք,
լաւ չէ՞, որ մենք էլ
թև առնենք թռչենք։
Եկէք, քամիներ,
հեռու տեղերից,
թերտեցէք, տարէք
մեզ չոր ճիւղերից։
Թերտեցէք, առէք
մեզ ձեր թևերին,
աշնան օրերը
սև ու սուղ բերին։

Պատմեցէք այս ոտանաւորի բովանդակութիւնը ձեր խօսքերով։

108. Գնացող-վնացողներ



Եկան աշնան մառախլապատ օրերը։ Ծառերը թափեցին իրենց տերևները, այգիներն ու դաշտերը կանաչազուրկ եղան։

Գարնանը մեզ հիւր եկած հաւքերը՝ կռունկը, արագիլը, սարեակը, ծիծեռնակը, բլբուլն ու միւս երգիչ թռչունները, մեր ծառակառուցքանի զոյգ թևաւորւած, թռցրած ձագերով, աշնանը թևերը թափ կը տան ու իրենց վերջին կէկէցը, կկլոցը, ճռճռոցը, շշլոցը, ուռւոցը, ծլլոցը, ճլլոցն իրար խառնած՝ մեզ միաս բարով կասեն, մեր աշխարհը կը թողնեն, կը հեռանան։ Կը գնան, տաք հարաւ, ուր տաք ձմեռ անցկացնեն։

Տէրն իրենց հետ... բարի ճանապարհ... բարով գնան, բարով գան։ Մենք նրանցից չենք նեղանում։

Մեզ համար հերիք են՝ տարին բոլոր մեզ հետ, մեր աշխարհում մեծացող, մեր աշխարհում կեանք քաշող, մեր աշխարհում կեանքերը վերջացնող ագռաւը, կաչաղակը, կաքաւը, վայրի բադն ու սագը, մէկ էլ մեր հաւերի կուտը փախցնող, մեր հարևան ծառերը—ճնճղուկները։ Մենք սրանց սիրել ենք, դարձեալ կը սիրենք, սրանց հետ ուրախ կեանք կանցկացնենք։


Գնացողներին բարի ճանապարհ, մնացողներին կեանք, առողջութիւն...

Ա.Ռ.Ա.Ջ.— *Մշեցին գնաց Մուշ, Աստւած բանն աչողի։*

109. Կացէք, թռչուններ...

Սիրուն թռչուններ, ձեզ բան եմ ասում,
դուք ո՞ւր էք գնում, ինչ կայ հիւսիսում.
ցուրտ է հիւսիսը, ցուրտ, սառնամանիք,
կացէք թռչուններ, այնտեղ ինչ ունիք։
Լողում է հարաւն ոսկի ճաճանչում,
վառ արևն այնտեղ ամպ չի ճանաչում,
հարաւը ցուրտ չէ, ցուրտ, սառնամանիք,
կացէք թռչուններ, այնտեղ ինչ ունիք...
Օդում միասին թռչուններն ասին.
—Այն ցուրտ, անարև, հեռու հիւսիսում,—
մեր հայրենիքում, մեզ են ըսպասում։

110. Հիւանդապահ մայրը



ՇԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ.—(պատասխանեցէք հետեւեալ հարցերին գրաւոր և բանաւոր)։

1. Ի՞նչ էր արել մայրն իր երեխային: 2, Անկողնում երեխան հանգստացել, ի՞նչ էր եղել: 3. Ո՞րտեղից ի՞նչն էր լուսատրում հիւանդ երեխայի անկողինը: 4. Երեխայի թէ քնած եւ թէ արթնուն ժամանակ ո՞վ էր հսկում: 5. Ինչո՞ւ էր հսկում մայրը: 6. Ինչի՞ցն է երեւում, որ մայրը հսկում է հիւանդ երեխային: 7. Մայրը յոգնածութիւնից ի՞նչ էր արել: 8. Քնել էր, բայց ուշն ու միտքը ո՞ւմ կողմն էր. 9. Երեխայի մահճակալի մօտ եղած ամանները ինչո՞ւ համար են: 10. Մօր մօտ, սեղանին դրած սրսկին ինչի՞ սրսկ է: 11. Այսպէս, ամեն անգամ, երբ երեխաները հիւանդանում են ո՞վ է նրանց սիրով հսկում:

111. Բանտի պատուհանին

Ա.



Մի մեծ քաղաքում, նեղ ու ամուր բանտի մէջ նստած էր մի խեղճ բանտարկեալ: Երկար տարիներ նստած էր նա այնտեղ, հիւանդ ու տրտում: Ամբողջ օրը կանգնում էր նեղլիկ պատուհանի առջև, նայում էր դրսի աշխարհին ու կարօտով մտածում իր սիրելիների մասին, իր փոքրիկ զաւակների մասին: Մտածում էր՝ գուցե վաղուց արդէն ամենքը մոռացել են իրեն ու մեռած են համարում: Մտածում էր՝ արդեօք ինչ է կատարւում այնտեղ, դուրսը, իր հայրենիքում:

Մի երեկոյ էլ, երբ արեւը մայր էր մտնում, նա մօտեցաւ պատուհանին: Պատուհանի դիմաց հանդարտ սաւառնում էր արծիւը:

—Արծիւ, արծիւ,—կանչեց բանտարկեալը:—Սիրելի պատուհանիս, պատմի՝ թէ ինչ է կատարւում աշխարհում, մի երգ երգի ինձ համար:

—Ոչ,—պատասխանեց արծիւը,—քո պատուհանը շատ է նեղ, նըստելու տեղ չը կայ ինձ համար: Ես չեմ կարող քեզ պատմել թէ ինչ է կատարւում աշխարհում: Ես սակաւ եմ իմանում ներքև: Ես իմ բունը շինում եմ բարձր ժայռերի ու դարաւոր կաղնիների վրա: Ես թռչում եմ բարձր, բարձր, և իմ երգը միայն անմահ արևն է լսում:

Ասաւ արծիւն ու լայն թևերը թափահարեց, վերացաւ դէպի ամպերը:

Բանտարկեալը դարձաւ ծառերին, որոնք պատուհանի շուրջը գըտնում էին գալիս:

—Ծնճղուկներ, այ ճնճղուկներ, եկէք նստեցէք պատուհանիս, դուք պատմեցէք՝ ինչ է կատարւում աշխարհում: Մի երգ երգեցէք ինձ համար:

—Ծիւ, ծիւ, մենք ժամանակ չունենք: Մենք գործ ունենք: Մենք գնում ենք հաւաքելու ջաղացպանի թափած հատիկները,—ծլվլացին ճնճղուկները ու փախան:

Բ.

Մէկ էլ, մի քիչ յետոյ եկաւ մի գեղեցիկ թռչնակ, պատուեց բանտի պատուհանի առջև ու նստեց երկաթէ ձողի վրա:

—Բարով եկաք, իմ սիրուն սոխակ։ Շնորհակալ եմ, որ ինձ այցելեցիր։ Պատմի ինչ է կատարւում աշխարհում, մի երգ երգի ինձ համար։

—Ես կը պատմեմ քեզ, թէ ինչ է կատարւում աշխարհում, ես կերգեմ քեզ համար,—պատասխանեց սոխակը։

Եւ այնպէս սրտալի երգեց, որ խեղճ բանտարկեալը ուրախութիւնից լաց եղաւ։ Ընկաւ ծղօտի վրա. անվերջ լաց էր լինում։

«Երէկ, լուսադէմին,—երգում էր սոխակը,—այնպէս գով էր ու թարմ։ Ես թռայ իմայ քո տնակի առջևի պարտէզում, նստեցի կանաչ թփին, բաց պատուհանի դէմ ու երգում էի։

«Նոր զարթնել էր քո փոքրիկ տղան ու հարցնում էր՝ ուր է հայրիկս, մայրիկ, ե՞րբ կը գայ հայրիկս։

«Քո հարազատները միշտ յիշում են քեզ ու լաց են լինում, քեզ շատ են կարօտել, սպասում են քեզ ամեն օր։

«Մի վհատի. Աստած տեսնում է, որ անմեղ ես դու։ Կազատւես այս բանտից, կը տեսնես քո տունը, քո ընտանիքը, ու դարձեալ կապրես, ինչպէս ապրում էիր մի ժամանակ։

«Ամառւայ խաղաղ երեկոներին քո կնոջ հետ կը նստես ձեր դռանը, երեխաներդ ազմուկով շուրջդ կը խաղան, իսկ պարտէզում, կանաչ թփի վրա կը թառեմ ես ու կերգեմ ձեզ համար»...

Սոխակը երգում էր, իսկ բանտարկեալը՝ երեսնիվայր ընկած իր ծղօտէ անկողնի վրա՝ լաց էր լինում յուսով ու կարօտով...

Սա ինչ սոխակ է, որ այդպէս բանտարկեալի սրտից է խօսում եւ ուրտեղ է ապրում այդ սոխակը։

112. Արտուտի երգը

Մի մարդ տեսաւ գարնան մարգում
ոնց է արտուտն անուշ երգում,
վեր ճախրելով, ճռւողելով։
«Սա որ, ասաւ, էս վայրի տեղ
երգ է ասում էսքան շքեղ,
հապա թէ մեր տանը լինի,
ինչ դրախտի ձայն կը հանի»։
Բռնեց մարդի սիրուն երգչին,
տարաւ վակեց վանդակի մէջ։
Թռչնակը լուռ նայում էր խեղճ
հեռու, հեռու ճոխ մարգերին.
միտն էր բերում կեանքը նախկին,
ու էն կեանքի հուր կարօտով,
նեղ վանդակում, կոտրած սրտով,
երգում էր երգն իր գերութեան։

ԾԵՐՈՒԹԻՒՆ

113. Ծերունիների վէճը

Երկու ծերունի ապրում էին միևնոյն բնակարանում։ Նրանց մէջ դեռ ոչ մի անբաւականութիւն չէր ծագել։

Մի անգամ ծերունիներից մէկն ասում է միւսին.—

— Էս ինչիցն է, որ մարդիկ կուտում են իրար հետ։ Աբի մի փորձենք և մենք էլ կուենք...

— Հաւատամ, ես էլ չը գիտեմ,—պատասխանում է միւսը։

— Որ էդպէս է, աբի մի կուենք,—ասում է առաջինը։ Այ, էս ամանը դնում եմ սեղանին, ես կասեմ՝ իմն է, դու կասես՝ չէ՛, իմն է։ Ես կասեմ իմն է, դու կասես՝ չէ, իմն է։ Ու էսպէս կըսկսւի մեր կռիւը։

Ծերունիները խօսքը մին արին այսպէս ու ամանը դրին մէջաեղը։

— Էս ամանն իմն է,—ասաւ նրանցից մէկը։

— Իսկ ես կարծում եմ, որ իմ՛ է,—հանդիստ պատասխանեց միւսը։

— Ֆանը չէ, եղբայր, իմն է, իմը...Նորից պնդեց առաջինը։

— Դէ որ քոնն է, աս տար, էլ ասելդ ինչ է, ինչու ես նեղանում,—ասաւ երկրորդը։

Այսպէս էլ վերջացաւ ծերունիների վէճը։ Հակառակ իրենց ցանկութեան՝ չը կարողացան մի լաւ կուել։

Անբաւականութիւն—գժգոհութիւն։ | պնդեց—հաստատեց։
Խօսքը մին անել—համաձայնել։ | վէճ—խօսքի կռիւ։

ՓՈՒԱԴՐՈՒԹԻՒՆ.—(պատասխանը գրել առանց դրքի).

1. Ո՞վքեր էին ապրում միևնոյն բնակարանում։
2. Նրանց մէջ դեռ ի՞նչ չէր ծագել։
3. Մի անգամ ծերունիներից մէկն ի՞նչ է ասում միւսին։
4. Ի՞նչ է պատասխանում միւսը։
5. Ի՞նչ է ասում առաջինը, ի՞նչպէս սկսեցի մեր կռիւը։
6. Ծերունիները ե՞րբ ամանը դրին մէջ տեղը, ի՞նչ ասաւ առաջինը։
7. Ի՞նչ պատասխանեց երկրորդը։
8. Առաջինն ի՞նչպէս պնդեց, երկրորդն ի՞նչ պատասխանեց։
9. Ի՞նչպէս վերջացաւ ծերունիների վէճը։

114. Այգեպան Սիմօնը

Երեխաները գիւղն էին եկել։ Առաւօտը վաղ վեր կացան, լուացուեցին ու վազեցին իրենց այգին։ Յանկապատի մօտ կանգնած էր ծերունի Սիմօնը։

Սիմօնն այգեպանն էր դեռ այդ երեխաների պապի ժամանակից։ Նա դրանց հօրն ա՛յնքան էր ման ածել իր կռների վրա...

— Ա՛յ դուք բարո՛վ էք եկել, իմ ճուտիկներ։ Եկէք, տեսէք ինչպէս եմ պահել ձեր ծառերը,—ասաւ ու համբուրեց Արմէնին, Հեղուշին, Սուրիկին և Սաթիկին։

— Վա՛յ Սուրիկ ջան, ինչքան նման ես քո հայրիկին... Նա քեզ պէս խուճուճիկ ու չալ-չալաչիկ երեխայ էր... Նա էլ է այս այգում շատ վազվզել ու թռչկոտել։

Երեխաները զարմանում էին, որ իրենց հայրն էլ իրենց պէս փոքր է եղել, որ նա էլ է վազվզել այս այգում, որ Սիմօնը նրան էլ է ման ածել իր կռների վրա։ Մօտեցան, շրջապատեցին ծերունուն և սկսեցին վա՛ թաթաւել, համբուրել նրան, քիչ էր մնում, որ վայր գցէին խեղճին։

— Չ՛ը, ինչպէս են մեր ծառերը, պապի,—հարցնում էին մէկ մէկու յետևից երեխաները։

— Ա՛յ պապը ձեր կարմիրը կապի, բալիկներս, եկէք տանեմ ցոյց տամ։

Սիմօնը երեխաներից ամեն մէկի համար՝ նրանց ծնած տարին խնձորի մի-մի սերմն էր տնկել։ Այդ տունկերին նայում էր առանձին սիրով։ Այժմ նրանք իրենց կարմրաթուշիկ խնձորներով՝ ասես թէ ժպտում էին իրենց տէրերի դէմքին։

— Ջան, ջան, էս ինչ լաւ խնձորներ են...ուրախանում էին երեխաները։

Այո՛, ձեզ նման լաւն են,—ցոյց. էր տալիս Սիմօնը։—Ա՛յ, էս շաքարկենի խնձորենին՝ չորս տարեկան է, Սուրիկի չափ։ Էս մեղրակերքարկենի խնձորենին՝ չորս տարեկան է, Սուրիկի չափ։ Էս մեղրակեքենի՝ վեց տարեկան է, Սաթիկի չափ։ Էս հալւան՝ Հեղուշի նման ութը տարեկան է, իսկ էս մալաշին էլ Արմէնի չափ է՝ տասը տարեկան։ Ասում էր այգեպանն ու խնձորները քաղում, երեխաներին տալիս։

— Շնորհակալ ենք, պապի, շնորհակալ ենք...Մենք քեզ իսկի չենք մոռանայ։ Քաղաքից քեզ համար շատ-շատ բաներ կուղարկենք,—ասացին երեխաները ու խնձոր ուտելով՝ դուրս եկան այգուց։

Երբ հասան տուն, սկսեցին առանձին բաւականութեամբ պատմել իրենց տանեցոց այդպիսի Սիմօնի սիրալիր ընդունելութեան մասին։

115. Հօրս արցունքները

Ա.

Մի ամառուան կիրակի օր էր։ Պատարագը դուրս գալուց յետոյ՝ հայրս եկել, բազմել էր եկեղեցու բակում գտնուած երկար քարի վրա, իսկ ուստա Մարտիրոսն ու գիւղացիք նստել էին իրենց մշտական տեղերը։ Հայրս իր սովորութեան համեմատ՝ դեռ դիմեց ուստա Մարտիրոսին։

— Թշնամու աչքը քո՛ւր, ուստա Մարտիրոս։ Առում են, էս տարի բոստանիդ վարունգը լաւ է բռնել, հա՛...

— Բռնել է, էն էլ ինչ...—պատասխանեց ուստա Մարտիրոսը։—Ես մեր էս հողին մեռնեմ, գուր հօ չի ջրել մեր պապերի քրտինքով։

— Գազարն էլ մի արշին բարձրացել է,—վրա բերաւ միւս կողմից մի գիւղացի։

— Փառք Աստծու, գազարն էլ, կաղամբն էլ, էս տարի հերւանից լաւ են բռնել,—գոհացաւ ուստա Մարտիրոսը։

— Բա խնձորդ էլ որ հասնի, ասա աշնանը քո հիւրն ենք էլի,—կատակ արեց հայրս։

— Իմ ամեն օրւայ հիւրն ես, տէրտէր ջան, հրամեցէք։

Մինչ այս խօսք ու զրուցն էին, գիւղացիներից մի երկուսը խօսում էին իրար հետ.

— Մեր հողը էն հնդն է, որ բոստան ու այգի անկի,—հեղնում էր մէկը։

— Ծաղկել էին, համա պտուղ չեն բռնել, չէ,—պնդում էր միւսը։—Ուստա Մարտիրոսն է էլի, իր խելքով բոստանի տէր է դառել։

Բ.

Այդ օրւանից անցել էր մի քանի օր։ Ես, Նիկօլն ու Մոսէսը դպնում էինք մեր գետի ջրվէժի տակ լողանալու։ Հէնց որ անցանք ուստա Մարտիրոսի բոստանի մօտով. վարունգների հոտը քթիս դիպաւ։

— Տղերք, վարունգի հոտն առնո՞ւմ էք,—հարցրի ես։

— Առնում էլ ենք, մի բան էլ ուտե՛լ...Բացականչեցին տղաները,

— Ա՛խ, մի հնար լինէր, մտնէի, գոնէ մէկը քաղէի...

Մօտեցանք բոստանի դռանը։ Հաստ և ամուր կողպէք կար վրան։ Յանկարծ աչքովս ընկաւ ուռի ճամփան։ Զորացած ուռի ընթացքը գնում, չափարի տակն եղած անցքով մտնում էր բոստանը։

— Տղերք, էստեղով, էստեղով,—ցոյց ուռի ընկերներիս ու ուռի վոսով սողացի ներս։

Նիկօլն ու Մոսէսն էլ նոյնն արին։ Յաւակոտելով վազեցինք դէպի

վարունգները։ Իրար հրելով, ցողունները կոխոտելով, իրար ձեռքից խլելով՝ սկեսցինք վարունգները քաղել։ Քաղեցինք, ծոցերս լցրինք և արագ մարգերի վրայից թռչելով, բազուկներն ու գազարները կոխելով՝ նորից փշոտ չափարի տակից, առվի անցքով դուրս սողացինք։ Հևիհև շտապեցինք դէպի Ջրվէժը։ Նստեցինք կախ ընկած մի քարի տակ ու սկսեցինք ուտել գողացած վարունգները։

Գ.

Երեկոյեան, երբ արևը մայր մտնելու վրա էր, մէկ էլ նկատեցի ուստա Մարտիրոսի երկար հասակը։ Նա գալիս էր ուղիղ մեր տուն։ Սիրտս դողաց, բայց ասի՝ ձրտեղից պէտք է իմացած լինի։ Դանդաղ քայլերով, դէմքը մռայլ, մօտեցաւ նա մեր տախտին։



— Բարի իրիկուն, տէրտէր,— ասաւ նա ու նստեց տախտի ծայրին։ Ձեռքի փայտը դրեց ծընկան վրա, հանեց չիբուխն ու պատրաստեց, որ ծխի։

— Աստծու բարին, ուստա Մարտիրոս,—պատասխանեց հայրս և նստեց Մարտիրոսի դիմացը, իր փափուկ աթոռի վրա։

Ես վազեցի դէպի կրակը, մի վառուող փայտ հանեցի և մօտ բերի, ուստա Մարտիրոսի չիբուխը կպցրի, աշխատում էի նրան դուր գալ։ Մարտիրոսը չիբուխը կպցրեց, կրակն ինձ յետ տուաւ ու վրաս չընայեց։

— Հը՞, ուստա Մարտիրոս, բոստանդ ինչպէս է—տուաւ իր սիրելի հարցն իմ հայրը։

— Տղիդ խրատի, տէրտէր, ուրիշ անգամ էլ իմ բոստանը չը մրատնի,—ասաւ նա վշտացած։

— Ինչպէս թէ չը մտնի։

— Իսօր մտել է, վարունգներս տրորել, կաղամբիս թփերը կոտրատել։ Տղիդ խրատի, տէր-տէր։

— Այ տղայ, դու էսօր ուստա Մարտիրոսի բոստանը մտել ես, —հարցրեց ինձ հայրս յուզուած և խստօրէն։

— Չէ, տէրտէր,—ասացի ես։

— Տեսնում ես, չի մտել,—ասաւ հայրս հանգստացած։

— Ասում եմ, մտել է։ Տղիդ խրատի, տէրտէր, վատ կը մեծանայ։

— Այ տղայ, ճշմարիտ ասա, մտել ես ուստա Մարտիրոսի բոստան

— Ո՛չ, չեմ մտել ասացի ես։

— Ասում եմ քեզ՝ չի մտել,—ուստա Մարտիրոս,—պնդեց հայրս։

— Ես էլ ասում եմ մտել է,—նորից շեշտեց ուստա Մարտիրոսը, —տղիդ խրատի, տէրտէր, մեղք ես։

— Ա՛յ տղայ, հոգիս մեղքի տակ մի դիր... Աչքիս մտիկ, ճշմարիտն ասա, ուստա Մարտիրոսի բոստանը մտե՞լ ես թէ ոչ,— դարձաւ հայրս նորից ինձ։

— Չեմ մտել, ասում եմ, ինչ ես ուզում ինձանից։

— Ուստա Մարտիրոս, տղաս որ ասում է՝ չեմ մտել, ուրեմն չի մտել,—ասաւ հայրս վիրաւորուած ձայնով,—ուրիշները մտած կը լինեն։ Տղաս ինձ իր օրումը սուտ չի ասի։

— Տղիդ խրատի, տէրտէր,—կրկնեց զսպած զայրոյթով Մարտիրոսը և ծոցից հանելով մի կարմիր չթի կտոր, ասաւ.—Բա էս ո՞ւմ արխալուղի չթի կտորն է։ Միայն ես ունէի այդ չթից արխալուղ. հայրս քաղաք գնացած ժամանակ՝ առել էր այդ կտորը։

Հայրս զունատուեց. նա մէկ ինձ էր նայում, մէկ այդ չթի կտորին։

Գլուխս ցած գցեցի։ Երբ աչքիս տակով նայեցի հօրս, տեսայ արցունքները պլորւում են նրա թառամած այտերով՝ սպիտակ բեխերի և երկար մօրուքի վրա։

Երանի թէ խօսէր, երանի թէ նախատէր, երանի թէ ձեռքի գաւազանով զարկէր ինձ, միայն թէ չը լռէր այդպէս, միայն թէ այդ արցունքները չը վազէին վշտացած աչքերից...

Այդ օրւանից անցել են շատ տարիներ, կեանքի հոգսերն իմ մազերի մէջ էլ սպիտակ են հիւսել, շատ բաներ են իմ մանկութեան օրերից մոքիցս ջնջել, անհետացել, բայց արցունքների այն կաթիլները, այն վշտացած խորունկ աչքերը միշտ հոգուս առջևն են...

116. Ծեր Դերեզը

Դիշերը իջաւ,
Թանձրացաւ մութը
ու նրւաղեցին
ձայները արտում,
յոգնեցին, հանգան..
Ծերուկ Դերեզը
սգում է մենակ
խաւար անդնդում։

Սգաւոր զեռը
ծերուկ Դերեզը,
դօշը քրքրած,
ջուրը փրփրած,
քարքարոտ ափին,
լեռնոտ քարափին
դեռ հեծեծում է
ու դեռ ծեծում է...

117. Հող ու հայր

Քաւոր Աւետը մի լաւ տարդ էր. սիրուր չէն, պռունր չէն: Ծանօր, անծանօթ հաւատար յարթում էին նրան: Ծարաւին զուր կաթ նրա պռանր, խաղցածին հաց: Զիաւոր ու ո-պաւոր հին գալիս, հին գնում էին: Օրող աւտպակն անգամ Քաւոր Աւետի պռաւարին չէր դիպչում: Գեղ, աւան, գաւառ հաւանում էին նրա ատածր, հաւատում էին նրա խօսքին: Ասպէս համբաւ ունէր Քաւոր Աւետը էապէս կօրաւոր էր Աւետի աղ ու հացը:

ՎԱՐԺՈՒԹԻՒՆ.—(պատասխանը գրել առանց գրքի)։

1. Ինչպիսի մարդ էր քաւոր Աւետը: 2. Ծանօթ, անծանօթ ինչ էին ա: նում նրան: 3. Ինչ կար նրա տանը: 4. Ինչ չէր անում գող աւազակն անգամ: 5. Ինչ էին անում նրա ատածը գեղ, աւան, գաւառ եւ ինչ էին անում նրա խօսքին: 6. Ինչ ունէր քաւոր Աւետը: 7. Ինչ էր Աւետի աղ ու հացը:

---

118. Փորի դեղ

Մի գէլ, մի արջ, մի ագռաւ
ապրում էին աթպօր պէս։
Մի օր գտան մի մեծ փորչ,
փորը լէն-լէն, բուկը կարճ.
մէջը լիքը, լիքը եղ,
ու պահեցին մի լաւ տեղ։
Գէլը մի օր, կիրակի,
գնաց բերեց մի մաքի։

Արջը գնաց կրակի...
էն աղուէսն էլ իր հանգի՝
միսը արեց զաւուրմա,—
տեսնենք տեղը կը ՃԱ...
Ու աղուէսը եղ ու միս
ծածուկ կերաւ մի տմիս։
Վերջը կանչեց.
— Վահ, աման,
ով է կերել զաւուրման.
ով է կերել մեր եղը,
քան չի թողել իր տեղը։
Արջը էդտեղ փընթփընթաց,
գէլը կանգնեց վընգվընգաց,
աղուէսն էլ սուտ թընգթընգաց.—
— Այ քէֆ գանեմ ես գողին...
փարչը չարդեմ իր կողին։
Դուք չէք կարող ինձ խաբել,
մէջը լիքը, լիքը եղ,
ու պահեցին մի լաւ տեղ։
Գէլը մի օր, կիրակի,
գնաց բերեց մի մաքի։
Արջիկ-փարչիկ գէլ ու փէլ։
Եկէք շուտով, էստեղ մենք
արևի տակ քիչ քնենք.
ում մէջքիցը եղ գուրս գայ,
նա է գողը, կայ-չըկայ...
Ու փուեցին երկար, կարճ,
գող աղուէսը, գէլն ու արջ։
Գող աղուէսը սուս ու փուս,
կամաց-կամաց, կուզէկուզ,
վազեց փարչը լաւ քերեց,
թաթով մի քիչ եղ բերեց,
քսեց գէլի կռնակին,
արջին ասաւ.—Էլ ասքի,
ես գտել եմ մեր գողը,
գէլն է կերել մեր եղը...
Ու երկուսով սեղնուսեղ
գէլին արին փորի դեղ։

Մամի—մայր ոչխար։ | կռճակ—մէջք։

119. Պապն ու թոռները

Մի անգամ պապը չաղաց գնալիս մտածում է.—

— Թոռներս որ այսքան սիրում են ինձ և «պապի ջան» ասում, արդեօք, հէքիաթի, երգի կամ խաղալու համար է, թէ ճիշտ սիրում են ինձ։

Մտածում է, մտածում ու ինքն իրեն ասում...—«Ես այդ պիտի փորձեմ և հիմա լաւ ժամանակն է, ոչ մայրն է տանը նրանց, ոչ հայրը։

Հենց այդ րոպէին իրենց հարևան Սիսակը չաղացից տուն էր գնում։ Պապն ասում է նրան։

— Սիսակ, գնա մեր տանն ասա, որ պապը վայր է ընկել չաղացի պատից ու ոտը կոտրել է։

Սիսակը գնում, ասում է։ Թոռնիկները այդ լուրը լսելուն պէս՝ իսկոյն դուրս են թռչում տանից, որը գլխաբաց, որը բոբիկ, լալով վազում են չաղաց։

— Ո՞ւր է մեր պապը, հարցնում են չաղացպանին։

— Ձը գիտեմ, բաւականին ժամանակ է ինչ դուրս է գնացել,—պատասխանում է չաղացպանը։

Թոռներն իսկոյն դուրս են վազում, ման են գալիս չաղացի շուրջը, բայց պապը չը կայ ու չը կայ։

Դու մի ասիլ, խորամանկ պապը գնում է ու խոտերի մեջ թագնւում։ Թոռները բաւականին ման գալուց յետոյ, երբ պապին չեն գըտնում, յուսահատւում են։ Վերջը նրանցից մէկն ասում է.—

— Պապի ոտը որ կոտրւել է, շատ կարելի է չի կարողացել վեր կենալ։ Գլորւել, ընկել է ջուրը։

— Որ այդպէս է, եկէք գնանք ջրի մեջ փնտռենք,—ասում է մի ուրիշը։

— Ճշմն է, մենք էլ կը խեղդւենք,—ասում է մի երրորդը։

— Ինչ անենք թէ կը խեղդւենք, մենք հօ պապից ազիզ չենք,—ասում են ու շորերը հանում, մանում են ջուրը՝ պապին փնտռելու։

Մին էլ յանկարծ, պապը գալիս, դլխների վերևը կանգնում է.—

— Այդ ինչ էք ման գալիս այդտեղ, այ բալէք։

— Վայ, պապի ջան, դու ես, քեզ ենք ման գալիս, քեզ,—աղաղակում են երեխաները ու թաց-թաց վազում, փաթաթւում են պապին։

120. Սկիւռ

Սկիւռն անտառում շատ լաւ էր ապրում։ Ինչն էր պակաս։ Ընկոյզ ասես շատ, կաղին, ինչքան ուզես։ Ջուրը որ, կար ու կար։ Անտառի առուն էր պակաս, թէ՝ աղբիւրը։ Ամիր, ինչքան սիրագ է ուզում։



Սկիւռը նատած էր արևի տակ ու իրեն համար տաքանում էր։ Ցրտերին մտնում էր ծառի փչակը, թաղւում էր չոր տերևների մէջ ու քնում։ Ատածուց էլ ինչ կուզէր, տեղը համ տաք էր, համ փափուկ...

Ձանել-Ջիւան օրերն այսպէս անցկացրեց սկիւռը։ Երբ ձերուբիւնը վրա հասաւ, ամեն ինչ փոխւեց։ Ատամները թափւեցին, աչքի լոյսը պակասեց, ուժից ընկաւ ու արևն էլ առաջւայ նման չէր տաքացնում նրան։

— Ա՜խ,—ասում էր սկիւռը,—աշխարհը վատացել է, առաջւանը չէ։ Արեգակն էլ ցրտել է, ինձ չի տաքացնում, ընկոյզը հօ պնդացել է, կրծել չի լինում, կաղինն էլ Ատաւած գլխից է կարել։ Էս ինչ բան է. ման եմ գալիս, ման, մի պուտ ջուր չեմ գտնում. առուները ցամաքել են, ճահիճները չորացել են։ Չէ, աշխարհը վատացել է, որ վատացել է։

Անիծում էր ու անիծում ու չէր նկատում, որ ոչ թէ աշխարհն է

վատացել, այլ ինքն է ծերացել ու էլ առաջւան ճարպիկ սկիւռը չի...

Ա ռ ա ծ.—Ծերուբիւնը գերութիւն է։

ՓՈՒԱԴՐՈՒԹԻՒՆ.—(պատասխանը գրնել առանց գրքի)։

1, Որտեղ էր ապրում սկիւռը։ 2. Ինչ էր տալիս նրան անտառը։ 3. Ինչպէս էր պաշտպանւում գրտի.։ 4. Ինչից երեւաց, որ սկիւռը ծերացել է։ 5. Ինչ էր ասում սկիւռը։ 6. Ով էր փոխել՝ սկիւռը թէ աշխարհը.

121. Այգի

Ժպղկել ես, այգիս,
Ժպրում ես դէմիս,
Ուրախ է հոգիս։
Ժառերդ անհամար,
Ճղներդ կամար,
Սիլգիդ իմ դալար։

Թռչուններն անիւ,
Ձագուկներն անիւ
Սիսպոյց ձեզ պարգև։
Թող նրանց երգը,
Նրանց օրհներգը,
Սպաի ձո բերվը։

122. Ծովիկ թագուհին

— Ես ամեն բան անում եմ—ասաւ Ծովիկ Թագուհին իր Թոռնիկին։—Եթէ ես չը լինեմ, աշխարհն ինչպէս կապրի...Ով կամելու ջուր ուզէր՝ չէր ճարի։ Իսկ ես, իմ ջրով յագեցնում եմ ծարաւներին։

Երեկոյեան ջրերից ու խոնաւ տեղերից մշուշը հաւաքում եմ, գիշերը խտացնում, առաւօտը բաց թողնում։ Արևը այդ մշուշը տանում է վեր...

Մշուշը վերևում գառնում է ամպ. յետոյ՝ մի տեղ ցօղի պէս է ցած թափւում, մի ուրիշ տեղ՝ անձրևի։ Ամեն մի ծիլ, ամեն մի խոտ, ամեն մի ծառ ու ծաղիկ խմում է նրանից ու կշտանում։

— Ապա, էն ձվ է, տատիկ, քո ջուրը նորից հաւաքում, առւակներ կազմում, գետերի մէջ թափում ու տանում-հասցնում կապոյտ ծովը։

— Այդ ամենը ես եմ անում, Թոռնիկ։ Ծառի ամեն մի տերևը լսանում եմ, ամեն մի խոտիկը ցօղով սրսկում, արմատը ջրում։

Գիտեմ իմ Ջրերում ոքքան կենդանի արարածներ են ապրում... Թիւ ու համար չը կայ։ Ձրային որդերը, խխունջները, խեցգետինները, դորտերն ու ամեն տեսակի ձկներն, ինձ գովում են։

Ջրերի վրա ապրող թռչունները, երկարակտուց արագիլները, ձկնկուլները, կռունկներն և ճահճային թռչուններն իմ կեանքն են օրհնում։

Եթէ ցօղ չը տամ, անձրև չը թափեմ, ճահիճները չորացնեմ, գետինն աւազով ծածկեմ, էլ նրանք ապրելու տեղ չեն ունենայ։

— Այդքանը դու մենակ ինչպէս ես անում, տատիկ։

— Ես օգնականներ ունեմ, Թոռնիկս,—իմ առաջին օգնականը Կարմիր-արևն է. նա է, որ իմ մշուշը բարձրացնում է երկինք, նա է որ տաքութիւն ու լոյս է տալիս խոտին, ծառին ու ծաղկին։ Իմ երկրորդ օգնականը Թևաւոր-քամին է. նա է, որ իմ ամպերը փռում է աւեն տեղ, նա է, որ ինձ տանում է ամեն աշխարհ։ Ունիմ և մի երրորդ օգնական,—նա Ցուրտ-սառնամանիքն է.—նա է, որ վերևից ձիւն է թափում, գետինը ծածկում, որ ոչ մի սերմ ու արմատ չը մրսի, չը փչանայ։ Նա է, որ Ջրերը ծածկում է առուցով ու ձկներին տաք պահում։

— Օ՛, ինչքան բարի ես, Ծովիկ տատի,—ասաւ Թոռնիկն ու փաթաթուեց նրա վզովը։

Համեմատեցէք այս յօդուածն ու ծնը տովորած «Ջրի տրտունջը» միմեանց հետ։

123. Մայրը

Սենեակի մէջին
կանթեղն է ցոլում.
դազազած քամին
դռանն է սուլում։

Անքուն մայրիկը
ընկած գոյդ ծնկան՝
օրօր է ասում,
օրօրում մանկան։

—Էհ, հերիք, հերիք,
քամի ու մրրիկ,
հանգիստ, չինարներ,
քամու քնարներ։

Ա՛խ, դուք լռեցէք,
մայրն է գեղգեղում.
Թողէք մանկիկս
ննջի իր տեղում։

Էլ մի որոտա
դու, ահեղ որոտ.
իմ անուշ բալէն
քնի է կարօտ։

Հեռացէք, ամպեր,
ամպեր բքածին,
հանգիստ քուն տւէք
սրտիս սիրածին։

Քնիր, բալիկս,
աղօթքով քո մօր.
Քամի և որոտ
կը լռեն, օրօր։

Վաղը կը տեսնեն
աչերդ կրկին
և՛ սէր, և՛ գգւանք,
և՛ պայծառ երկին։

Գազազած—բարկացած։
մրրիկ—ուժեղ քամի։
քնար—նուագելու գործիք։
գեղգեղում—քաղցր երգում։
բքածին—բուք-բորան ծնող։
ահեղ—սոսկալի։
զգւանք—գուրգուրանք։
որոտ—ամպերի գոռգոռոց։

124. Ձմեռ

Ձիւնն եկել, հողի երեսը պինդ ծածկել է, պարզնկան ու սառնամանիքը կանաչ ու գեղջ ծառերին մերկացրել, շինել են չոր ցախ։ Ցուրան ու բուքը իմ աշխատասէր ընկեր եղանը, իմ գոմշին, իմ ոչխարին, իմ կթանին ու լծկանին գոմն է կոխել ու չի թողնում, որ երկնքի երես տեսնեն։ Գործ չի մնացել՝ գործենք, անելիք չը կայ՝ անենք, ծոյլերի վրայ ծիծաղում ենք. էն օրին ենք հասել, որ ուզենք, չուզենք պիտի մենք էլ ծուլանանք,—դժգոհում էր աշխատասէր գիւղացին։



— Էյ խելքի պուտուկ, էդ ինչ ես ասում,—յանդիմանում էր նրան մի ուրիշը,—դու չը գիտես, որ աշխարհս տեսքն ու կանոնը ստեղծողի կողմից չափած, ձևած է։ Տարին տասներկու ամիս եզը կը դիմանայր, եթէ մի երեք ամիս չը հանգստանար։ Չաղացի քարը որ քար է, իրար քաւելուց էլի մաշւում է։ Մարդ թէ անասուն, եթէ ձմեռը չը հանգստանային, երկու տարուայ կը մաշւէին, կոչնչանային։

Ծառ ու թփի, խոտ ու ծաղկի արմատները հողի տակին են. աշնանացանը աշնան վերջին մի քիչ կանաչել, փշշշել, բարձրացել էր. թէ որ ձիւն չը գար ու էդ կանաչեղէնը չը ծածկէր, ողջը ցրտահար կը լինէր։

Էս օրւայ ձիւնը թէ որ գարնանը չը հալւէր, ջուր չը կարւէր, քո ծառ ու տունկի արմատները չը կակղացնէր, քո լինն ամառան աշխատանքը իզուր կանցնէր։

Երբ աշխատանքի օրերը կը բացւեն, մեր կապած տաւարը գաշտը կը հանենք, գութանը սարքի կը գցենք, մանգաղ, բահ, կացին, ցաքատ ու ամեն տեսակ գործիք կը սրենք, կը պատրաստենք, երեսներիս խաչ կը հանենք ու մեր հալալ աշխատանքին կը կենանք։

Փորձած բան է. ով էդ օրերին չաշխատի, արիւն քրտինք չը թափի, հաց ու ջրից կընկնի, խալխի դռների աղքատը կը դառնայ։

Եթէ ձիւն չը գար, ի՞նչ կը լինէր հողը

Պարզնկայ գիշեր—անամպ գիշեր։
ղժզոն—անբաւական։
խելքի պուտուկ—դատարկ գլուխ։
յանդիմանել—խրատել։
ցրտահար—ցուրտը տւած, ցրտատար։
ցաքատ—վազ, թուփ կտրելու դանակ։

125. Պապս

Մի օր, տանը, մեր մեծ սենեակում, մենակ էի մնացել և չը գիտէի ինչ անեմ։ Յանկարծ նկատեցի, որ մի կապոյտ ճանճ եկել նստել է պատից կախ ուած հայելու կողքին։

Բարձրացայ աթոռի վրա այդ կապոյտ ճանճը բռնելու։ Բարձրանալիս կպայ հայելուն։ Կպայ ու այ քեզ փորձանք, թոկը կտրեց, հայելին ջրվեց, ընկաւ սեղանի ժամացոյցի վրա, ժամացոյցն էլ կպաւ մոմակալներին և այս բոլորը մի սոսկալի դղրդոցով թափուեցին ներքև, յատակի վրա։ Թափուեցին ու ջարդ ու փշուր եղան։

Ես շշմեցի, մնացի տեղս անշարժ կանգնած։ Այդ միջոցին բակում հաջում էին շները և տան դղրդոցի ձայնը դուրսը չը լսեցին։ Միայն կողքի սենեակից, հիւանդ պառկած պապս ինձ կանչեց.

— Ա՛յ տղայ, Յակոբ, էդ ինչ ազմուկ էր...

Ես չուզեցի եղելութիւնն ասել նրան և յուզմունք պատճառել. ներս մտայ շտապով և հանգիստ կերպով պատասխանեցի.

— Ոչինչ, պապի ջան, անհանգիստ մի լինի, գրչակոթս էր, ձեռիցս վայր ընկաւ։

— Գրչակոթդ, բալաս, գրչակոթդ։

— Այո, պապի ջան, գրչակոթս ձեռիցս վայր ընկաւ։

Պապս զարմացած վրա նստեց տեղի մէջ, յենուեց արմունկին և նրա դէմքի վրա փայլեց մի բարի և մի զոհ ժպիտ։ Նայեց ինձ, նայեց և ուրախութիւնից բացականչեց՝ [illegible] խփելով.

— Յակոբ ջան, բալաս, քա տասում էք խլացել եմ... Տեսար ինչ սուր ականջ ունեմ...

— Ո՛վ է տասում թէ խլացել ես, պապի ջան, այդ ինչ ես մտածում։ Ո՛վ կը թողնի, որ դու այդպէս շուտով ծերանաս։

— Ապրես, բալաս, շատ ապրես, դու որ ինձ էդպէս սիրա ես տալիս՝ սիրտդ միշտ անթառամ ճնա։ Աստծու անհատնում օրհնութիւնը քեզանից անպակաս լինի։ Ուր որ դնաս՝ քարը կանաչի, աւազը ջուր տայ։ Ջէրդ ու ծոցդ լիքը լինի և միշտ ուրախ օրում լինես։

Ու պապիս օրհնութիւնն այնքան յուզեց, ուրախացրեց ինձ, որ ես ակամայից մոռացայ և՛ փշրուած հայելին, և՛ ջաղջախուած ժամացոյցը, և՛ էն անպիտան կապոյտ ճանճը։

Ցենուել—կրթուել։ | *Ջէր*—գրպան։

126. Տատս

Ա.

Սառան տատս շատ մտառս կին էր։

Նա թէև ծերացել և վաղուց հարսների տէր էր դարձել, բայց դեռ աշխոյժ էր և իր տան կառավարութիւնը ձեռքից բաց չէր թողնում։ Երկար տարիների ընթացքում նա այնքան էր փորձուել, որ իղուր տեղը մի տեղ անգամ չէր կորցնի իր ընտանիքից։



Գիւղում, ոմ չէր ճանաչում տատիս, գեղկուհիներից ոչը խրատ ու խորհուրդ չէր լսել նրանից։ Օտարն անգամ նրա սրտի սիրելին էր և նրա հարազատ բարեկամը։ Ամենքը, մի որևէ կարիքի կամ նեղութեան ժամանակ՝ վազում, գալիս էին նրանից խելք սովորելու։

Եւ իրաւ, նրա շէնք ու շնորհքը, ձեռքի ջուրքը, նրա կար ու ձևը, հունց ու սլաղունցը, և վերջապէս նրա սարք ու կարգը և տունն ու տեղը այնքան շնորհալի և խրատական էին, որ ամենքը շատ էին օրինակ առնել նրանից։

Լուսահոգին—ախ, նանի ջան,—անմոռանալի է մանաւանդ իր թոռների համար... Գիտէք, ինչպէս էր սիրում նրանց։ Նրա կարծիքով, արևն ու անձրևն իր թոռների բախտին էին արար-աշխարհին լոյս ու կեանք տալի, երկնքի աստղերից ամենափայլուններն՝ իր աչքիլոյս բալէքին էին պատկանում։

Նա տեղնուտեղը սէր էր և քաղցրութիւն։ Որքան իր հարազատներին ուզում էր աւելի սիրել, այնքան ուրիշներն էին լիանում նրա անչափ սիրուց։ Ինչքան նա իր թոռներին ցանկանում էր աւելի խնամել, այնքան ուրիշներն ևս գուրգուրում ու փայփայում էին նրա փաղաքշանքներով։ Եւ հէնց այդ էր պատճառը, որ ամենքը նրան հօրաքոյր էին կանչում։

Մեր տունը՝ հեքիմ Գէորգի օջախը՝ մի մեծ ընտանիք էր. քոյրն ու եղբայրը տանից անպակաս, հարսներն ու փեսաներն անբաժան, իսկ դրանց բոլորի երեխաներին հօ՝ թիւ ու համար չը կար... Այդքանը բաւական չէր, եկող-գնացողներն էլ գրեթէ անպակաս էին ամեն օր։ Ու, տատս ամբողջ օրով զբաղած էր նրանցով։ Այդ բազմութեան մէջ մեր երեսին մարիկ աւազ չը կար... հարսներն անգամ առանց տատիս կամքի չէին վատահանում մեր սրտի ուզածը կատարել։

Բ.

Երբեմն բարկացած գնում էինք տատի մօտ՝ Թաժահայց ուզելու.

— Չեզ մատաղ, Թաժա հացը հիւրերը կերան,— քաղցրախօսում էր նա, որ լռենք ու անհանգիստ չանենք։

— Ի՞նչի, մենք չէինք կարող ուտել...պատասխանում էինք մենք։

— Կարող էիք, բայց որ Թաժա հաց ուտէք՝ չէք կարող փող գտնել։

— Փո՞ղ...զարմացած բացականչում էինք մենք.—տատի, ինց Թէ փող։

— Հա, փող, փող, Աստծու դրած օրէնք է. երեխաները որ բորբոսնած հաց ուտեն, կալումն ու բակումը ման գան, անպատճառ փող կը գտնեն։ Բալէք չան, էդ պատճառով՝ բորբոսնած հացը ձեզ համար եմ պահել, որ ուտէք, ուտէք և փող գտնէք։

— Չան, չան, տատի չան, բորբոսնած հացը ինձ տու, ինձ,—միմեանցից առաջ էինք ընկնում մենք և ուզում էինք շատ ուտել, որպէսզի շատ փող գտնենք։

Առնում, ուտում էինք... Աստած ուտել համարէը... եթէ տատը մեզ չէը խղճացել և ամեն մէկիս մի-մի կտոր իւղալի պանիր չէը տալ՝ մենք չէինք կարող էն դառը՝ բորբոսնած հացը բերաններս տանել։

Դառն եմ ասում է...ճաշակողի սիրտը տակն ու վրա էը լինում։

Բայց մենք ուտում էինք, որովհետև պանիր կար մեր ձեռքին, որովհետև փող գտնելու ցանկութիւնը մեր մէջ զօրեղ էր։

Կերանք...կերանք ու վեր կացինք վղէպի մեր կալը, և սկսեցինք ամենայն զգուշութեամբ փնտռել գտնելիք փողերը... Փնտռելիս անդադար կրկնում էինք, տատի սովորեցրած ասելուկը.—

«Քաջքը, քաջքը, դէլի աչքը,
Կորուստս տանս, փայ կտամ քեզ...»

Կրկնում էինք և ուշի-ուշով ամեն մի քունջ ու պուճախ մտնում։

Օրը քիթ ու մռութը վեր էր թողնում, ապշում էր... Հետզհետէ մթնում էր... Նորածին լուսնի կեռը՝ պսպղում էր երկնքում։ Ամենքը բանթող արած՝ տուն էին շտապում հանգստանալու, մենք դեռ աչքներս սևին-ժևին տալով, կորսած էինք ման գալի։ Մէկ էլ լսեցինք։

—Երեխէք, այ երեխէք, եկէք տատը կանչում է։

Տատի անունը լսելուն պէս՝ գնացինք։ Լ՛այս գառնայ նա. իմանալով, որ տատիկ քաղցած կըլինենք՝ մեզ համար ձւաձէղ էր արել։ Մենք վրա թափւեցինք և քիչ էր մնում, թաւի կոթն էլ համբուրէինք։ Կերանք, մի քիչ էլ զրոյց արինք և յետոյ՝ կրակ ու ճրագի հետ անթեղ եղանք հանգչելու։



127. Երախտապարտ եմ...

Ա.

Կառքի ձիանները խրտնեցին ու գլուխներն առած թռան դէպի գաւիվայր փողոցը...

Կառապանը չը կարողացաւ զսպել ձիաներն և ցած ընկաւ կառքի ուժգին ցնցումից։ Մի կողմ շպրտուեց նաև կառքի մէջ նստած պարոնը. բարեբախտաբար երկուսն էլ միայն թեթև խեղումներ ստացան։

Ձիանները ազատ զգալով իրենց, վազում էին կատաղած։

Այդ միջոցին մի օրիորդ, չորս-հինգ տարեկան երեխայի հետ, մի մայթից միւսն էր անցնում։ Օրիորդը կարողացաւ ազատուել, բայց երեխան անշուշտ կը ճխլւէը կատաղած ձիանների և կառքի անիւների տակ, եթէ ներքևից եկող մի երիտասարդ պարոն՝ իսկոյն օգնութեան չը հասնէր։

Նա հասաւ, խտտեց երեխային և յետ էը վազում, որ մօտեցող կատաղած ձիաներից ազատւի. բայց, դժբախտաբար, կառքը վրա հասաւ, շուռ եկաւ և մի կողքով դիպչելով պարոնին՝ մի կողմը շպրտեց նրան երեխայի հետ միասին։

Երեխան ոչ մի վնաս չը ստացաւ, բայց անձնազոհութեան այսպիսի գեղեցիկ օրինակ ցոյց տւող պարոնը ծանր վիրաւորուեց և նրան ուշագնաց տարան հիւանդանոց։

Բ.

Երիտասարդ պարոնը՝ Բազէնեանը, մի երկու օրից յետոյ, աչ ձեռքը փաթաթած, պառկած էր տանը։ Բժիշկն ասել էր, որ մի քանի օր սենեակից չը պէտք է դուրս գայ, կարող է ձեռքը մրսեցնել և աւելի վնասել։

— Ո՞վ է,—կանչեց Բազէնեանը։

— Կարելի է մանել,—լսւեց դրսից։

— Լևոն, խնդրեմ մի տես ո՞վ է,—ասաւ նա իր ընկերոջը, որ եկել էր իրեն տեսութեան։

Լևոնը դեռ դռանը չը հասած, դուռը բացւեց և երևաց Մարութեանի

ալեխառն գլուխը։ Մարութեանը փորձանքից ազատած երեխայի հայրն էր։

— Լևոն,—բացականչեց Մարութեանը և շտապով ներս մտաւ,— այստեղ ինչ էք շինում։ Այստեղ չէ ապրում Բազէնեանը։

— Ահա Բազէնեանը,—ցոյց տւեց Լևոնը զարմանալով։

Մարութեանն արագ զարձաւ դէպի Բազէնեանի մահճակալը.—

— Ա՛հ, պարոն Բազէնեան... Դուք այստեղ էք պառկած։ Ես մէկ էլ գնացի հիւանդանոց, ասացին, որ դուրս է եկել։ Կարծեցի թէ բոլորովին առողջացել էք և շատ ուրախացայ, մինչդեռ եկել այստեղ էք պառկել։ Ինչպէս էք, մի՞թէ հիմա լաւ չէք։

— Փառք Աստծոյ, հիմա բաւականին լաւ եմ։

— Խեր Աստծոյ, շուտով առողջացեք, թէ չէ՝ այդ բանի նման չէ։ Պարոն Շահեանն, զարձաւ նա Լևոնին,—դուք այստեղ ինչ էք շինում։

— Ընկերս է, եկել եմ տեսութեան,—պատասխանեց Շահեանը։

— Հապա, մի՞թէ... դուք այսպիսի պատւական ընկեր էք ունեցել և ես չէ գիտէի...յետոյ մառնացոյց անելով Բազէնեանին, ասաւ Շահեանին.

— Դուք գիտէք, որ պարոն Բազէնեանն է իմ երեխային փրկել։

— Ճի՛շտ էք ասում...զարմացաւ Շահեանը։

— Բան ինչ ունեմ ես այստեղ։ Չէ որ երախտապարտ եմ, անչափ երախտապարտ... Պարոն Բազէնեան, զարձեալ և բիւր անգամ շնորհակալ եմ ձեզնից։ Ծաւում եմ, որ այդ գնով էք որդուս կեանքը փրկել,—ասաւ Մարութեանն և ամուր սեղմեց Բազէնեանի ձախ ձեռքը։

Բազէնեանը ժպտաց և ասաւ, որ չարժէ շնորհակալ լինել, որովհետև իւրաքանչիւր մարդու պարտքն է վտանգի դէպքում օգնութեան հասնել ուրիշներին, մանաւանդ երեխաներին։

— Պարոն Բազէնեան, եկել եմ, որ նախ՝ պեղեկանամ ձեր թանկագին առողջութեան մասին և յետոյ՝ խնդրեմ, որ շնորհ բերէք մեր տունն։ Մերոնք այնպէս ցանկանում են ծանօթանալ ձեզ հետ...

— Ուրախութեամբ կը գամ, երբ առողջանամ,—ասաւ Բազէնեանը։

Իր անկեղծ երախտապարտութիւնը մի վերջին անգամ էլ յայտնելով Մարութեանը, երկրորդ, երրորդ անգամ էլ խնդրեց, որ Բազէնեանն իր ընկեր Լևոնի հետ շնորհ բերէն իրենց տունն։

Խնդրեց ու գնաց։

Ջոպել—գիմադրել, չեռ պահել։
խեղումները—ջարդուածքները։
ալեխառն—սպիտակախառն։
երախտապարտութիւն — լաւութեան հատուցում։
շնորհ բերել – գալ։

128. Հատուկան անուններ

Ոչխարների հօտ, խոյերի երամակ, այծերի հոտան, եզների ամբոխ, ձիերի գոկ, գայլերի ու գիների փոխմակ։ Թռչունների պար կամ երամ, ագռաւների գոլիր, կռունկների պարմ։ Գիների վրպուռ։ Առիւծների հոյլ։ Ձաղիկների բոյլ, խոյերի դէպ, յարդի և կրակի գեղգ։

---

129. Ա՚ձկոչ հիւրը

Գարնանային մի գեղեցիկ երեկոյ կովերը կթել, դոյծներս վերջացրել էինք ու մի խումբ տաւարածներ հաւաքուած Պօղոս ապօր շուրջը դէսից, դէնից խօսում էինք։

— Պօղոս, բա ինչ ես սուս արել, շուտ ինչո՞ւ չես հանում,—ասաւ Սօնա պառաւը։

— Լաւ ես ասում, այ պառաւ,—համաձայնեց նա ու դառնալով մեզ,—ասաւ.

— Տղերք, Մելիքին կանչեցէք, թող գայ ծոր անի։

Մեզնից մէկը վազեց Մելիքին կանչելու։

Մինչև Մելիքի գալը՝ Պօղոս ապէրը վեր կացաւ, մաւ վրանը, դուրս բերեց նշխած դովղը, նրա միջից ծանր ու բարակ հանեց նոյնպէս նշխած ու իւղած շլին. մաքրեց, մէջը մի քանի անգամ փչեց ու նստելով իր տեղը, մեղմ ձայնով կկլացրեց իր սիրած «սահարին»։

Շուտով եկաւ և դամքաշ Մելիքը, նստեց Պօղոս ապօր կողքին ու սկսեց դամ պահել։

— Պօղոս, հին դարդերդ միշտ ես գցել, բայց աչքր տղերքը սպասում են է, պարի եղանակ ածա, թող պարեն,—ասաւ Սօնա պառաւը։

Պօղոս ապէրը լսեց նրան. սկսեց նւագել տեղական պարերը։ «Կենդապարին» հետևեց խմբական «Զոփին» և ապա «Զամբարին»։

Պարի ամենաթունդ ժամանակը, յանկարծ շները սաստիկ հոլոցով վազեցին դէպի Աղբրի-ձորը։

Ամեն ինչ ընդհատուեց։

— Տղէրք, հասէք, գէլ է կամ գող,—աղաղակեց Պօղոս ապէրը, վեր թռաւ տեղից, մաաւ վրանը, հրացանը պարզեց սիւնի վրայից և վազեց դէպի ձորակը։

Մեզնից ամեն մէկն էլ, ով ինչով կարողացաւ՝ կացնով, հրացանով, դաշոյնով, դագանակով վազեց ու հետևեց Պօղոս ապօրը։ Երբ բաւականին մօտեցել էինք ձորակին, Պօղոս ապէրը կանգնեց, ձեռքի նշանով մեզ էլ կանգնեցրեց և գլխին հաւաքելով յորդորեց.

— Տղէրք ջան, ապա ձեզ տեսնեմ, դոշաղ կացէք, հենց նշան տամ թէ չէ, վրա տուէք։

Մենք մի քանի խմբի բաժանուած, շրջապատեցինք ձորակը։ Շները մի թափի մօտ հաւաքուած՝ իրենց հաջոցով ականջ էին խլացնում։ Մեր դիրքերում անհամբեր, սրտատրոփ սպասում էինք Պօղոս ապօր հրամանին։ Շուտով լսեց նրա ձայնը. նա մէկ ծիծաղում, մէկ աղաղակում էր բարձրաձայն.—

— Տղէրք, եկէք, ոչ[illegible] չը կայ, եկէք։

Երբ վերադարձանք, Պօղոս ապէրն արդէն ձորակումն էր. գնացինք մօտը. նրա առաջ, թափի մօտ, կծկուած էր մի ոզնի։

— Տեսաք, աղէրք, էս անտէրը մեզ ինչքան վախեցրեց,—ասաւ նա.—բա Աստուած կը վերցնի, սա իրեն փոքր տեղովը, շներին չոկ, մեզ չոկ, էապէս չարչարի։ Ով գիտէ, եկել է չորթման գողանալու, բայց շները չեն թողել։

Երբ խօսքը վերջացրեց, մեզնից երկուսին պատւիրեց ոզնուն հետանցնենք, որ շները հոտ չառնեն ու նորից չը հաջեն։

Ինքն էլ մեզ հետ վերադարձաւ տուն. սակայն պարերն այլևս չը շարունակեցին, ուշ էր, ցրուեցինք դիշերւայ հանգիստը վայելելու։

Հետևեալ օրը պարզուեց, որ ոզնին Սօնա պառաւի թանի տոպրակը ծակել ու բաւականին թան էր փչացրել։

Ղոմղ—արնդի պատեան։	*դիրը*—որոշած տեղ, կայան։
դամ քաշել—ձայնակցել։	*սրտատրոփ*—սրտի բաբախումով։

130. Ծաղիկներ

Շատ ու շատ տարիներ մեզանից առաջ, աստղերը լուսնի և արևի հետ միասին ապրում էին երկնքի ադամանդէ պալատում։

Ամեն երեկոյ, մթնելուն պէս՝ աստղերը դուրս էին գալիս իրենց պալատից և պտպտում էին։ Մի գիշեր աստղերը ծուլացան ու դուրս չեկան իրենց պալատից, որ զարդարեն երկինքը։

Լուսինը զարմացաւ, որ ոչ մի աստղ չը կայ երկնքի երեսին։ Մըտաւ պալատն ու կանչեց.

— Երեխէք, ինչո՞ւ էք ինձ մենակ թողել էս ընդարձակ երկնքի երեսին. ինչո՞ւ չէք դուրս եկել։

— Մենք չենք ուզում էս օր դուրս գալ, յոգնել ենք,—պատասխանեցին աստղերը։

Լուսինը տեսաւ, որ աստղերը հակառակում են. բարկացաւ ու ասաւ.

— Քանի որ դուք չէք ուզում ձեր պարտքը կատարել, դուրս եկէք պալատից ու թափուեցէք ներքև։

Աստղերը մէկիկ-մէկիկ թափուեցին ներքև, ընկան երկրի վրա։ Խեղճերը ներքևում վախից լալիս էին.

—Վայ, մենակ ենք, ախ ինչ կը լինի մեր վերջը։—Լաց եղան, արցունք թափեցին, մէկ էլ թմրեցին ու քնեցին։

Առաւօտը կանուխ վայլեց պայծառ արևը, զարթեցրեց բոլոր քընած ծաղիկներին, զարթեցրեց և ընկած աստղերին։ Աստղերը տեսան, որ իրենց պալատումը չեն՝ նորից լաց եղան։

— Երկնքի աստղեր,—ասաւ արևը,—դուք էստեղ ինչ էք անում...

— Մենք մի անգամ ծուլացանք, դուրս չեկանք լոյս տալու, լուսինը բարկացաւ ու մեզ էապէս պատժեց։ Մնդրում ենք մեզ խղճաս, մեզ նորից երկինք տանես։

— Ոչ, էլ չէք կարող դուք երկինք գնալ։ Որ այդքան շատ լաց էք լինում՝ ես ձեզ երկնակամարի փոխարէն երկրի կուրծքը կը տանեմ. գնացէք, ծաղիկներ դարձէք և զարդարեցէք նրան։ Ձեր փայլի փոխանակ՝ ես ձեզ անուշ բոյր կը տամ։

Ասաւ արևն ու էնպէս քնքոյշ ժպտաց, որ աստղերը մխիթարուեցին և ծաղիկներ դարձան։ Այնուհետև նրանք դիշերները իրենց ամօթից գլուխները կախ էին գցում, որ չը տեսնեն լուսնի երեսը. իսկ առաւօտները՝ արևի առաջին շողերի հետ զարթնում էին, նայում վերև ու ժպտում էին արևի դէմ։

---

131. Ախեկիկ էր...

Ես նոր էի դասդդ դառել...
Անկնում էի խիր ու կանաչ անպատով
իրպանն ուսիս:
Յանկարծ ատղաբթաիկ թրեների ցակից ե-
լաւ գւարթաւես մի եղնիկ և...
Ես ապանեցի նրան:
Բայց չը գիրեմ,- թերևները
թղունները ձլացին, թէ սիրտս մրմնզաց.
— Ինչու ապանեցիր... Չէ որ նա ախեկիկ էր...

---

132. Էն ժամանակը

Ժամանակն էն ժամանակն էր,
առնէտը լարախաղն էր,
ծաղրածուն աքաղաղն էր,
Ալան կատուն պարբաշին.
Ձիուքը բռնած ալ փուշին,
պարն էր քաշում մկների,
հնց էր թռչում վերվերի.
Խաթուն մկան հարսնիքն էր...
Ժամանակն էն ժամանակն էր...

Ժամանակով կար մի ղող, վիզը-միզը հարիւր գազ, ոլոքները հասած վերան, հինգ-վեց գեղի տեղ վրան, թիկնամէջը մի թէհրան, ամեն աչքը մի մէչդան:

Ղաղին գութան լծեցին: Գութանն առաւ փախ տւաւ, լծկան-մծկան կախ տւաւ, գութնաւորին շաղ տւաւ:

Բայց վերջ բացւեց իր ուսին. տէրն ու գեղը միասին պոպոքի եղ վինալեցին, մարդ չթողին՝ խնդրեցին, տուն չը թողին՝ ներս մտան, իսկի պոպոք չը գտան, որ գեղ անեն էն վերջին:

Վերջը՝ տեսան տան շէմքին մի պառաւած ու խուլ կին, ասին,—Նանի, քո-վարձքին, մի պոպոքի տեղ արա, ղաղի ուսին դեղ արա:

Պառաւը թէ՝ ասիմ ձեզ,—աղջիկ էի հըլա ես, հէրս գնաց Շահրստան, Շահ-րստանից՝ Հնդըստան, պոպոք բորից մի դրպան...

Մի քանիսը ես կերայ, համը բերանս է հըլա: Մի փէտ բերէք փորփըրեմ, ատամներս քըչփորեմ, կակլի մանրուկը հանեմ, տարէք-ծեծէք, եղ հանէք, ղազի ուսին դեղ արէք:

Բերին տւին գերանը, ծայրը տաբաւ բերանը, լընդերքնիրը փորփրեց, ա-տամ չունէր քըչփորեց, հանեց մանրուկը կակլի, տւեց, առան գնացին, սղկեցին եղ հանեցին, ղազի ուսին ցանեցին:

Եղը վերջին, որ հասաւ, ուսից կակլի ծառ բուսաւ. ով որ հասաւ՝ քարոտեց, ով որ տեսաւ՝ հող նետեց... Ղազի մէջքը օրէցօր մի դաշտ դարձաւ փառաւոր, վրէն հովիտ սար ու ձոր, արօտ, ծմակ, ծառուտներ, ձէնը հասաւ Հնդըստան:

Տէրը ցանեց մի բոստան... էլ ձմերուկ, վարունգ, սեխ, լոբի, բակլա, ճա-կընդեղ, էլ բողկ, համեմ ու դաղար, կարմիր-կարմիր լալագար, մինը դառաւ մի հաղար...

Ժամանակն էն ժամանակն էր...

Ձմերուկը որ հասաւ, «կարեմ մինը» նա ասաւ, դանակն առաւ ու սրեց, ձմերուկի մէջ խրեց, կոթն էլ հետը ներս գնաց, էլ դուրս քաշել չը կարաց:

Վերջը հանեց շորերը, մտաւ ձմերկի փորը ու մեն եկաւ դանակին: Փորը փոր չէը, անյատակ, ոչ տուտ ունէը, և ոչ տակ:

Մին էլ ճամբի հէնց կլսին, մահակն առած իր ուսին, առաջն ելաւ մի չոբան, կարեց նրա ճար-ճամբան .. կարեց, ասաւ.— անպիտան, դուռ ես դողը իմ թամամ:

Մեռայ ես շատ մեն գալով, կորած հօտս փնտռելով...ասաւ ու թը՛մի...մեկ կո-ղին, տուր թէ կրտսա էգ գողին... ու նա սրան, սա նրան, մէջ տեղ գնաց քիթ, բերան:

Ձմերուկը ժամ ընկաւ, յանկարծ մէկ էլ դըմփալէն, որ ղազիցը վեր չէն-կաւ, մի նազատատակ, խըրատակ, ձմերուկից դուրս թռաւ...

Ժամանակը էն ժամանակն էր...

Ինչ բոստանչուս կնիկն էր՝ ուժը-մուժը թափ արաւ, նստած տեղից հոպ ա-րաւ, ձեռքի մանգաղը նա ուժգին, որ չը նետեց շղթկին, կոթը ցցւեց չոր կողը...

Բռնած մահուան սև դողը, էն վերունի անտէրը, փախաւ ընկաւ արտերը, քաղեց ցօրենն ու գարին, բան չը թողեց դաշտերին:

Գեղ-գեղովի թափ եղան, բերին փոցխեր ու եղան. հունձը ղազով կրեցին. կալերն ածին կասեցին, գարի ցորեն հանեցին, հարս ու աղջիկ մաքեցին:

Բերին ղազին բարձեցին, տարան չաղաց աղացին: Թունբունները վառեցին... Թաժա հացը թխեցին, տաշտերն ածին, դարսեցին, կերան, կերան մարսեցին...

Ժամանակն էն ժամանակն էր,
առնէտը լարախաղն էր,
ծաղրածուն աքաղաղն էր,
Ալան կատուն պարբաշին.
Ձիուքը բռնած ալ փուշին,
պարն էր քաշում մկների,
հնց էր թռչում վերվերի.
Խաթուն մկան հարսնիքն էր...
Ժամանակն էն ժամանակն էր...

ՎԵՐՋ

IZKUR-ARM.COM

ՑԱՆԿ

I. ՄԱՆԿՈՒԹԻՒՆ

(Ընտանիք, դպրոց, ախտաւանիք, գիւղ, հաղաք, բնութիւն, կենդանական ախտարն)

Գլուխ		Երես
1.	*Մեր դպրոցը (ոտ.)	3
2.	Դպրոցը... Ըստ Սերոբի	4
3.	Մարտի սկիզբը... Պ. Պոշեանի	5
4.	Վէր կաց (ոտ.) Արշալոյսի	»
5.	Աբագիլ (ոտ.) Յ. Կոստանեանի	6
6.	Ծաղիկն ու շողերը, Ա. Կոճինեանի.	6
7.	Գարնան գալը, Պ. Պոշեանի	7
8.	*Գարուն (ոտ.)	8
9.	*Դէպի վեր	»
11.	Փխրիկը, ըստ Գ. ք. Մկրտուեանի	10
12.	Եղբօր համար, ըստ Թարգ. «Նէէր Մանուկ.»	11
13.	*Լուսադէմ (ոտ.)	12
15.	*Գութան (ոտ.)	14
17.	*Ընկոյզն ու որդը	16
19.	Աւազակը, ըստ Սովասիլևայի	18
20.	*Ծաղկանց ծովը (ոտ)	19
22.	Դէպի աստղերը. (հէք.) ըստ Վարդ. քահ.	21
23.	Վայրի ծաղիկը (ոտ.) ըստ Լ. Մանուէլեանի	22
24.	Անձրևային ճիճուն, ըստ Մարգարիտի	23
25.	Ղուլին, Զուլին ու Սինոն, Սիմակի	24
26.	Գարնան երգ, (ոտ.) Հ. Մազմանեանի	25
28.	*Փախստականները	27
29.	Ելդաշ պապի մօտ. Ստ. Տէր-Աւետիքեանի	28
31.	*Զարթիր (ոտ.)	31
32.	Փոքրիկ ապատարերը, ըստ. Վարդ. Լիսիցեանի	»
33.	Պատանին ու վտակը (ոտ.), ըստ Գ. Բարխուդարեանի	33
34.	Աքաքս (ոտ.)	»
35.	*Հայրենիք	34
36.	Հայրենիքին (ոտ.) ըստ Զիւանի	»
37.	Ամառ, ըստ. Պ. Պոշեանի	35
38.	*Գետը հոսում, (ոտ.)	36
39.	*Ահա թէ ինչու	»
42.	Գաղպարեանի շարադրութիւնը Թարգ. Սիմակի	39
45.	*Աւաւօա (ոտ.)	43
46.	*Գիտիկը	»
47.	Սոխակի երգը (ոտ.) Գ. Ասատ.	44
48.	*Սրամիտ Գուրգէնը	45
49.	Լալկան ուռին, (ոտ.) Ա. Իսահակեանի	46
51.	Պատանի Մուրացկանը, ըստ Պէկո-ի	47
52.	Աբեգը մութ աշխարհում, Յով. Թումանեանի	49
53.	Արևոտ բնակարան	52
54.	Զար խօսքը, Ա. Ահարոնեանի	53
56.	Գիրի աբծիւը, ըստ Վ. Փափազեանի	55
58.	*Փշի գերեզմանը	57
60.	*Նա փոխուել էր	59
61.	*Իրիկուն (ոտ. ժողովրդ.)	60
62.	Ունանը զղջաց, ըստ Թարգ. Մ. Ա.-ի	61
63.	Երճիճում (ոտ.), Յով. Թումանեանի	62
65.	Մօր օգնականները, ըստ Վ. Լիսիցեանի	63
66.	Զափարծիտը թագաւորը, ըստ Ա. Պ.-ի	65
67.	*Տանը	68
70.	*Դիզձանիկն ու տատրակիկը (առակ)	71
72.	*Զալօի էշը	72
74.	*Վատ ընկերը	76
76.	*Առաջին դասին	78
77.	*Ապրի արևը	79
78.	Կաքաւիկ (ոտ.) Յով. Թումանեանի	80
79.	*Մեր սիրելիները	81
80.	Հնձաւորները (ոտ.) Դ. Աղայեանի	82
81.	Հօտի վերադարձը, ըստ Պ. Պոշեանի	83
82.	Անբախտ վաճառականները, Յով. Թումանեանի	84
84.	*Երիտասարդ քարտաշը	89
85.	*Ճանճ—(առակ)	»
86.	Խոտունձ, II. գլուխը՝ Ստ. Տէր-Աւետիք—	90
87.	Տաւարածի հաշը (ոտ.) Դ. Աղայեանի	92
88.	*Հնձաւորի քունը (ոտ.)	»
90.	Շրւանի մահը, Սիմակի	94
91.	Ագռաւն ու աղուէսը,—(առակ)	95
92.	Գայլի խոստովանանքը, ըստ Բալ. Մարգարի	96
93.	*Գայլն ու կատուն (առակ)	96
95.	*Մայր-հողի գանգատը	97
96.	Դէպի Մայր-հողը (ոտ.) ըստ Յ. Յակովբեանի	98
99.	*Հունձ	101
100.	*Հնձին (ոտ. ժողովրդ.)	102
102.	*Կալի երգ (ոտ. ժողովրդ.)	104
103.	Աշուն, Պ. Պոշեանի	105
105.	*Հոր՝ վէլ հօ՞, (ոտ. ժողովրդ.)	107
106.	Բակի շունը, Ա.ւ. Իսահակ.	»
107.	Տերևներ (ոտ.)	108
108.	Գնացող-ինացողներ, Պ. Պոշեան	109
109.	*Կայէք թռչուններ (ոտ.)	»
111.	Բանտի պատուհանին, ըստ Անդերս.	111
112.	Արտուտի երգը, (ոտ.) Յով. Թումանեանի	112
114.	Այգեպան Սիմոնը	114
115.	Հօրս արցունքները, ըստ Ստ. Լիսիցեանի	115
116.	Ծեր Դեմեզը (ոտ.) Յով. Թումանեանի	117
118.	*Փորի գիշ—(առակ)	118
119.	Պաչն ու Թռունները, Ն. Տէր-Աւետիքեան	119
123.	*Մայրը (ոտ.)	122
124.	*Ձմեռ	123
125.	*Պապս	124
126.	*Տատս	125
127.	Երախտապարտ եմ, ըստ Նար-Դոսի	127
129*	*Անկոչ հիւր	129
130.	*Ծաղիկներ (աւանդ.)	131
132.	*Իմ ժամանակը (հէքիաթ)	132

II. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

(Ուսում, կրթութիւն, աւիւեաս, գիւղ, հաղաք, հայրենիք, բնութիւն, կենդ. ախ.)

Գլուխ		Երես
33.	Պատանին ու վտակը (ոտ.), ըստ Գ. Բարխուդարեանի	33
34.	Աքաքս (ոտ.)	»
35.	*Հայրենիք	34
36.	Հայրենիքին (ոտ.) ըստ Զիւանի	»
37.	Ամառ, ըստ. Պ. Պոշեանի	35
38.	*Գետը հոսում, (ոտ.)	36
39.	*Ահա թէ ինչու	»
42.	Գաղպարեանի շարադրութիւնը Թարգ. Սիմակի	39
45.	*Աւաւօա (ոտ.)	43
46.	*Գիտիկը	»
47.	Սոխակի երգը (ոտ.) Գ. Ասատ.	44
48.	*Սրամիտ Գուրգէնը	45
49.	Լալկան ուռին, (ոտ.) Ա.ւ. Իսահակեանի	46
51.	Պատանի Մուրացկանը, ըստ Պէկո-ի	47
52.	Աբեգը մութ աշխարհում, Յով. Թումանեանի	49
53.	Արևոտ բնակարան	52
54.	Զար խօսքը, Ա. Ահարոնեանի	53
56.	Գիրի աբծիւը, ըստ Վ. Փափազեանի	55
58.	*Փշի գերեզմանը	57
60.	*Նա փոխուել էր	59
61.	*Իրիկուն (ոտ. ժողովրդ.)	60
62.	Ունանը զղջաց, ըստ Թարգ. Մ. Ա.-ի	61
63.	Երճիճում (ոտ.), Յով. Թումանեանի	62
65.	Մօր օգնականները, ըստ Վ. Լիսիցեանի	63
66.	Զափարծիտը թագաւորը, ըստ Ա. Պ.-ի	65
67.	*Տանը	68
70.	*Դիզձանիկն ու տատրակիկը (առակ)	71
72.	*Զալօի էշը	72
74.	*Վատ ընկերը	76
76.	*Առաջին դասին	78
77.	*Ապրի արևը	79
78.	Կաքաւիկ (ոտ.) Յով. Թումանեանի	80

III. ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆ

(Գործ, ախտաւանիք, աւիւեաս, գիւղ, հաղաք, բնական կեանք)

Գլուխ		Երես
79.	*Մեր սիրելիները	81
80.	Հնձաւորները (ոտ.) Դ. Աղայեանի	82
81.	Հօտի վերադարձը, ըստ Պ. Պոշեանի	83
82.	Անբախտ վաճառականները, Յով. Թումանեանի	84
84.	*Երիտասարդ քարտաշը	89
85.	*Ճանճ—(առակ)	»
86.	Խոտունձ, II. գլուխը՝ Ստ. Տէր-Աւետիք—	90
87.	Տաւարածի հաշը (ոտ.) Դ. Աղայեանի	92
88.	*Հնձաւորի քունը (ոտ.)	»
90.	Շրւանի մահը, Սիմակի	94
91.	Ագռաւն ու աղուէսը,—(առակ)	95
92.	Գայլի խոստովանանքը, ըստ Բալ. Մարգարի	96
93.	*Գայլն ու կատուն (առակ)	96
95.	*Մայր-հողի գանգատը	97
96.	Դէպի Մայր-հողը (ոտ.) ըստ Յ. Յակովբեանի	98
99.	*Հունձ	101
100.	*Հնձին (ոտ. ժողովրդ.)	102
102.	*Կալի երգ (ոտ. ժողովրդ.)	104
103.	Աշուն, Պ. Պոշեանի	105
105.	*Հոր՝ վէլ հօ՞, (ոտ. ժողովրդ.)	107
106.	Բակի շունը, Ա.ւ. Իսահակ.	»
107.	Տերևներ (ոտ.)	108
108.	Գնացող-ինացողներ, Պ. Պոշեան	109
109.	*Կայէք թռչուններ (ոտ.)	»
111.	Բանտի պատուհանին, ըստ Անդերս.	111
112.	Արտուտի երգը, (ոտ.) Յով. Թումանեանի	112

IV. ԹԵՐՈՒԹԻՒՆ

(Սեր, գլուխ, ախտաւանիքի պատուդ, կեանքի հաղորդութիւն, բնութիւն, գիւղ, հաղաք)

Գլուխ		Երես
114.	Այգեպան Սիմոնը	114
115.	Հօրս արցունքները, ըստ Ստ. Լիսիցեանի	115
116.	Ծեր Դեմեզը (ոտ.) Յով. Թումանեանի	117
118.	*Փորի գիշ—(առակ)	118
119.	Պաչն ու Թռունները, Ն. Տէր-Աւետիքեան	119
123.	*Մայրը (ոտ.)	122
124.	*Ձմեռ	123
125.	*Պապս	124
126.	*Տատս	125
127.	Երախտապարտ եմ, ըստ Նար-Դոսի	127
129*	*Անկոչ հիւր	129
130.	*Ծաղիկներ (աւանդ.)	131
132.	*Իմ ժամանակը (հէքիաթ)	132

Ծանօթ.—Աստղանիշ յօդուածները ու ոտանաւորները խմբագրել, փոխադրել և կամ գրել են գիրք կազմողները։

V. ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐ ՕՐԻՆԱԿՆԵՐ

Դրաւոր վարժութիւններով

Դլուխ		Երես
10.	*Գուրգէնը (անկատար, ապառնի և հրամ. եղանակ)	9
16.	*Հանելուկ—(«եղէն»—ածանց)	15
21.	*Անհոտ ծաղիկը («աւէտ» ածանց.)	20
27.	*Ամառանոցի կաչաղակը,—(«ելէն»—վերջաւոր.)	26
30.	*Հայրենակիցներին,—(«է»-ն փոխւում է «ի»-ի)	30
40.	*Ողնու ոսկր. («ո»-ի գործածութիւնը)	37
44.	*Օրը բացւեց—(«օ»-ն բառամէջ)	42
50.	*Գեաղը,—(„օ“-ն բառի սկիզբը)	47
55.	Գայլի յուշերը—(«յ»-ին բառի սկզբում)	54
59.	Հին Արաքսը—(„յ“-ին բառամէջ և վերջը)	58
64.	*Մեր դասը,—(դերանուններ և հրամ. եղանակ	63
68.	Հովիւ («աւոր» և «որդ»վերջ.)	69
75.	*Ծովամայրը—(«է»-բառամէջ)	77
83.	Աղբիւրը—(„ռ“-ի գործածութ.)	88
89.	*Սրտի ուզածը, („վ“-ն բառի սկզբից)	97
94.	Գարնան շնչով. («վ»-ն բառի վերջից)	97
98.	*Թիֆլիսի ծովավաճառը, («վ» բարդ բառի մէջ)	100
104.	*Անձրևը—(«ւ»-ը «ե» և «ի» ձայնաւորից յետոյ)	106
117.	*Աղ ու հաց. («ւ»-ը «ա» ձայն. յետոյ)	118
121.	*Այգի,—(դիմորոշ յօղերը՝ ս, պ, ն, (ը)—)	121
128.	Հաւաքական անուններ (հպակի և յոգնակի)	129
131.	Գեղեցիկ էր—(կրկնութիւն.)	132

VI. ՓՈԽԱԴՐՈՒԹԵԱՆ եւ ՉԱՐԱԴՐՈՒԹԵԱՆ

մօտակած ցիւրեր

14.	*Ագռաւների մշակը (փոխադ.)	13
18.	*Անտոդ տղան (շարադ.)	17
41.	*Արծիւը—(փոխադր.) . . .	38
43.	*Ջամիչ (շարադ.)	41
57.	*Գետակն ու ուռիները—(փոխադրութիւն)	56
71.	*Ջրի տրտունջը, (փոխադր.)	72
73.	*Թշնամիները. (շարադրթ.)	75
97.	Ճնճղուկը—Ա. Ահարոնեան (փոխադր.)	99
101.	Կալին (փոխադրութիւն) Պ. Պռօշեանի	103
110.	*Հիւանդասրահ մայրը (շարադրութիւն)	110
113.	*Ծերունիների վէճը. (փոխ.)	113
120.	*Սկիւռը. (փոխադրութիւն)	120

Ծանօթ.— Ներսիսեան դպրոցում, 1915—16 ուս. թւին տեղի ունեցած Թիֆ. ծխ. դպրոցների հայոց լեզու ուսանդող ուսուցիչ-ուսուցչուհիների ժողովներում ընդունած դասագրքերին վերաբերող որոշումների համեմատ՝ աշխատել ենք բարեփոխել գրքի ներկայ ազագրութիւնը և մի-ջի այլոց և՝ հեռանալ կերպով.— **նախ**՝ այս ազագրութիւնից հանել ենք կարճ և բովանդակութեամբ շատ թեթև յօդւածները և փոխարէնը տեղ ենք տւել աւելի երկար, բովանդակութեամբ աւելի բարդ յօդւածների՝ Ձափարածիլը թագաւոր, Գայլն ու կատուն, Դէպի Մայր-հողը, Գալս, Տատս հայն... **Երկրորդ**՝ բարեփոխել ենք քաղաքի կեանքին վերաբերող մեր գրքի մէջ եղած յօդւածները ու աւելացրել ենք նորերը՝ Փոքրիկ ազատարարը, Մօր օգնականները, Բանտի պատուհանին և այլն... և **Երրորդ**՝ ուժեղացնելով յօդւածների մէկ-մէկու հետ ունեցած ներքին կապն ու շարահիւսութիւնը՝ հարստացրել են անծանօթ բառերի աշխարհիկ բառարանը։

ԿԱԶՄՈՂՆԵՐ

4-30

Նիւրած է Հայոց գրերի գիւտի 1500-ամեակի եւ տպագրութեան 400-ամեակի տարեդարձին

Մի խումբ ուսուցիչների կազմած դասագրքերից բարեփոխած տպագրութեամբ լոյս են տեսել

I

ՄԵՐ ԴՊՐՈՑԸ, *Հայոց լեզւի Ա. տարւայ նոր դասագիրք պատկերազարդ ընթերցարան, արտագրութեան ձեռագիր օրինակներով* 30 *կ.*
(Պահեստը «ՆՈՐ ԿԵԱՆՔ» գրավաճառանոցում.)

II

ՄԵՐ ԴՊՐՈՑԸ, *Հայոց լեզւի Բ. տարւայ նոր դասագիրք, պատկերազարդ ընթերցարան, ուղղագրական ձեռագիր օրինակներով և իրազննական պատկերներով . . . . . 45 կ.*

III

ՄԵՐ ԴՊՐՈՑԸ, *Հայոց լեզւի Գ. տարւայ նոր դասագիրք, ուղղագրական ձեռագիր օրինակներ, շարադրութեան պատկերներ, փոխադրութեան նիւթեր և բառարան, (Հրատարակել է ուսուցիչների մի նոր խմբակցութիւն) . . . . . 60 կ.*

ԴԱՍԱԳԻՐՔ ՀԱՅՐԵՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ, *Գ. տարի, ծննդավայր, մերձաւոր բնագաւառ և կովկաս . . . . . 35 կ.*
(Պահեստը. «ԳԻՐ» գրավաճառանոցում.)

Գ Ի Ն Ն Է 60 Կ Ո Պ.

ՀԵՏԶՀԵՏԷ ԼՈՑՍ ԿԸ ՏԵՍՆԵՆ

1) ***«ՄԵՐ ԴՊՐՈՑԻ»*** *չորրորդ տարին*
(Գրքի ամբողջ նիւթը նորութիւն է, բազմաթիւ նկարներով, ուղղագրական ձեռագիր օրինակներով, շարադրական մշակած նիւթերով, ճոխ բառարանով և հայ գրողների նկարներով ու կենսագրականներով)
2) *Հայրենագիտութիւն՝ «Գ» տարւայ պատմական մասը.*
3) *ԳԵՂԱԳԻՐ ուղղագրութեան ձեռագիր պատկերազարդ օրինակներ, երկու մասով.*
4) *Հայրենագիտութեան դասագիրք, Գ. տ. Երեանի նահանգի, և*
5) *Հայրենագիտութեան դասագիրք, Գ. տ. Գանձակի նահանգի*

2013
4051

ML005987279
<< Цифровая библиотека

4-302a